1897

ԹԻՒ Դ· ԱՊՐԻԼ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՅԱՌԱՋ

ՏՊԱՐԱՆ Մ· ԱԹՈՌՈՅ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՐԱՏ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՌՅԽԵ· Լ· ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ՁՈՐՐՈՐԴ | ԱՊՐԻԼ 1897 Թ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅԱՐՈՒՅՑԱԿԱՆ ՅԱՐՈՒՅՑԸ·

«Արի՛, Տէր, եւ մի՛ զօրասցի մարդ»·
Սաղմ· Թ· 10·

Երբ առաջին մարդը բաց արաւ աչքերը և առաջին անգամ լի կրծքով խոր շունչ քաշեց, երբ դպաց նա իւր երակներում հոսող կեանքի աւիւնը և իւր բոլոր կուսական զգայարանների միախառն գործունէութեամբ ամբողջ մի աշխարհը բազմազան հրաշալիքներով բացուած տեսաւ իւր առաջ՝ նորա ականջին հնչեց Արարչի ձայնը, որ այդ աշխարհը նորան էր պարգեւում· Տիրիր այդ ամենին, ասում էր· իշխի՛ր ծովի ձկներին, երկնքի թռչուններին, երկրի երեսին գտնուած բոլոր անասուններին և սողուններին վերայ: Անթիւ տարիներ ու դարեր են անցել այդ օրից, բայց Ամենակալի անդրանիկ հրամանը անչինչ է ձնացել մարդու սրտում· աշխարհում և իշխելու ցանկութիւնը այսօր ևս Նորա կեանքի գլխաւոր մղիչ զօրութիւնն է, աւելի քան երբէք աչք կարող է համարուել նա այսօր ամբողջ աշխարհի: Ո՛չ ասես չէ հասնում նորա իշխանութիւնը· ոչ գազանի ահեղ ժանիքները, ոչ թռչունի սրաթռիչ թեւերը ազատել կարող են նորա ձեռքից· նա լինում է մինչև ծովի յատակը, վերին եթե-

լի մէջ է բարձրանում. իւր հնարած մեքենաներով նուաճում է բնութեան գաղտնի ուժերը, իւր հանճարեղ մտքով սլանում, հասնում է պայծառ աստղերի յաւերժական կայաններըը և նոցա նստուածքն ու շարժուածքը չափում: Ի՜նչ աւելի մեծ փառք մի արարածի համար, ի՜նչ աւելի վեհ և ոգևորիչ մտածմունք մի մարդու համար, քան իշխանութեան և զօրութեան այս ինքնագիտակցութիւնը:

Եւ սակայն, ինչո՞ւ այնպէս ընտանի է սպանմասերդուի հառաչանքը մեր սրտին, ինչո՞ւ կարծես ամբողջ մարդկութիւնը մի անձն եղած բողոքում է նորա հետ. Մի՛, մի՛ զօրասցի մարդ:—Այդ ծանր բողոքն ստուգաբանիր օրէնքի դէմ չէ անշուշտ. բարի է և զեղեցիկ յիրաւի մարդու զօրութիւնը, երբ արտաքին աշխարհի վերայ է տարածուում անբան բնութիւնը բանական նպատակների ծառայեցնելու համար է գործ դրուում. ո՞վ է այնչափ ապերախտ, որ ուրանայ քաղաքակրթութեան մեծ մեծ բարիքները, որ չգովաբանէ մարդու զօրութիւնն աշխարհի վերայ աւելացնելու համար գործ դրուած ջանքերն ու ձեռք բերուած յաջողութիւնները: Բայց երբ այդ զօրութիւնն ելնում է Նախախնամութեան գծած սահմաններից, երբ իւր տիրական իշխանութեամբ յղփացած մարդը նոյն ինքն աղատ և իշխան մարդուն ենթարկում է իրեն և իւր նպատակների համար գործիք դարձնում՝ այն ժամանակ ահա ալեկոծուում ու խռովում են մեր ներքին ամենասուրբ զգացմունքները, զայրացած բողոքում մարդու զօրութեան դէմ և Ամենակալ Արարչին օգնութեան կանչում: Բնութեան ամենածանր արհաւիրքները լռին դիմանալ, արտաքին աշխարհից եկած ամեն ցաւի դէղ ու դարման գտնել կարելի է. բայց մարդու՝ զօրացած և իւր զօրութեան հնարիւր բարոյապէս կուրացած մարդու ձեռքից Աստուած Ինքը միայն մեղ ազատել կարող է:

Եւ ժամանակ է, որ Նա գայ և ազատարարէն չափից դուրս մեծացել է մարդու զօրութիւնը, անտանելի դարձել նորա բռնակալ իշխանութիւնը: Զօրել է քաղաքագէտ մարդը ընդհանուր մարդկութեան բաղդը վճռող, ազգեր ու պետութիւններ կառավարող աշխարհի մեծամեծ կեդրոններում: Նա երևելի ծրագիրներ է կազմում նպատակ դնում ու սահմաններ գծում, և ահագին բազմութիւնը կամայ ակամայ պէտք է ենթարկուի նորա դրած չափին. ի՞նչ փոյթ, եթէ դորա համար հազարաւորների զլուխը կտրել, արեան ու արտասուաց հեղեղների վերայից անցնել հարկ կլինի: Զօրեղ է նաև շահագէտ, մեծախոհ մարդը՝ ազգային և հասարակական կեանքի աւելի նեղ շրջաններում, փողոցի ու հրապարակի վերայ. յաղթողը նա է, որ ամենից բարձր է կանչում և միջոցների մէջ խտրութիւն չէ դնում. որ ստում, կեղծում ու շողոքորթում է յանուն գաղափարի, յանուն ազնիւ, ազգասիրական նպատակների, և անպատկառ յանդգնութեամբ ոտքի տակ տալիս ամեն սրբութիւն, ամեն վեհ բարոյական սկզբունք, որպէս զի հաճոյ լինի ամբոխին, շահէ իրենից աւելի զօրեղների սիրտը:—Եւ որ ամենածանրն է՝ զօրեղ է վերջապէս սեփական կրքերի ստրուկ մարդն իմ մէջ, իմ այս կուրծքի տակ. հազիւ թէ մի մտքուր ղգացումն է շարժում այնտեղ, եռանդն և ոգևորութեան մի փոքրիկ կայծ վառուում որ ահա ղլուխ են բարձրացնում կրկին ստոր հակումները և ամեն ինչ խեղդում գեռ սաղմնական վիճակի մէջ. իղձերը իղձեր են ծնում, գաղափարները գաղափարներ, և ձշմարտութեան ու արդարութեան հոգին իմ այս մեղկ բնութիւնը դէպի գործ շարժել ու բարձր, յաւիտենական նպատակների համար արդիւնաւէտ գործել՝ նիւթական մարդուն յաղթահարել և ազնիւ կռուի համար համաձակ ասպարէզ հաներ—անկարող է:

Այսպէս տագնապելով դարձնում եմ հայեացքս դէպի այն գերեզմանը, որի գոգում ծանր քարի տակ փակեցին մի օր զօրեղ մարդկի Կեանքի Առաջնորդին, և փակուած են համարում գեռ մինչև այսօր: Այո՛, զօրեղ էր մարդը նաև այն օրը, երբ արդար վճիռներ էր արձակում ահեղարհամբ Հռոմի դատաւորութեան գահից, ի լսել հանդարտակեալ էր ստիպում Աստուծոյ Ընտրեալի համար Աստուծոյ ընտրած ժողովրդին, մի Պետրոսի բերանն անգամ փակում էր և թոյլ

չէր տալիս, որ ճշմարտութիւնը խոստովանէ։ Բայց ելաւ, կանգնեցաւ Նա, Աստուածոյ անմահ Որդին, որում չէր հնար ըմբռնել ի մահուանէ, ելաւ, եւ յերկանելն Նորա՝ երկիր շարժեցաւ եւ երկինք խռովեցան, եւ ամպք ցօղեցին զջուր. ձայն արձակեաց Հղօրն, և յահեղ ձայնէ Նորա զերազմանք բացան, եւ բազում մարմինք ննջեցելոց սրոց յարեան։

—Ո՛հ, արի, ե՛լ կրկին, Թագաւո՛ր Յիսուս, և համաշխարհային այս մեռելութեան մէջ հնչէ Քո յարուցիչ ձայնը. չարչարանաց փշեայ պսակի նեղքոյ ճնշուած աստուածային դէմքդ մեր մարդկային պղտոր աչքերով ճանաչել չկարողացանք. արի փառաւք և զօրութեամբ, և Քո յաղթական քայլերի առաջ թո՛ղ տերի տայ ամեն ամբարտաւանութիւն, և նենգութիւն, և չարութիւն. Արի՛, Աստուած, եւ դատեա զերկիր—եւ մի՛ զօրացի մարդ։— Հեռու հեռուից ապնիւ զայրոյթի և մաքուր ոգևորութեան ապաղակ է լսուում։ պեռ չէ մեռել մարդու կրծքի տակ ամեն հերոսական զգացում ամեն տենչ դէպի աւելի բարձր, աւելի արժանավայել, աւելի զուարթարական մի կեանք. ձայն տուր, Փրկիչ, և թո՛ղ բացուին մեր գերեզման կրծքերը. կենդանանայ և իշխէ այն, ինչ որ սուրբ է և Քո սուրբ անուանը արժանի. Արի՛, Տէր, եւ փրկեա զիս։

«Յարիցի Աստուած, և ցրուեսցին ամենայն թշնամիք Նորա»։

«Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկինից ընդ արեւելս»։

Կ. Վ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՏՕՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

ԵՒ

ՊԱՍԷՔԻ ՎԻՃԸ.

Վերստաւնութեան ամենահին տօնը կիրակին է։ Յայտնի է, թէ ինչպիսի խստութեամբ սուրբ էին պահում հրեաները շաբաթ օրը. բնականաբար հրեութիւնից դարձած առաջին քրիստոնեաներն այդ ամենանուիրական սովորութիւնը մի անդամից չթողին. ինչպէս Գործք առաքելոց նկարագրում է, նոքա առհասարակ կրկնակի աստուածպաշտութեան կարդեր ունէին. գուբսը, տաճարում և ժողովարաններում միս հրէականների հետ նոքա կատարում էին այն, ինչ որ ազգային սովորութիւն էր. իսկ ներսը ընտանեկան նեղ շրջանում, քարոզով և խօսակցութեամբ, ս. Գրքի ընթերցանութեամբ և երգով վերաբտադրում էին յիշողութեան մէջ այն ճշմարտութիւնները, որ աւանդ էին ստացել Երկնաւոր Վարդապետից, արծարծում այն ակնկալութիւնները, որ Նորա երկրորդ գալստեան համար ունէին։ Այսպիսի ընտանեկան ժողովներ սկզբում երեւի ամենայն օր տեղի էին ունենում, բայց երբ համայնքն ընդարձակուեցաւ, աշխարհի հետ շփուել սկսեց, և հաւատացեալները սաստկացան, ամենօրեայ ժողովները դրեթէ անկարելի պիտի դառնային և կարիք պիտի յառաջ գար մի որոշ օր նշանակել, հանդիսաւոր կերպով միատեղ ժողովուելու, մանաւանդ ս. հաղորդութեան խորհուրդը կատարելու համար, որ միութեան ամենանուիրական տեսանելի կապն էր նոցա և Փրկչի և փոխադարձաբար իրար մէջ։ Այդ օրը նոր ընտրելու հարկ չկար իսկապէս. ս. յարութեան յիշատակով նուիրագործուած միաշաբթին անշուշտ հաւատացեալների աչքում սկզբից և եթ առանձին յարգ ունէր, և զբաղաւոր ժողովները այդ օրն էին լինում. Գործոց առաքեալը պատուիրում է Կորնթացիներին «ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն» կամաւոր նուէրներ ժողովել Երուսաղէմի աղքատ համայնքի համար (Ա. Կորնթ. ԺԶ. 2), և Տրոադայում նա նոյն այդ օրն է* ժողով գումարում հաց ընկանելու (ս. հաղորդութեան խորհուրդը կատարելու) և հաւատացեալներին իւր հրաժեշտի ողջոյնը տալու համար։ Արդէն Յովհաննու Յայտնութեան մէջ (Ա.10) այդ օրը կիրակէ է, անուանած, այսինքն տէրունական, Տիրոջ նուիրուած օր։ Երկրորդ դարի յիշատակարաններից յայտնի է, որ ան-

* Գործք Ի. 7 քնագրի մէջ ասած է „Այլ ի միում շաբաթուց“, որ նշանակում է՝ միաշաբթի օրը։

տեղի էր համարուում կիւրակէ օրը, իբրև ուրախութեան օր, ծոմ պահել կամ ծնկաչոք աղօթել։ Իսկ աշխատանքից հանգստանալը կապ ունի անշուշտ այն հանգամանքի հետ, որ երբ Քրիստոնէութիւնը հրէական նեղ շրջանակից ելաւ և հեթանոս աշխարհի մէջ հաստատուն հիմք դրեց, շաբաթը սուրբ պահելու սովորութիւնն ևս հետզհետէ դադարեց և նորա տեղը բռնեց կիւրակէն. թէպէտ ամենահին յիշատակութիւնները այս մասին կիւրակէ օրը չաշխատելու պահանջը ոչ թէ հին կտակարանի օրէնքով, այլ քրիստոնէական սկզբունքներով են բացատրում։ Առաջին անգամ Կոստանդիանոս Մեծ իւր բոլոր պետութեան համար կիւրակէն իբրև պարտաւորեալ հանգստութեան օր հրատարակեց և նորա վերաբերեալ որոշ օրէնքներ հաստատեց։— Կիւրակէ օրուայ հետ մէկտեղ առանձին նշանակութիւն ստացան հնկմանն կամ պահոց օրերը՝ չորեքշաբթին և ուրբաթը, որի համար օրինակ է եղել կրկին հրէից երկուշաբթի և հինգշաբթի օրերը պահելու սովորութիւնը. եկեղեցական տեսակէտով չորեքշաբթին Քրիստոսի մատնութեան համար կազմուած խորհրդի յիշատակն է, ուրբաթը Քրիստոսի խաչելութեան յիշատակը։

Այսպէս ուրեմն Քրիչական կեանքի վերջին շաբաթը խորհրդաւոր լոյս է սփռում իւրաքանչիւր շաբաթուայ օրերի վերայ, տօնական կերպարանք և նշանակութիւն տալիս նոցա։ Բայց քանի եկեղեցին յառաջ գնաց և պաշտամունքը զարգացաւ, բնականաբար պահանջ պէտք է զգացուէր նաև ընդհանուր տարեկան տօների։ Հրէից մէջ այդպիսի տօներից ամենակարևորը և ամենախորհրդաւորն էր պասէքը, որի հետ կապուած էին ամենաթանկագին քրիստոնէական յիշատակներ։ Հասկանալի է ըստ ինքեան, որ առաջին հաւատացեալները, թէ իբրև հրէայ և թէ իբրև ականատես վկայ այդ յիշատակների, անտարբեր լինել դէպի պասէքի մեծ տօնը չէին կարող. և յիրաւի գոնէ Ա. Կորնթ. Ե. 7—8 և Պօղոս առաքեալի այն ակնարկը, թէ քրիստոնեաները՝ ընդունելով Քրիստոսին իբրև իրենց համար զոհուած նոր զատիկ, ձշմարիտ, այդ խորհրդի համաձայն տօն պէտք է կատարեն՝ իրաւունք է տալիս մեզ ենթադրելու, որ նոր ժամանակ պասէքի տօն կատարուում էր և այդ տօնի մերձ լինելն էր առիթ այսպիսի մի ակնարկ անելու։ Յամենայն դէպս Եւսեբիոսի Եկեղ. պատմութեան մէջ* յառաջ բերած մի քանի վկայութիւնները հին հայրերի գրուածներից ցոյց են տալիս, որ այդ տօնի կատարումը շատ հին է և մինչև առաքելոց ժամանակներն է հասնում։ Ներանոս յիշելով այստեղ Պօղիկարպոս եպիսկոպոսի Հռոմ գալը (նորագոյն հետազօտութիւնների համաձայն 154 թ.ին) և Անիկետոս եպիսկոպոսի հետ ինչ ինչ խնդիրների մասին համաձայնութիւն կայացնելը՝ աւելացնում է. «Նաև կարելի իսկ ոչ Անիկետոս հաւանեցուցանել զ Պօղիկարպոս, եթէ մի պահեսցէ զօրս զայս. քանզի ընդ Յովհաննու աշակերտին Տեառն մերոյ և ընդայլ առաքեալս շրջեցաւ նա, և ընդ նոսա պահեաց զօրս զայս. և ոչ Պօղիկարպոս հաւանեցոյց ինչ զԱնիկետոս պահել, որ պատասխանի առնէր նմա եթէ արժան է մեզ զգոյշ լինել սովորութեան եպիսկոպոսաց մերոց, որ յառաջ քան զմեզ կացին. և յայս պայման գոլով սոցա հաղորդեցան ընդ միմեանս, և ետ Անիկետոս մատուցանել Պօղիկարպեայ պատարագ յեկեղեցւոջ, և խաղաղութեամբ մեկնեցան ի միմեանց»։ Ներանոսի այն թուղթը, որից Եւսեբիոս առել է այս հատուածը, գրուած է Ք. դարի վերջերում Հռոմի Վիկտոր եպիսկոպոսին։ Սա կրկին անգամ վէճի բռնուելով Փոքր Ասիոյ եկեղեցիների հետ, մեղադրում էր նոցա այն բանի համար, որ պասէք էին կատարում հրէից հետ միասին, հին կտակարանի օրինաց համաձայն Նիսան ամսի 14-ին, ինչ օր և պատահէր, մինչդեռ Հռոմ և ուրիշ արևմտեան ու մի շարք արևելեան եկեղեցիներ տօնում էին Քրիստոսի յարութեան յիշատակը յաջորդ կիւրակէ օրը։ Գլխաւոր ընդհարումը յառաջ էր գալիս նորանից, որ այս վերջին կարգի եկեղեցիները յարութեան տօնից առաջ պահք էին պահում, սկզբում 40 ժամ (Քրիստոսի գերեզմանում մնացած ժամերի թուով), ապա հետզհետէ ընդարձակելով՝ մի շաբաթ,

* Տ. Դպրութիւն. Գլ. ԽԴ։

և վերջապէս 40 օր· իսկ Փոքր-Ասիացիք Նիսանի 14-ին պասէք կատարելով պահքը լուծում էին* և ուրախութիւն անում այն ժամանակ, երբ իրենց քրիստոնեայ եղբայրների համար դեռ պահոց և ապաշխարութեան օրեր էին: Այս անհարթութիւնը վերջացնելու նպատակաւ եկեղեցական ժողովները եղան, թղթեր փոխանակուեցան եկեղեցւոց ներկայացուցիչների մէջ և Հռոմի Վիկտոր եպիսկոպոսն այնտեղ հասաւ, որ կամենում էր բանադրել և եկեղեցուց մերժուած հրատարակել Փոքր-Ասիացիներին, որովհետև նոքա չէին կամենում ոչ մի կերպ տեղի տալ և մանաւանդ նոցա գլխաւոր ներկայացուցիչ Եփեսոսի Պողիկրատէս եպիսկոպոսը իւր նորան գրած թղթի մէջ բազմաթիւ վկայութիւններով ապացուցանում էր իրենց սովորութեան նախնական և առաքելական լինելը· բայց նոյն իսկ Վիկտորի կողմնակիցները չհամակրեցին և անտեղի համարեցին նորա այս ոտնձգութիւնը, և Իրանոս, նշանաւոր «Հետևողն առաքելոց», իւր յիշեալ թղթով խաղաղասիրութեան և արդարամտութեան է յորդորում նորան:

Այսպէս տարաձայնութիւնը տևեց մինչև Դ· դար, երբ Նիկիոյ ս· ժողովը ի թիւս այլոց նաև այս խնդիրը վերջնականապէս լուծեց, արգելելով Փոքր-Ասիացոց Նիսանի 14-ին պասէք ոտնելու սովորութիւնը:

Հարց է այժմ, թէ ինչ էր իսկապէս նոցա կատարած պասէքը, երբ և ինչպէս սկըսուեցաւ բաժանումը նոցա և միւս եկեղեցիների մէջ: Այս հարցը շատ է զբաղեցրել մեր դարու եկեղեցական պատմիչներին և մի շարք կարևոր երկասիրութեանց առարկայ է եղել: Վերջին ժամանակ գրեթէ ամենքը համաձայն են Պրոֆ· Շիւրերի այն կարծիքին, որ Փոքր Ասիացիք պասէքը ոտնում էին ի յիշատակ Քրիստոսի կատարած վերջին պասէքի, վերջին խորհրդաւոր ընթրեաց, և իրենց սովորութեան հիմք ընդունում էին այն, որ Նա Ինքը Նիսանի 14-ին է պասէք կատարել և 15-ին խաչուել, և քանի որ Հին կտակարանի որոշումը պարտաւորեցուցիչ է նաև քրիստոնեաների համար·* մինչդեռ միւս եկեղեցիները պասէքի խորհուրդը Քրիստոսի յարութեամբ լրացած համարելով և հին օրինաց պարտաւորեցուցիչ լինելը մերժելով, պահանջում էին, որ այդ ոտնը անպատճառ կիւրակէ օր կատարուի և հիմնում էին այդ պահանջը նոյնպէս առաքելական աւանդութեան վերայ· և որովհետև երկու կողմի համար էս ոտնը սկսուում էր պահքով և վերջանում ս· հաղորդութեան խորհրդի կատարմամբ՝ պահանջուում էր ուրեմն, որ միաժամանակ պահք սկսուի և միաժամանակ լուծուի:

Մենք առիթ ենք ունեցել այս հարցով առանձնապէս զբաղուելու **, և հին յիշատակարաններն ու նոր մեզ մատչելի գրուածները ուշի ուշով հետազօտելուց յետոյ մի քանի էական կէտերում տարբեր եղրակացութեան ենք յանգել:—Փոքր-Ասիացոց պասէքը ըստ մեզ ոչ թէ Քրիստոսի վերջին ընթրեաց, այլ խաչելութեան և մահուան յիշատակն էր,*** և նոքա Քրիստոսի մահը տեղի ունեցած էին համարում ոչ թէ Նիսանի 15-ին, այլ 14-ին, ճիշդ նոյն ժամանակ, երբ Հին Կտակարանի օրինաց համաձայն հրէաները պասէքի դառը պէտք է ջլենէին:**** Արդէն այն հանգամանքը, որ Պօղոս առաքեալը «զատիկ մեր զենաւ Քրիստոս» ասում է, և որ Յովհաննէս աւետարանիչը Նլք ԺՒ· 46 զատկական գառան համար ասածը՝ «Ոսկր նորա մի՛ փշրեսցի», յաչեցեալի համար վկայութիւն է բերում, ցոյց է տալիս, որ առաքեալներն իրենք Քրիստոսի և զատկական գառան մէջ խորհրդաւոր նմանութիւն էին դնում և նորա մահուամբ կատարուած էին համարում զատկի խորհուրդը: Եւ երբ Պողիկրատէս Փիլիպպոս, Յովհաննէս առաքեալներին յիշելով, մի

---

* Նոքա եւս պահք ունէին, բայց ինչպէս երեւում է մի օր միայն:

* Ոմանք այս 2 տարբեր կարծիքների պաշտպան 2 կուսակցութիւնները են ընդունում՝ Տրէամիտ եւ ողջախոհ, ըստ մեզ բոլորովին անհիմն կերպով:

** Բերլինում Պրոֆ· Հառնակի մօտ, որին պէտք է շարադրութիւն ներկայացնէինք այս մասին:

*** Այս կարծիքը ուրիշներն եւս յայտնել են:

**** Այս առթիւ աստուածաբանների մէջ Յովհաննու եւ միւս աւետարանների յարաբերութեան նկատմամբ ընդարձակ վէճեր են եղել:

շարք իւր և հարևան եկեղեցեաց նշանաւոր հայրերի անուններ թուելով՝ ասում է. «Սոքա ամենեքեան պահեցին զօրն չորեքտասաներորդ զատկի, որպէս և աւետարանն ասաց, և իւրեք ոչ խոտորեցան, այլ ըստ կանոնի հաւատոց ընթացան», «և անցի ընդ ամենայն դիրս սուրբս» ևլն, նորա խօսքերն այնպիսի լուրջ և հանդիսաւոր բնաւորութիւն ունին, որ կասկածել չի կարելի, թէ նորա համար այդ ծոնը կատարելը յիրաւի մի հաւատոյ կանոն էր, ամբողջ ս. դրքի վկայութեան վերայ հաստատուած. իսկ այդ կլինէր միայն այն ժամանակ, երբ նա պասէքի ծոնի մէջ պատկերացած էր տեսնում խաչի մահուան, ուրիշ խօսքով փրկչական կեանքի բոլոր խորհուրդը:

Սովորաբար Ներսեսի վերև յառաջ բերած խօսքերն այնպէս են հասկացուում, իբր թէ Անիկտոս Պողիկարպոսին համոզում էր ոչ Նիսանի 14-ը, այլ յաջորդ կիւրակէն պահել. ըստ մեզ բնագիրը թոյլ չէ տալիս այդ ներմուծութիւնն անելու. այնտեղ ասած է միայն, որ Պողիկարպոս պահում էր մի որոշ օր (14-ը), իսկ Անիկտոս չէր պահում: Նոյն Ներսես մի քանի տող վերև ղրում է. «Ընդ որք յառաջ քան զՍոտէր առաջնորդք էին այդը եկեղեցւոյ, որոյ ի գլուխ կաս դու այսօր՝ Անիկտոս և Պիոս և Հիգինոս և Տելեսփորոս և Քսեստոս, ոչ ինքեանք պահեցին և ոչ որոց ընդ նոքօք էին թոյլ եառն պահել»: Մեր կարծիքով այդ նշանակում է, թէ Սոտէրից (Վիկտորի անմիջական նախորդից) առաջ Հռոմի եկեղեցին ոչ զատկական պահք էր ճանաչում ոչ զատկական ծոն: Սորա օրով, անկախ Փոքր-Ասիացւոց կատարած պասէքից, սովորութիւն է յառաջ գալիս յարութեան մեծ յիշատակը, որ արդէն իւրաքանչիւր կիւրակէ ծոնուում էր, առանձին շքով և հանդիսաւորութեամբ կատարել տարուայ մէջ մի որոշ կիւրակէ օր, որ մօտաւորապէս համապատասխան լինէր Քրիստոսի յարութեան ժամանակին: Սորա հաստատ իբրև փաստ կարող է ծառայել նաև այն հանգամանքը, որ ոչ Վիկտոր (որ առաջին Հռոմի եպիսկոպոսն է պապական ձգտումներով) և ոչ Անիկտոս իրենց դասը նախնական աւանդութեան վերայ չեն հիմնում և միայն Եւսեբիոսի իւր կարծիքն է, թէ Հռոմի հետ համերաշխ եկեղեցիների մէջ «յառաքելոցն աւանդութենէ մինչև յայսօր պահի սովորութիւնս, ոչ լուծանելով զպահս յայլում աւուր արտաքոյ քան զօրն յարութեան Փրկչին մերոյ»:—Բայց երբ մի անգամ այս սովորութիւնը հաստատուեցաւ և պահանջ ղգացուեցաւ, ինչպէս ս. Յարութեան յիշատակի, այնպէս նաև Փրկչական միւս նշանաւոր անօրէնութիւնների համար տարուայ մէջ որոշ օրեր ունենալ, այն ժամանակ Փոքր-Ասիացւոց պասէքը, որ հաւանականաբար նոցա միակ տարեկան ծոնն էր, այս բոլորի խորհուրդն իւր մէջ պարունակող՝ ինքն ըստ ինքեան պէտք է կորցնէր նշանակութիւնը. նորա տեղը բռնեց և պասէք անունը իւր վերայ առաւ ս. Յարութեան ծոնը, դառնալով այսպէս կառուն մի շարք ուրիշ տարեկան ծոնների համար: Ինչպէս յիշեցինք, ծոնի նախընթաց պահոց և ապաշխարութեան շրջանը հետզհետէ ընդարձակուելով դարձաւ քառասնօրեայ պահք,* որի համապատասխան յառաջ եկաւ զատկական ուրախութեան մի յիսնօրեայ շրջան, երբ պահել և ծոնը դնելով ազօթել արգելուած էր և ամեն օր պատարագ պէտք է մատուցուէր. այս շրջանը վերջանում էր հոգեպալատեան ծոնով. քառասներորդ օրը կատարուում էր համբարձման յիշատակը:**— Միաժամանակ սկսեցին նաև մարտիրոսաց յիշատակը ծոնել, նոցա նահատակութեան օրերում, ընդունելով նոցա մահը իբրև նոր ծնունդ երկնաւոր կեանքի համար, և ուրեմն նոցա ծոնը իբրև ծննդեան ծոն և ուրախութեան հանդէս:

Կ. Վ.

---

* Դ. դարի վերջերում Երուսաղէմի եկեղեցին սկսեց 8 շաբաթ պահել, որպէս զի շաբաթ եւ կիւրակէ օրերը լուծել կարողանայ եւ այնուամենայնիւ 40 օրը լրացած լինի, եւ այդ սովորութիւնը տարածուեցաւ արեւելքում:

* ս. Աստուածայայտնութեան ծոնի համար տես. Ա ր ա ր ա տ 1896 յունուար:

ԿԱՍ ՄԻԼԻՈՆ ՀՈՒԻՑԵՐԱՑԻՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՅՈՑ ՕԳՏԻՆ.

Christ. Welt-ի № 13-ում տպագրուած է Բերնի դաշնակցութեան խորհրդին ուղղած 430,000 այր և կին Յուիցերացիների ուղերձը, որը թէև քաղաքական նշանակութիւն չի ունենալ, ինչպէս նկատում է վերոյիշեալ թերթը, բայց և այնպէս կարևոր ենք համարում թարգմանաբար ծանօթացնել «Արարատ»-ի ընթերցողներին։

Երկու տարուց աւելի է, որ մեր ցեղակից քրիստոնեայ հայ ժողովուրդը ենթարկուած է սարսափելի հալածանքների։ Այս իրողութիւնը իւրաքանչիւր մարդասիրի համար աւելի ցաւալի է մանաւանդ այն պատճառաւ, որ 1878-ից սկսած այս ժողովրդի համար աւելի լաւ յոյսեր կային։ Այն ժամանակ մեծ պետութիւնները հաստատեցին Բերլինի դաշնագրութեան 61 յօդուածը. «Բարձր Դուռը պարտաւորւում է հայերով բնակուած նահանգներում տեղական պահանջների համեմատ՝ անյապաղ բարեփոխութիւններ և բարենորոգումներ մտցնել, և երաշխաւորում է Հայերի ապահովութիւնը քրդերի և չերքէսների դէմ»։ Իսկ կիպրոսի դաշնագրութեամբ Անգլիան ստացաւ «Նորին կայսերական մեծութիւն Սուլթանից խոստում՝ վարչական անհրաժեշտ բարենորոգումներ մտցնել կառավարութեան մէջ՝ արևելեան նահանգների բարձր Դրան քրիստոնեայ և ուրիշ հպատակների պաշտպանութեան համար»։ Իրողութիւն է, որ այդ ժամանակուանից հայերի վիճակը նկատելի կերպով վատթարացաւ, մինչև որ վերջապէս 1894 թ. այն կոտորածներն և աւերումներն սկսուեցան, որոնք մինչ այժմ էլ շարունակւում են։

Ինչ որ երկար ժամանակ անհաւատալի էր երևում, այժմ ապացուցուած իրողութիւն է, որ այս զզուելի ոճրագործութիւնների կազմակերպողը տաճկական կառավարութիւնն է։ Ի՞նչպէս եկաւ նա այս որոշման։ Զարթո՞ց նորա մէջ հին մոլեռանդութիւնը, որով մոռացուեցան բոլոր հանդուրժող հրովարտակները՝ Գիւլհանէի Հատտեշերիֆը, Հատտիհիւմայիւնը և այլն, կարծես ճշմարիտ լինի այդ, երբ մտածում ես, թէ հայերի բոլոր այն գիւղերը, որոնց բնակիչները իսլամականութիւն ընդունեցին, ազատուեցան, այն ինչ ամենասոսկալի անգթութիւններ գործուեցան մանաւանդ քրիստոնեայ քահանաների դէմ։ Բայց ղուրանի սկզբունքներին և Մահմեդի առաջին յաջորդների քաղաքականութեան բոլորովին դէմ են այս կատարուած գազանութիւնները։ Թուրքերից շատերը ամենախիստ կերպով տրտնջում են այս ոճիրների դէմ երբեմն նոյն իսկ տաճիկ աւելի աղնիւ պաշտօնեաներ փորձում էին աստիճանաւորների և զինուորների կատաղութիւնների առաջն առնել։ Իսկ տաճիկների կառավարութիւնը արիւնարբու նահանգապետներին շքանշաններով էր վարձատրում և մեղմ վարուղներին հեռացնում պաշտօնից։

Ինչո՞ւ նա՝ տաճիկ կառավարութիւնը՝ իր մահմեդական հպատակներին այդպիսի մեծ ոճրագործութեան դրդեց։ Ինչո՞ւ թոյլ տուեց, որ 3000-ից աւելի գիւղեր աւերուէին, 100000-ից աւելի մարդիկ սպանուէին և 500000-ից աւելի սեպհական ութիւնից զրկուէին և ծայրայեղ թշուառութեան մէջ ընկնէին։ Իրաւ է, ինչպէս իտալական խորհրդարանի մի նշանաւոր անձնաւորութիւն պնդում էր, թէ հայերը ապստամբել են կառավարութեան դէմ։ Ճշմարիտ է։ Լոնդում, Փարիզում և արտասահմանի ուրիշ քաղաքներում հայերից մի քանիսը յեղափոխական յանձնաժողովներ են կազմել։ Նոքա փորձում են իրենց ժողովրդի մէջ ևս յեղափոխական ոգի զարթեցնել, բայց այդ նրանց յաջողուո՞ղ է արդեօք։ Ո՛չ, միայն տաճիկ պաշտօնեաները կառավարութեան դուր գալու համար պնդել են և սպառնալիքներով և տանջանքներով հայերից վկայութիւններ են ձեռք բերել, բայց միշտ էլ ապացուցուած է, ինչպէս նորերս Էգինի կոտորածի վերաբերութեամբ, թէ նրանց ապացոյցները լիրը ստեր են։ Հայ ժողովրդի մեծամասնութիւնը միանգամայն խաղաղ ժողովուրդ է, որ ցանկանում է միայն իր տան պատիւը, խաղաղ աշխատանքը պաշտպանուի։ Այո՛, հաւատարիմ իր փառաւոր պատմութեան, նա յոյս ունի ազգային ազատութեան վերանորոգման, բայց այդ յոյսը տանում է իր հոգու մէջ ինչպէս մի մեսիական ցնորք։ Որքան և նորա նախնիք քաջութեամբ կռուել են, բայց զէնքով ապստամբութեան միտքը այժմ հեռու է նորանից։

Բայց մի՞թէ հայ ժողովուրդը այնպէս հնացած, ստորացած ժողովուրդ է, որ միայն իր անցեալի փառքով է ապրում և իր այժմեան ամբողջ ընթացքով տեղութեան և արհամարհանքի է արժանի։ Բոլոր անաչառ հետախոյզները, որոնց թուում և մեր նշանաւոր հայրենակից Ե. Շանտր, վկայում են, որ Փոքր—Ասիայի ազգերի մէջ Հայերը ամենազարգացած ժողովուրդն են, հոգեկան կրթութեան ընդունակ, վաճառական և արդիւնագործ, նշանաւոր աղնիւ ընտանեկան կեանքով և առանձնապէս ընդունակ պետութեան բարեկեցութիւնը բարձրացնելու մեր ժամանակի հասկացողութեամբ։ Եթէ մեծ քաղաքներում հայ վաճառականները առուտուրը արևելեան հին սկզբունք-

ներով են առաջ տանում, արդարութիւն չէ դրա համար ամբողջ ժողովրդեան դատապարտել. Մի ժողովուրդ, որ իւր կրօնական համոզումների համար աւելի քան մի որ և է ուրիշ ժողովուրդ զոհաբերութիւններ է արել, պէտք է բոլորովին գործունեայ և ազնիւ մի ժողովուրդ լինի։

Տաճիկ կառավարութեան ընթացքը պէտք է վարչական զզուելի կարգադրութիւն համարել, որ ցեղական առելութեան, կրօնական մոլեռանդութեան, վայրենի ցեղերի յափշտակութեան և սպանութեան ժառանգական հակումների միջոցով մեծ ոյժ ստացաւ։ Կառավարութեան ցանկութիւնը այն չէր, որ սակաւաթիւ յեղափոխականներին ճնշէ, այլ իւր համար ատելի ժողովուրդը, որի ցանկութիւնները բարենորոգումների վերաբերութեամբ մեծ պետութիւնների կողմից քաջալերուած էին, ըստ կարելւոյն բնաջինջ անել. Թող կորչի՛ն այդ թշուառական գեաւուրները, որոնց պատճառով քրիստոնեական պետութիւնները կամենում են Մահմեդի փոխանորդին խնամակալութիւն անել։

Երբ հետզհետէ արևելքում կատարուած դէպքերի մասին աւելի ճիշդ տեղեկութիւններ հասան Եւրոպա և Ամերիկա, երբ լսուեցան այն ոճիրներն ու գազանութիւնները, որոնք մարդկային պատմութեան ամենավատթար ժամանակներն են յիշեցնում, և միւս կողմից յայտնուեցաւ, թէ որքան քրիստոնեայ այրեր և կանայք աւելի սիրով տանջանք և մահ են յանձն առել, քան անհաւատարիմ եղել իրենց հաւատին, հասարակական կարծիքն սկսեց հարցնել. ինչո՞ւ մեծ պետութիւնները չեն միջամտում, քանի որ դորա համար դաշինքով իրաւունք ունին։ Ինչո՞ւ միայն քաղաքագիտական բողոքներով են բաւականանում, որոնց սուլթանը երբէք բանի տեղ չէ դնում։ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը 1827 թ. միացած ուժերով նեղն ընկած յոյներին չազատեցի՞ն։ Նապոլէոն կայսրը 1860 թ. 10,000 զօքով Լիբանանի կոտորածներին վերջ չըտուե՞ց։ Ինչպէ՞ս ստորացել է այժմեան մարդկութիւնը, որ ազգերը, մանաւանդ քրիստոնեայ ազգերը իրենց մէջ համերաշխութեան զգացում չունին։ Ի՞նչպէս պէտք է մենք մեր ականջներս խցենք մի ամբողջ ժողովրդի օգնութեան աղաղակների առաջ. սարսափելի ոճիրների դէմ զայրանալու այլ ևս ընդունակ չե՞նք։ Ի՞նչպէս է, որ Եւրոպայի դռների առաջ անթիւ պատուաւոր կանայք... ենթարկուեն, որբերի խմբեր սովից և ցրտից մեռնեն, և մենք ասենք «մեզ ի՞նչ»։ Վա՜յ այն ժողովրդին, որ այլ ևս մարդկային պարտքի զգացում չունի. նա անհատների և դասակարգերի ևսականութեան զոհ կլինի, անընդունակ կդառնայ ընդհանուրի օգտին տնտեսական մեծ խնդիրներ լուծելու. թէև շատ միլիոններից բաղկացած, նա իւր սեպհական թշուառութիւնների մէջ կկործանուի։

Այդ պատճառով և մեր հայրենիքի իրաքանչիւր լուսաւորուած բարեկամ ուրախ պիտ լինի, որ նոյնպէս և մեր մէջ հնչեց խղճի ձայնը, բոլոր դասակարգերի և դաւանութիւնների մէջ. որ մեր ժողովուրդն էլ սիրոյ նշանաւոր զոհաբերութիւններով արևելքի թշուառ եղբայր ժողովրդին օգնութեան ձեռք մեկնեց։ Այժմ 430,000 այր և կին Զուիցերացիք գրաւոր բողոքով երենց զայրոյթն են յայտնում. միջին և արևելեան Զուիցերիայի բազմաթիւ ժողովներում հազարաւորներ իրենց համաձայնութիւնն են յայտնել հետևեալ վճիռների համար.

Բոլոր ազգերի համերաշխութեան զգացմունքով ներշնչուած՝ ժողովս յայտնում է.

1. Հայաստանի կոտորածները, որոնց գլխաւոր պատճառը տաճիկ կառավարութիւնն է և որով 100,000-ից աւելի հայեր զոհուեցան, սարսափելի ոճրագործութիւններ են մարդկութեան վերաբերութեամբ և քրիստոնեայ ազգերը զայրոյթով լցուած են դորա համար։

2. Զուիցերական ժողովուրդն էլ պէտք է իւր ձայնը բարձրացնէ Եւրոպական պետութիւնների խիղճը զարթեցնելու՝ ապագայ եղեռնագործութիւնների առաջն առնելու, հայ ժողովրդի վերաբերութեամբ։

3. Հայ ժողովրդին յայտնում ենք մենք մեր խորին վշտակցութիւնը և պարտք ենք համարում սիրոյ օժանդակութիւններով մասնակցել նորա սուսկալի կարիքները մեղմացնելու գործին։

Պակաս չէին ի հարկէ և այնպիսի մարդիկ, որոնք թուրքերի բարբարոսութիւնների դէմ եղած իւրաքանչիւր բողոք չիմար ցնորք էին համարում, որ անօգուտ պիտի անցներ. Բայց եթէ մարդկութեան բարձրագոյն շահերը վտանգուած են, պէտք է իւրաքանչիւր մարդ կարողութեան չափով իւր պարտքը կատարէ, ինչ էլ պատահելու լինի։ Պատմութիւնը չպէտք է ասել կարողանայ, թէ երբ Եւրոպայում՝ 19-րդ դարի վերջում հասարակական կարծիքը լսելի եղաւ, Զուիցերացիք թուլութեամբ և վախկոտութեամբ լռեցին։

Բայց որպէս զի այս բողոքի շարժումը արժանաւոր վերջ ունենայ, մենք հարիւր հազարների ձայները Ձեր բարձր վարչութեանն ենք ուղղում. Զուիցերիայի վարչութիւններն ու ժողովուրդը առանց վախենալու երկրի հզօրներից միշտ յայտնել են իրենց վշտակցութիւնը տանջուող և ճնշուած ժողովուրդների համար. նոքա միշտ պատիւ են համարել մարդկային մաքուր ամեն մի գործի համար կարողութեան չափով օժանդակ լինել։

Մենք բողոքում ենք ոչ միայն յաւիտենական այն օրէնքի հիման վրայ, որով ամեն ժողովուրդ յարգանք, մարդկային արժանաւորութիւն, ընտանեկան պատիւ, կրօնական համոզմունքի ազա-

տութիւն պահանջել կարող է, այլ և մարդկային գրաւոր օրէնքների, սուլթանների դէմ ևս այժ ուղղող օրէնքների, մեծ պետութիւնների հանդիսաւոր կերպով հաստատուած դաշինքների հիման վերայ։ Մենք բողոքում ենք յայտարարելով՝ որ հետզհետէ եւրոպական քրիստոնեայ ազգերի ընդհանուր խիղճ կկազմուի, որի, իբրև ամենաբարձր ուժի առաջ բոլոր իշխանութիւնները ու պետութիւնները խոնարհում են։ Այո, մենք հաւատում ենք, որ ոչ թէ քաղաքագիտական արուեստը, այլ այս խիղճը միայն կարող է այն մեծ խաղաղութիւնը բերել, որ բոլոր դարերի ամենալաւ անձնաւորութիւնները ամրողջ քաղաքակրթական շարժման իբրև վերջին և ամենաբարձր նպատակ են հռչակել։

Մենք վստահ ենք, որ Ձեր բարձր վարչութիւնը համակրանքով կվերաբերուի այս շարժման, որի նպատակն է արդարութեան և մաքուր մարդասիրութեան հոգին զօրացնել մեր ժողովրդի մէջ, որովհետև այդ հոգին է զօրացնում մեր ժողովրդին և նորա գեղեցիկ ու մեծ ապագան ապահովում։

Ուստի և հաճեցեք բարեհաճութեամբ ընդունել այս ուղերձը, որ մենք մատուցանում ենք 430000 այր և կին Զուիցերացիների կողմից, Թող ամենքն իմանան, որ ժողովուրդների բարձր շահերի խնդիրներում Զուիցերիայի կառավարութիւնն ու ժողովուրդը նոյն զգացմամբ և համոզմամբ են ներշնչուած։

Թարգ. Դ. Ս.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

— Այս տարուան համար նշանակուած երեք *կոնֆերանսների* մէնից առաջինը տեղի կունենայ ապրիլի վերջին. այդ առթիւ Հռոմի ծխից ժողովը քննում է սրբացման առաջարկուած երեք կրօնաւորների կեանքը, առաքինութիւնը և կատարուած հրաշքները։ Երեք սրբացման առաջարկուածներն են. Մարսէյլի նախնի եպիսկոպոս Ծան—Բատիստ Գոլտ և Ֆրանսիացի երկու հին ժամանակի յայտնի քահանայք։

— Լևոն ԺԳ. մի առանձին կոնդակով վատիկանի դպրոցը վերակոչել է *բանասիրապատմական* դպրոցից, որին յատկացրել է աստուածաբանական և փիլիսոփայական գիտնական աստիճաններ տալու իրաւունքն, որով իսկապէս վատիկանի միջնակարգ դպրոցը դարձրել է համալսարանի աստուածաբանական և փիլիսոփայական բաժին։

— Կրէտէ կղզու առաքելական կառավարիչ եպիսկոպոսին պապը 10,000 ֆրանկ է ուղարկել բաժանելու կարօտեալ քրիստոնեաներին։

— Ֆրանսիայի Շատելլէրօ քաղաքի կաթոլիկ եկեղեցուն ռուսաց կայսեր կողմից նուիրուած արծաթազօծ զանգն ընդունուել է մեծ հանդիսով ի ներկայութեան անհամար բազմութեան։ Այդ զանգի բարձրութիւնն է 2 մետր ու կէս, իսկ տրամագիծը 1 մետր ու 58 սանտիմետր, իւր վերայ կրում է Ալէքսանդր Գ., Նիկոլայ Բ., նախագահ Կարնոյի ու Փորի պատկերներն և հետևեալ արձանագրութիւն. «*Հինի՛ խաղաղութեան եւ ազգերի եղբայրութեան համար*»։

— Անգլիական եկեղեցու պետերի պատասխանը Լևոն ԺԳ.-ի կոնդակին յուզումն է յառաջ բերել վատիկանում. այդ պատասխանի հերքումը պապը յանձնել է սրբազան Մոյսէսին պատրաստելու, Նոյնպիսի մի հերքումն պատրաստում են և Անգլիոյ կաթոլիկ եպիսկոպոսները, որոնց կողմից ծիրանաւոր Վոհանը զատկից վերջը պիտի նոյնը պապին ներկայացնի և նրա հաւանութիւնն ստանալուց յետոյ հրատարակէ։ Բացի դրանից պապը կըրկին մի կոնդակ պիտի արձակէ առ Անգլիոյ կաթոլիկներն Քէնտըրբըրի եպիսկոպոս սուրբ Թովմասի հարիւրամեակի առթիւ, ուր նա պիտի յորդորէ անգլիացիներին հաւատարիմ մնալ Հռոմմայ եկեղեցուն և իւր կողմից պատասխան պիտի տայ անգլիական—եպիսկոպոսների թղթին։ Այս կոնդակը գրեթէ պատրաստ է արդէն, սակայն նախ քան վերջին սրբագրութիւնը պապը կամենում է լսել անգլիացի կաթոլիկ եպիսկոպոսների կարծիքը։

— Ցայտնի է, որ Պիոս Թ. պապի այն կոնդակը, որ արգելում է մասնակցել քաղաքական ընտրութիւններին („Non expedit“), հաստատել է և Լևոն ԺԳ., Այդ կոնդակին հետևելով՝ ջերմեռանդ կաթոլիկները իբրև բողոք ընդդէմ Իտալիոյ թագաւորութեան գոյութեան, չեն մասնակցում ոչ մի քաղաքական ընտրութեան։ Այս տարի Հռոմի քաղաքում 21,179 ընտրողներից 12,000 հոգի հրաժարուեցան ձայն տալուց։

— Բելգիայում *կաթոլիկ—սոցիալականութիւնը* հետզհետէ յառաջադիմում է, չնայելով՝ որ այս մեծի պահոց եպիսկոպոսական բոլոր շրջաբերականներն ևս ուղղուած են ընկերավարական—կաթոլիկութեան դէմ։ Հասարակ քահանայից դասակարգը հետզհետէ յարում է ընկերավարութեան և յայտնապէս հասարակապետութիւն է քարոզում Բելգիայում։ Պատգամաւոր քահանայ Դէնի թեմբրում բացարձակ կերպով հանրապետութիւն է քարոզում և թագաւորութիւնը վնասակար հռչակում։

— Լիոն, Ռուէն և Սէնտի-Եագո-դէ-Կոմպոստէլլայի եպիսկոպոսները ծիրանաւորութիւն են

ստացել· որով վերջերս պակասած Ֆրանսիացի ծիրանաւորների թիւը կրկին լրացել է։

— Գերմանական կաթոլիկների կուսակցութիւնը մի մեծ յաղթութիւն է տարել կրկին ռայխստագում· Յիսուսեան կրօնաւորների մուտքը Գերմանիա արգելող օրէնքը վերացնելու համաձայնել է ռայխստագի մեծամասնութիւնը։ Խնդիր է այժմ՝ թէ դաշնակցական խորհուրդն (բունդեսռաթ) ևս կը համաձայնի՞ ճիզուիտներին յետ կանչելու։

— Ֆրանսիական կառավարութեան հրատարակած հերթող դեղին գիրքն ևս վերաբերում է հայկական խնդրին (1895—1896)՝ որա մէջ կան 178 վաւերաթղթեր, որոնք վերաբերում են Տրապիզոնի, Էրզրումի, Դիարբէքիրի, Սվազի, Մալաթիոյ, Ուրֆայի, Զէյթունի, Մերսինի, Ադանայի, Կեսարիոյ, Ալէքսանդրետի և Հալէպի կոտորածներին։

Այս թղթի մէջ անհամար ապացոյցներ կան նախամտածուած և պատրաստուած գաղանութիւնների, Հետաքրքրական է երկու թուղթ, որ պապի քարտուղար Ռամպոլլան է գրել ֆրիանսիական վատիկանի գործակալին, շնորհակալութիւն անելով ֆրանսիական դեսպան Համբոնից իրենց քրիստոնէից (իմա՛ կաթոլիկաց) ցոյց տուած պաշտպանութեան համար։ Այժմ հասկանալի է, թէ ինչո՛ւ թուրքերը բողոքական և բուն հայերին կոտորելով՝ զգուշանում էին կաթոլիկներին դիպչելուց։ Նշանաւոր է և պապի շնորհակալութիւնը քրիստոնէից պաշտպանութեան համար, որի մէջ քրիստոնեայ չեն համարուած հայ եկեղեցու անհամար զոհերը։

— Անգլիայում մեծ աղմուկ է հանել Մաստոնի քահանայի կաթոլիկ դառնալը։ Դոկտոր Մաստոնը Օքսֆորդի նշանաւոր քարոզիչներից մէկն էր։

— Կանադայի կաթոլիկների մէջ ձգտում է յառաջացել ազգային եկեղեցի կազմելու՝ ընդունելով գալլիկան եկեղեցու կազմակերպութիւնը իրրև օրինակ։ Վատիկանն այդ ձգտումից յառաջ եկած շարժումը խափանելու համար յատուկ պատուիրակ է ուղարկել Կանադա։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

— Հելլէն եկեղեցին ու ազգը տագնապի մէջ են. տաճկի դէմ արդէն պատերազմ է յայտարարուած և ամեն մի յոյն այդ կռուովն է ոգևորուած. ինչ էլ լինի այդ պատերազմի ելքը, հելլէն ազգը մեծամեծ զրկանքների և փորձանքների պիտի ենթարկուի, որին դիմադրելու համար ինչպէս հին ժամանակին, այնպէս էլ այժմ նա ոյժ պիտի առնէ իւր քրիստոնէական ոգուց և հայրենասիրութիւնից։

— Տիեզերական պատրիարքի ընտրութիւնը սուլթանի կառավարութեան ստիպմամբ արագացուեց և ինչպէս հեռագիրն հաղորդում է, ընտրական ժողովը զատկից առաջ կատարեց նոր պատրիարքի ընտրութիւնը, որպէս զի յոյն պատրիարքը զատկական շնորհաւորութիւններ ժամանակ կարողանայ սուլթանին ներկայանալ։ Պատրիարքական տեղապահն ընտրուած է պատրիարք· այս է հեռագրի հաղորդածն, իսկ թէ ո՛վ է նորընտիրն և ի՛նչ սկզբունքների տէր, դեռ ևս յայտնի չէ։

— Երուսաղէմայ յունաց պատրիարքական աթոռի ժառանգորդ է ընտրուել Բեթղեհէմի մետրոպոլիտ Մ. Դամիանոս սրբազանը։

— Մակեդոնիոյ օրթոդոքս թեմերից երեքը սուլթանը խոստացել է բոլղարական էգզարքոսին, աչքի առաջ ունենալով հելլէն—բերքական պատերազմը, բոլղարական կառավարութիւնը շտապեցնում էառաջնորդական պետութիւնների խնդիրը։

Ռուսաց եկեղեցի։—Ռուս աշխարհական մամուլը խնդիր է յարուցել կրկին մեծ պահքի ընթացքում թատերախաղերի դադարեցման մասին։ Ինչպէս յայտնի է Ալէքսանդր Գ-ի օրերից մինչև այսօր մեծ պահքին արգելուած են ռուսաց լեզուով թատերական ներկայացումները։ Առիթ առնելով այս տարի Մոսկուայում տեղի ունեցած թատերական գործիչների ժողովը, կրկին յուզիչ է այդ խնդիրը, թէ ինչո՛ւ օտար լեզուներով թոյլ են տուած ամենատեսակ ներկայացումներ և նոյն իսկ կրկիսախաղեր, իսկ արգելուած են բարոյական բովանդակութիւն ունեցող թատերախաղերը։ Աշխարհական թերթերը պահանջում են անպայման թոյլ տալ ամեն մի ներկայացումն, որպէս զի թատերական գործիչները քաղցի չը մատնուին, եկեղեցականները թերթերն ընդհակառակն պահանջում են արգելել ամեն տեսակ բեմական ու կրկեսի խաղերը։

— Պաղեստինեան ընկերութիւնը, որի նպատակն է նպաստել ռուս ուխտաւորներին սուրբ երկրում և հոգալ այնտեղի բնիկ օրթոդոքսներին, հետզհետէ նորանոր ճիւղերով զարգանում է և տարածուում։ Այս տարի յունուարի 2-ին բացուեցաւ այդ ընկերութեան մի նոր ճիւղը Բերլինում։

— Ռուսական համալսարանների կանոնադրութեան փոփոխութիւնն է սպասուում։ ուստի ամբողջ մամուլն զբաղուած է նոր առաջարկութիւններ անելով։ Եկեղեցական թերթերը հիմնուելով Տոմսկի համալսարանի փորձերի վրայ, առաջարկում են իրաւունք տալ հոգևոր դպրոցների (սեմինարիա) աշակերտներին ևս ուսանող ընդունուելու։ Տոմսկի համալսարանում հէնց բացման օրից ընդունուել են հոգևոր դպրոց-

ների աշակերտներն և ինչպես երևում է համալսարանական տեղեկագրից, դրանք ամենևին չետ չեն մնացել գիմնազիոնների աշակերտներից։

— Ռուսաց եկեղեցական թերթերն ուշադիր են դարձրել կաթոլիկութեան ազդեցութեան վրայ Ռուսաստանում. ոմանք գանգատում են, որ բարձր դասակարգի անձինք գաղտնի կաթոլիկ են դառնում իրենց հոգևոր ծարաւը յագեցնել չը կարողանալով ռուս քահանաների մօտ, միայն մահուան ժամանակն է յայտնուում, որ այս ինչ նշանաւոր պարոնը կամ տիկինը կաթոլիկ եկեղեցու ծիսով պիտի թաղուի։ Թերթերն առաջարկում են մարմնաւոր իշխանութեան, որ ամեն անգամ որոնէ և գտնելով՝ այդ գաւանափոխներին յանձնէ թեմական իշխանութեան։

Աւելի խիստ կերպիւ գանգատուում է «Ռուսքսկոյ Օբոզրենիէն» լհնացի կաթոլիկ քահանաներից, որոնք իբրև կրօնուսոյցներ մեծ ազդեցութիւն են գործում մատաղ սերնդի վրայ։ Կաթոլիկ քահանաները ճգնում են իրենց հոտի մէջ մոլեռանդ ատելութիւն սերմանել դէպի օրթոդոքս եկեղեցին։ Արևմտեան նահանգներում գործող մի քանի կրօնուսոյցների անուններ են առաջ բերած, որոնք իրենց աշակերտներին հաւատացրել են, թէ կաթոլիկ եկեղեցու վարդապետութեան հակառակ է ռուսական եկեղեցական պատկերների առաջ աղօթելն, որ ուղղակի մեղք է և պէտք է աշխատել երես դարձնել նրանցից աղօթքի ժամանակ։ Մի այլ քահանայ պատուիրել է իր հօտին չը մտնել ռուսաց եկեղեցի և զանցառուներին զրկում է խոստովանութիւնից։ Ատելութիւնն այնքան մեծ է, որ կաթոլիկ քահանային ռուսաց լեզուով աղջունելն ընդունուում է հայհոյանքի տեղ։ Այսպիսի և աւելի ևս մեծ գայթակղութիւններ յիշելուց յետոյ՝ թերթն առաջարկում է փոխել կաթոլիկ հոգևոր դպրանոցների կանոնագրութիւնը, որ 1847 թուին է հաստատուել։ Այդ փոփոխութեան նպատակը պիտի լինի դպրոցը դնել կառավարութեան հսկողութեան տակ և լաւներէն դասախօսութեան փոխանակ մտցնել ռուսերէն դասախօսութիւն։

— Մոսկուայի հոգևորականութիւնը կամենալով կրճատած դասակարգի անհաւատութեան և անտարբերութեան դէմ կռուել, սկսել է հասարակական դասախօսութիւններ կարդալ աստուածաբանութիւնից։ Առաջին դասախօսութեան նիւթն է եղել. «Աստուածային յայտնութիւնն իբրև գրական փաստ պատմութեան». երկրորդինը՝ «Անաստուածութիւնն և հաւատն առ Աստուած՝ համեմատելով միմեանց հետ պատմական, հոգեբանական և տրամաբանական տեսակէտով»։

— «Նովոյե Վրեմեան» առաջարկում է վանքերին կից բուժարաններ հիմնել, որովհետև շատ վանքերի տեղագրութիւնը նպաստաւոր է այդ նպատակի համար, իսկ կրօնաւորներին ի՞նչ աւելի յարմարագոյն պարապմունք կարելի է յատկացնել, քան եթէ հիւանդներին խնամելը։ «Ցերկով. Վեստ.» իրաւամբ նկատում է, որ թէև այդ միտքն յիմար չէ, բայց անիրագործելի է, որովհետև արտաստանի բուժարաններ գնացողներն աւելի այն զուարճութիւններով են գրաւում, որ կան այնտեղի բուժարաններում, իսկ վանքերը չի կարելի զուարճութեան տեղի դարձնել։

— Ամբողջ եկեղեցական մամուլը բողոքում է ռուս հեղինակներից ոմանց դէմ, որոնք իրենց շարադրութիւններով հաւատոյ հակառակ վարդապետութիւններ են տարածում։ Առանձնապէս յարձակում են Լև Տոլստոյի շարադրութիւնների վերայ։

— Տվերի եպիսկոպոսը մեծի պահոց ընթացքում յիշեցրել է իր թեմի քահանայից, որ հաղորդեն իրենց ծխականներին 7 տարեկանից ի վեր սուրբ հաղորդութեան մասին։

— Մեծի պահոց ընթացքում օգտակար և վայելուչ կերպով ժամանակ անցկացնելու մասին խնդիր հանելով՝ մի քանի թերթեր առաջարկում են աստուածաբանական դասախօսութիւններ և հոգևոր համերգներ սահմանել։

— Մահմեդականների մէջ քրիստոնէութիւնը յաջողութեամբ քարոզելու համար մի քանի միսիոներներ առաջարկում են բազմացնել մահմեդականների բնակավայրում եկեղեցեաց թիւը և մըտցընել տեղական լեզուով ժամակարգութիւն։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

— Անգլիական եկեղեցու երկու գլխապետների՝ Քէնտըրբըրիի և Իեօրքի եպիսկոպոսների՝ պատասխանի թուղթը Հռոմի պապին՝ ուղարկուած է բոլորը օրթոդոքս եկեղեցու նշանաւոր եպիսկոպոսներին, կարծես թէ հրաւիրելով դրանց դատաւոր լինել պապի և իրենց մէջ։ Աւագ շաբաթուն Պետերբուրգ է ժամանել ինքը Իեօրքի արքեպիսկոպոս Վիլհելմ Մակլահաւն, որպէս զի ներկայ լինի ժամասացութեանց և ծանօթանայ ռուսաց հոգևոր ճեմարաններին ու վանքերին։

Պետերբուրգում այցելելով բոլոր եկեղեցական հաստատութիւնները, Իեօրքի արքեպիսկոպոսն ուղևորուել է Մոսկուա։ Արքեպիսկոպոսին ուղեկցում է յայտնի ռուսասէր Բերբերէք անգլիացի գըրագէտը, որ իրեն նպատակ է դրել մերձեցնելու անգլիական և օրթոդոքս եկեղեցիները։

— Օքսֆորդի և Կեմբրիջի աստուածաբանական բաժինները ձեռնարկել են հրատարակել ս. Գիրքը համաձայն բոլոր յայտնի ձեռագիրների։ Անցեալ դարու վերջը և մեր դարու սկզբին (1798—1827) Օքսֆորդում հրատարակուել է ս. Գիրքը 5 մեծադիր հատորների մէջ՝ համեմատութեամբ

այն ժամանակ յայտնի 300 ձեռագրների, այժմ հարիւր տարուց յետոյ, նորանոր ձեռագրներ գըտնուած լինելով՝ կարիք է զգացուել նոր հրատարակութեան ձեռնարկելու։

— Անկլիկան քարոզչական ընկերութիւնը (Church Missionary Society) գործում է Աֆրիկէի ամենայն կողմերում, Արաբիայում, Պաղեստինում, Պարսկաստանում, Տաճկաստանում, Հնդկաստանում, Ցէյլոնում, Չինաստանում, Ճափոնիայում, Նոր—Զելանդիայում, Կանադայում և Կոլումբիայում։ Ընկերութիւնն ունի 462 կայարան, ուր գործում են 970 եւրոպացիք և 5393 տեղացիք։ Հեթանոսութիւնից դարձած են 193,674 հոգի, 24151 նոր հաւատաց պատրաստուում են մկրտուելու։ 1896 թուին մկրտուել են 15,805 հոգի։ Քարոզչական դպրոցների թիւն է 2130, ուր կրթուում են 88,205 սանուկք։ Վերջին տարին ընկերութեան մուտքն եղել է 3 միլիոն ռուբլու չափ և ծախսուել է երկուս ու կէս միլիոն ռուբլի։

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ։

Ինչպէս Եւրոպական մի քանի երկրներում, այդպէս և Ամերիկայի Միացեալ Նահանգներում կազմուած են այս անունով մի շարք ընկերութիւններ, որոնք նուիրուած են իրանց անդամների կրօնական բարոյական դաստիարակութեանը։ Եկեղեցիների մօտ կան բիբլիական կոչուած լսարաններ և կիրակնօրեայ դպրոցներ, որտեղ նոր սերունդը ծանօթանում է կրօնի ճշմարտութիւնների հետ և ուսումնասիրում է ս. Գիրքը։ Բացի եկեղեցական խմբակցութիւններից կան քարոզչական ընկերութիւններ, որոնց անդամները ծովեր չեն անցնում հեթանոսներին որսալու, այլ իրանց իսկ շուրջն աշխատում են կրօնական կեանք ստեղծել և ժողովրդի վրէ տարածել կրօնական ճշմարտութիւններ։ Այդ ընկերութիւններից մի քանիսը տարածուած են ամբողջ Միացեալ Նահանգներում, և կան, որ իրանց գործունէութիւնը սահմանափակում են մի քաղաքի շրջանում։ առաջիններից նշանաւոր է Sosiety for Christian Endeavor Epworth Leangue, քրիստոնէական ընկերութիւնների դաշնակցութիւնը։ Իւրաքանչիւր քաղաք ունի իւր «Երիտասարդների քրիստոնէական ընկերութիւնը»։ դրա միացած են մի կենտրոնական յանձնախմբով, որ յարաբերութիւն է պահպանում Եւրոպական նոյնպիսի ընկերութիւնների վարչութեանց հետ։ Այսպիսով երիտասարդների քրիստոնէական ընկերութիւնը հանդէս է գալիս իրրև միջազգային մի հաստատութիւն։

Նիւ—Եօրքում քառասուն տարուց աւելի է, որ գոյութիւն ունի հիշեալ ընկերութիւնը։ Կանոնադրութեան համաձայն, ընկերութեան նպատակն է «Նիւ—Եօրքի երիտասարդների մտաւոր, հոգեկան և հասարակական վիճակի բարւոքումը»։ 1866 թ. նա արդէն հաստատուել է նահանգի օրէնսդիր իշխանութեան կողմից։ Ընկերութեան անդամ կարող է լինել ամեն մի երիտասարդ, առանց դաւանութեան խորութեան. սակայն ձայնատուութեան և ընտրուելու իրաւունքը վայելում են միմիայն բողոքական դաւանութեան պատկանող անդամները։

Ընկերութիւնն այժմ ունի 14 ճիւղ, քաղաքի զանազան մասերում. գլխաւոր ճիւղը տեղաւորուած է մի հոյակապ վեց յարկանի շինութեան մէջ։ Այդտեղ է գտնուում ընկերութեան գլխաւոր մատենադարանը, որ ունի 50,000—ից աւելի գիրք, գիտութեան այլ և այլ ճիւղերի, արուեստների և քրիստոնէական աստուածաբանութեան վերաբերեալ։ Կիրակի օրերն այդ գրադարանից դուրս են տրուում միմիայն կրօնական բովանդակութիւն ունեցող գրքեր։ Շինութեան ներքնայարկում շինուած է լոգարան և մարզարան, որտեղ անդամները մարզուում են բժշկի ղեկավարութեամբ։ Նոր անդամն ամենից առաջ բժշկական փորձի է ենթարկուում և նրան նշանակուում է այս կամ այն ֆիզիքական վարժութիւնը։ Երեկոները դասախոսութիւններ են լինում մաթեմատիկայից, լեզուներից, հաշուապահութիւնից, նկարչութիւնից և գրծագրութիւնից։ Մի քանի դահլիճներ փառահեղ կահաւորուած են և նշանակուած են առանձնապէս մտերմական խօսակցութիւնների և անդամների ղուարճութեանց համար։ Մի ընդարձակ դահլիճում յաճախ տեղի են ունենում երաժշտական և գրական երեկոյթներ։ Երբեմն ընկերութեան գրական ակումբը կազմակերպում է որ և է հարցի մասին վիճաբանութիւն, որին հրաւիրուում են իրրև դատաւոր համալսարանական պրոֆեսորներ, կամ Նիւ—Եօրքի յայտնի խմբագիրները։

Համարեա ամեն երեկոյ դահլիճներից մէկում տեղի է ունենում հոգևոր զրուցատրութիւն պատրի ղեկավարութեամբ, մի քանի օրհներգներ են երգուում, կարդացուում է Հին և Նոր Կտակարանից մի մի գլուխ, ներկայ եղողներից մէկը հաղորդում է իւր կրօնական զգացումներն ու տպաւորութիւնները, երբեմն ինքը պատրը մի քանի խօսքով բացատրում է այս կամ այն ընթերցուածը, ապա ամենքը ցրուում են։

Կիրակի օրերը լինում են բիբլիական դասախօսութիւններ, աստուածաբանութեան ուսանողների ղեկավարութեամբ՝ կարդում և մեկնում են ունկնդիրներին մանաւանդ Նոր Կտակարանը։

Ընկերութեան անդամներից կազմուած է մի մասնաժողով, այսպէս կոչուած «գործիչների» [Workers], որոնք մտերմական զրուցատրութիւնների միջոցով աշխատում են կրօնական գաղափարներ տարածել իրանց ընկերակիցների շրջանում։ Նոքա այցե-

լում են ընկերութեան հիւանդ անդամներին և օգնում նրանց բանիւ և գործով։ Առանձին մի գրասենեակ զբաղուած է ընկերութեան անդամների համար աշխատանք և պարապմունք գտնելով։ Անցեալ տարի այդ գրասենեակ 300-ից աւելի երիտասարդների համար պարապմունք և պաշտօն է գտել։

Ընկերութիւնը մեծ յարգանք և ժողովրդականութիւն է վայելում Նիւ-Եօրքում. գրամի աղնուականներից շատերը մասնակցում են նրան, ճիւղերն այնպէս են կազմուած, որ իւրաքանչիւրը բաւարարութիւն է տալիս քաղաքի բնակիչների որոշ մասի կարիքներին։ Այսպէս, գերմանական թաղի կենտրոնում գտնուում է գերմանական ճիւղը, որտեղ խօսակցական լեզուն գերմաներէնն է. լատինական թաղումն է ֆրանսիական քրիստոնէական ընկերութիւնը. կայ նոյնպէս չինական ճիւղ՝ երիտասարդ չինացիների համար, որ տեղ նոքա սովորում են անգլիերէն և ծանօթանում տեղական քաղաքակրթութեան հետ։ Քաղաքի կենտրոնումն է, Կոլումբիայի համալսարանից ոչ հեռու, «ուսանողական ակումբը», Քրիստոնէական ընկերութեան ուսանողական ճիւղը։ Ժամանակ առ ժամանակ այս կամ այն պրօֆեսորը երեկոյթ է սարքում ուսանողների համար, որտեղ թէյի կամ սուրճի ժամանակ մտերմական զրուցատրութիւններ են լինում գիտութեան այլ և այլ ճիւղերի, կրօնի և փիլիսոփայական խնդիրների վերաբերեալ։ Բօուէր-Ստրիտում, քաղաքի աւելի աղքատ դասակարգի թաղում, գըտնուում է քրիստոնէական ընկերութեան մի առանձին բաժանմունք գպրոցական հասակի մանուկների համար։

Ընկերութեան ծախսերը հոգացուում են մասամբ անդամակցական վճարներով, մասամբ դրամագլխի և անշարժ կայքերի եկամուտներով, մասամբ էլ ընկերութեան հարուստ բարեկամների միանուագ նուիրատուութիւններով։ Վերջին տարեկան հաշուետուութեան համաձայն ընկերութեան հիմնադրամը հաւասար էր 130,000 դոլլարի (175,000 ռուբլի)։ տարեկան ծախք եղել է 43,000, իսկ այս տարուայ նախահաշիւն է 52,000 դոլլար։

Անցեալ տարի Նիւ-Եօրքի մեծատուն Սամուէլ Ինսլի ընծայեց «Քրիստոնէական ընկերութեանը» մի տուն 200,000 դոլլար արժողութեամբ, քաղաքի վաճառաշահ մասի կենտրոնում։ Նորերս վերատեսուչների ժողովը որոշեց բաժանմունքներից մէկի համար առանձին շինութիւն կառուցանել քաղաքի հիւսիս-արևմտեան մասում։ Շէնքը կընստի 375,000 դոլլար, որից 200,000-ն արդէն հաւաքուած է ընկերութեան բարեկամների նուիրատուութիւններով. անցեալ տարի «ընկերութիւնն» ունէր մօտ 5000 մշտական անդամ, մեծամասնութիւնն ի հարկէ բողոքականներից։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ։

ՊԱՐԹԵՒՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

ԵՒ

ՆՐԱՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԵՏ։

(250 Քրիստոսից առաջ — 226 Քրիստոսից յետոյ)

(Շարունակութիւն)։ *

Հռոմմա—պարթեւական պատերազմները Հայաստանի համար։

Փրաատէս Դ-ի երկրորդ անգամ գահակալութիւնն աւրիթ եղաւ Հռովմայեցիների պարթեւական գործերին խառնուելուն։ Օգոստոս կայսրը բռնեց Փրաատիսի կողմն և դրա փոխարէն ստացաւ նրանից Կրասոսի և Անտոնիոսի պարտութեան ժամանակ պարթեւների ձեռքն անցած դրօշներն ու գերիք։ Այս դէպքը տեղի ունեցաւ 20 թուին Քրիստոսից առաջ, երբ Օգոստոսը Ասորիքումն էր։ Ներքին խռովութիւնները տևեցին Պարսկաստանում մինչև 9 թ. Քրիստոսից առաջ. այդ միջոցին Փրաատիսի փոխանակ երեք տարու չափ իշխեց Մ ի թ ր ի դ ա տ է ս Դ. նոյն ժամանակում ինքնուրուն նութիւն ձեռք բերին և Մարք, որոնք Հռովմից ինդրեցին և ստացան իրենց Արտաւազդ թագաւորի որդի Արիոբարզանէս Բ-ին, իբրև թագաւոր։ Փրաատէսը երրորդ անգամ գահակալեց 10—9 Քրիստոսից յետոյ և երկիւղ կրելով ներքին խռովութիւններից, իր 8 որդիքն ու երկու կանայքը Հռովմ ուղարկեց իբրև պատանդ։ Պարսկաստանում մնաց միայն մի իտալական ստրկուհու, Թէա Մուզա Ուրանիայի մանկահասակ որդին, որ գահաժառանգ էր նշանակուած։ Սա էր որ իւր մօր սադրանօք սպանեց Հօրն ու նրա տեղը թագաւորեց։

Նոր թագաւորած Փ ր ա ա տ է ս Ե. կամ ինչպէս սովորաբար կոչուում է Փրաատակէսը նպաստեց հայկական ազատասիրութեան՝ ընդդէմ Արտաւազդ Դ-ի, որ հռովմէացոց պաշտպանեալն էր։ Հայերը պարթեւաց օգնութեամբ դուրս վռնդեցին իրենց երկրից Արտաւազդին եւ նրա պաշտպան հռովմէական զօրքն եւ թա-

* Տես Արարատ 1896 № 11. եր. 505—507։

զաւորեցքին պարթեւաց Թիկնաձու Տիգրան Դ-ին։ Նոյն միջոցին Մարաստանից արտաքսուեցաւ և Արիոբարզանէս Բ., Օգոստոս կայսրը արևելեան գործերը կարգի բերելու համար ուղարկեց իր թոռն Կայիոս կեսարին դէպի Ասորիք։ Հայոց Թագաւոր Տիգրան Դ. շտապեց հռոմէացոց հետ հաշտուելու եւ նրանցից Թագաւոր ճանաչուեցաւ։ Փրահատէան եւս խաղաղութեան դաշն կնքեց Գայիոս Կեսարի հետ, հրաժարուելով Հայաստանի գերիշխանութիւնից (1. Քրիստոսից յետոյ)։

Փրահատէսը երկար չիշխեց, 4 Թուին Քրիստոսից յետոյ տեսնում ենք նրան հռոմէական սահմաններում, ուր իւր երկրից հալածուած մեռաւ։ Սրան յաջորդեց Որոդէս Բ. աքսորից դառնալով, իւր անագորոյն բարքի համար ատելի դարձաւ և որսի ժամանակ սպանուեցաւ (6. Քրիստոս յետոյ)։

Պարթեւները դեսպաններ ուղարկեցին Հռոմ և Օգոստոսից խնդրեցին Փրահատէս Դ-ի որդիներից մէկին իրենց վրայ թագաւորեցնել. ընտրուեցաւ Փրահատի աւագ որդին, Վոնոնէսը, որ իւր կրթութեամբ բոլորովին խորթացել էր պարթեւներից, ուստի շուտով ատելի դարձաւ և նրա փոխանակ թագաւորական գահին տիրելու հրաւիրուեցաւ Ատրպատականի արքայ Արտաբանէս, որ մայրական կողմից արշակունի էր (10 Ք. յ.)։ Վոնոնէսը յաղթուեցաւ (16 թ.) եւ փախաւ Հայաստան, ուր հէնց այդ միջոցին անիշխանութիւն էր, ուստի եւ ժողովուրդը նրան թագաւորեցրեց։

Արտաբանէս Գ. չէր կարող թոյլ տալ, որ իւր հակառակորդը հարևան երկրում թագաւորէ, ուստի պատերազմ սպառնաց Հռոմէացոց, եթէ մտադիր լինէին պաշտպանել Վոնոնէսին։ Տիբերիոս կայսրը խաղաղութիւն էր ցանկանում, ուստի զիջաւ, մանաւանդ երբ տեսաւ, որ Վասպուրականի եւ Բագրեւանդի ազատասիրն Արտաբանի կողմն է։ Վոնոնէսը թողեց Հայաստանն եւ անցաւ նախ Ասորիք եւ ապա Արտաբանի պահանջմամբ քաշուեց Կիլիկիա, որտեղից փախստեան մի անյաջող փորձ անելու միջոցին սպանուեցաւ (19 թ.)։

Պարթեւների իշխանութիւնը քայքայուում էր, տէրութեան զանազան ծայրերում անկախ իշխանութիւններ էին կազմուում, արքայից արքան շարունակ պատերազմներ էր մղում ապստամբների դէմ։ Արտաբանէսը ոչ միայն ապստամբներին ընկճեց, այլ և կարողացաւ հարևան ազգերին երկիւղ պղնել։ Հայաստանում թագաւորեցրեց իր անդրանիկ Արշակ որդուն և հռոմէացիներից սկսաւ կապադովկիան անգամ պահանջել, որովհետև այնտեղ իրանեան ազգեր էին բնակում։

Առաջին գարում հռոմա—պարթեւական բոլոր պատերազմների սկզբնապատճառն Հայաստանի վրայ ունենալիք գերիշխանութիւնն է։ Հռոմի կայսրներից ամենախաղաղասէրն անգամ չէր կարող թոյլ տալ, որ պարթեւների գերիշխանութիւնը ճանաչուէր Հայաստանի վրայ, ուստի Տիբերիոս Արտաբանի դէմ նոր թշնամիք յարոյց, Վրաց (Իբերացոց) Փարսմանէս թագաւորին հռոմայնացիք որդեցին, որ իւր եղբօրը, Միհրդատէսին, Հայոց գահի ժառանգ ներկայացնէ։ Արշակին սպանեցին իւր կաշառուած ծառայքը, վրացիք հեղեղեցին երկիրը իրենց հրոսակներով և տիրեցին Արտաշատ մայրաքաղաքին (35 թ.)։ Երբ գրանից յետոյ Արտաբանը իւր միւս որդուն, Որոդէսին, զօրքով Հայաստան ուղարկեց իւր եղբօր սպանման վրէժն առնելու և նրա գահը ժառանգելու, Փարսմանէսը գաշն կնքեց Ալբանների (Աղուանից) թագաւորի հետ և ձեռնարկեց մի այլ աւելի վտանգաւոր գործ, որի շնորհիւ վրաց թագաւորները միշտ կարողացել են, չնայելով՝ իրենց չնչին ուժերին, մեծ դեր խաղալ.—նա բաց արաւ Կովկասեան դռներն հիւսիսային Սարմատների, կամ ինչպէս այլք կոչում են Ալաններին, առաջ, որոնք գրամով և աւարով հեշտութեամբ էին գրաւում։ Այս վայրենի հրոսակները յարձակուեցան Հայաստանի վրայ, Որոդէսը դէմ դուրս եկաւ նրանց և մեծամարտութեան մէջ վիրաւորուեցաւ Փարսմանէսից, երբ զօրքի մէջ տարածուեց արքայորդու մահուան սուտ լուրը, զօրքը ցիրուցան եղաւ։ Մինչ Արտաբանէսը յաջորդ 36 թուին նորից կամենում էր պատերազմի բախտը փորձել Հայաստանում, իւր յետևը դժգոհ պարթեւների կուսակցութեան և Տիբերիոսի ձեռքով պատրաստած խարդաւանանքն երևան եկաւ։ Դժգոհների պարագլուխն էր Հարուստ ու զօրաւոր Սիննակէսը, որ Տիբերիոսից լծկրել ու ստացել էր պատանդ արշակունիներից մէկին, Փրահատէս Դ-ի որդի Փարահատէսին, իբրև պարթեւաց թագաւոր։ Սա շուտով մեռաւ և նրան փոխարինեց Փրահատէս Դ-ի թոռներից մէկը Տիրիդատէս անունով։

Մեծամեծներն միմեանց ետևից թողին Արտաբանին և միացան նրա հակառակորդի հետ։ Արտաբանէսը բարւոք համարեց ազատակամ քաշուել ասպարիզից և գնալով Վրկանաց աշխարհը, նորոգեց իւր հին յարաբերութիւնները հարևան թափառական ազգերի հետ։

Տիրիդատէս Գ. հռոմէական զօրքերով յաջող խաղաց և տիրեց արևմտեան նահանգներին, Տիգրան մտնելուց յետոյ շուտով թագ կապեց ա-

ռանց սպասելու զօրաւոր արևելեան սատրապների գալստեան, որով և նրանց Թշնամեցրեց իւր հետ։ Վիժգոհները կրկին հրաւիրեցին Արտաբանէս Գ.-ին, որ Դահերից և Սակերից կազմուած բանակով եկաւ ու առանց պատերազմի գրաւեց իւր գահը։ Տիրիդատէսը ապաստանարան գտաւ Ասորիքում (36 Թ.)։ Հռոմէացոց հետ հաշտութեան դաշն կռեց Արտաբանէս և իւր որդի Դարեհին ևս պատանդ տուաւ։ Մի նոր դաւադրութիւնից խոյս տալով՝ Արտաբանէս ապաւինեց Ադեաբենի Իզատես թագաւորին։ Պարթևների վրայ թագաւորեց Արտաբանեսի որդեգիր Կիննամոս, որ ապա ինքնակամ տեղի տուաւ Արտաբանեսին։ Իզատես թագաւորը վարձատրուեցաւ իւր հաւատարմութեան համար, բացի մի քանի պատուոյ նշաններից, նա ստացաւ և Մծբնին քաղաքը, որ իրենց Հայոց թագաւորից։ Հայաստանը կրկին ընկել էր պարթևաց ձեռքը շնորհիւ Գայոս կեսարի անմտութեան, որ Հայոց թագաւոր վրացի Միթրիդատեսին հռոմի էր կանչել և գերութեան մէջ էր պահում։ Արտաբանէսը հաւանօրէն մեռաւ 40 Թ.-ին։

Նոյն Թուին թագաւորեց Արտաբանեսի որդի Վարդանէսը, սրա փոխանակ 41 Թուին թագաւորում է Գոտարզէսը, որ իւր անգթութեան պատճառով հալածուում և կրկին Վարդանէսն է թագաւորում (42· յուլիս)։ Մինչ Վարդանէսը ներքին կռիւներով էր զբաղուած, հռոմէացիք կրկին պարթևներից խլեցին Հայաստանը և Կլաւդիոս կայսրը գերութիւնից արձակեց Հայոց թագաւոր Միթրիդատեսին (վրաց թագաւորի եղբօրը), սա հռոմէական և վրացի զօրքերով Հայաստան խուժեց, յաղթեց Դամինաքս սատրապին և տիրեց Հայաստանին։

Վարդանէսը Գոտարզէսի հետ հաշտուեց, տիրեց Սելեւկիա քաղաքին և սկսաւ ծրագիր կազմել Հայաստանին տիրելու մասին, սակայն ներքին խռովութիւնները թոյլ չը տուին նորան այդ գործին ձեռնարկելու։ Գոտարզէսի երրորդ ապստամբութիւնն ևս ճնշեց նա, այդ հակառակորդին հալածեց մինչև Սինդէս (Թէջէտ) գետի ափունքն և մի յուշարձան կանգնելով այնտեղ, յետ դարձաւ։ Յաղթութիւններով գոռոզացած Վարդանէսն սկսաւ անգթութիւններ գործել, ուստի և դաւադրութեամբ որսի ժամանակ սպանուեցաւ, երևի 45 Թուին։ Դահը կրկին բռնաբարութեան առարկայ դարձաւ, ապա թագաւորեց կրկին Գոտարզէսը, որի անգթութիւնների պատճառաւ պարթևները թագաւոր խնդրեցին Հռոմէ եղած պատանդներից. 49 Թուին Գայոս Կեսարը տուաւ նրանց Մհերդատէսին (որ է Միթրիդատես Ե.), որի հետ միացան Ուռհայի թագաւոր Աբգար Ե. և Ադիաբենէի թագաւոր Իզատէսն։ Գոտարզէսը նախ իւր կողմը գրաւեց Մհերդատեսի կուսակիցներին և ապա շրջապատելով նրա բանակը, մեծ յաղթութիւն տարաւ նրա վրայ, ջարդելով գրեթէ նորա բոլոր զօրքը (50 Թուին)։ Պարտուած Մհերդատէսն ընկաւ յաղթականի ձեռքն, որ նորա ականջները կտրելով արձակեց, իսկ ինքը Գոտարզէսը հիւանդանալով մեռաւ մի տարի յետոյ (51 Թուին)։ Սրան յաջորդեց Արտաբանէս Գ.-ի եղբայր, Ադիաբենի թագաւոր Վոնոնէսը, որ շատ կարճ ժամանակ թագաւորեց (51—54)։

Վոնոնէսի աւագ որդին Վոլագաղէս (Վաղարշակ) Միլետացի մի հարճի զաւակ էր, բայց այսու ամենայնիւ թագաւորեց պարթևաց վրայ իւր եղբայրների համաձայնութեամբ։ Ապագայ խռովութիւնների առաջն առնելու համար՝ սա իւր եղբայրներին թագաւոր դարձրեց սահմանակից երկրներում։ Պակորոսը (Բագուր) ստացաւ Ատրպատականը, Մարաստանը, Տիրիդատեսին որոշեց տալ Հայաստանը, սրանք պէտք է մեծ արքայից յետոյ երկրորդ և երրորդ աստիճան ունենային։ Պարթևաց տէրութեան մէջ չորրորդ թագաւորութիւնը կազմում էր արևելեան Իրանն և Ինդոսի շրջակայ երկիրները, հինգերորդը Մալքթաց աշխարհը (Կովկասի հիւսիսային զառիվայրը, ուր 19 Թուին Քրիստոսից յետոյ իշխում էր մի արշակունի թագաւոր)։ Ագաթանգեղոսի և Սեբէոսի յիշած պարթևական չորս թագաւորութիւնները ճիշտ են, եթէ աչքի առաջ ունենանք՝ որ ատրպատականի տէրութիւնը վերջը միացաւ բուն Պարսկաստանի հետ։

Հայաստանին տիրելու յաւիժ առիթ Միթրիդատեսի սպանումն իւր ազգակից Ռադամիստոսի ձեռքով։ Պարթևները յարձակուեցան Հայաստանի վրայ (52 Թ.) և ապստամբական յարձակակիչը փախաւ առանց դիմադրութեան։ Տիրիդատէսը տիրեց Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքներին։ Պարթևաց բանակում ժանտախտ երևեցաւ և նրանք ստիպուեցան քաշուել Հայաստանից (53), ուստի Ռադամիստոսը կրկին թագաւորեց։ Ժողովրդական ապստամբութիւն ծագեց Հայաստանում և Ռադամիստոսը վռնդուեցաւ 54 Թուին, պարթևները հանգամանքից օգտուելու և կրկին տիրելու Հայաստանին առանց որ և է դիմադրութեան հանդիպելու։ Հռոմէացիք չէին կարող թոյլ տալ, որ Հայաստանը կրկին պարթևական երկիր դառնայ, ուստի Վոլագեզեսի դէմ

հանեցին Վարդանէսի որդի Նանէսին եւ Սկիւթացիներին որդեցին պարթեւների վրայ յարձակուել։ Վռազգէսը զօրքերը կանչեց Հայաստանից (55 թ.) եւ հաշտութիւն արաւ հռոմէացոց հետ։ Նանեսի դրամները 55—58 թուականն են հանում, մինչ Վռազգէսինը վերսկսուեցան 61 թուից։ Վռազգէսը 58 թուից սկսում է դարձեալ արշաւանք ղէպի Հայաստան առանց հռոմէացոց ղէմ պատերազմ հրատարակելու. հայկական պատերազմները հանարում էին Տիրիդատեսի գործ, որ կապ չունէր արքայից արքայի հետ։ Այս անգամ պարթեւները շատ թոյլ էին. 58—59 թ. Դոմնիցիոս կորցուցին առանց մեծ ճիգերի տիրեց Արտաշատին եւ աւերեց այդ մայրաքաղաքը, գրաւեց Տիգրանակերտը եւ ամեն տեղ հռոմէական գերիշխանութիւնը վերականգնեց։ Հայաստանում Ներոն կայսեր հրամանով թագաւորեց Տիգրան Ե., որ հերոդեան ցեղի Կապադովկիա տեղափոխուած ճիւղից էր։ Վերջապէս ներքին խռովութիւնները դադարեցին Պարսկաստանում։ Վռազգէսը ճանաչեց Վրկանաց (Հիւրկանիոս) աշխարհի անկախութիւնն եւ ձեռնարկեց Հայաստանին տիրելու գործին։ Հանդիսաւոր կերպիւ թագաւորը պսակեց Տիրիդատեսին, ազատանիներից բաղկացած զօրախմբով՝ որի հրամանատարն էր Մոնէզէս, եւ Ատրպատականի թագաւոր Մոնաբազոս Բ.-ի զօրքերով Տիրիդատէսը դուրս եկաւ Տիգրան Ե.-ի ղէմ, որ արշաւել էր ղէպի Ատրպատական, յետ մինչ նրան եւ պաշարեց Տիգրանակերտում։ Վռազգէսն ինքը պատերազմի դաշտը դուրս եկաւ, Մ՚ծրնում պատահեց նրան Կորբուլոնի մի դեսպանը, որի միջոցաւ զինադադար հաստատուեցաւ մի աւ ժամանակ, որի զօրութեամբ պարթեւները Տիգրանակերտի պաշարումն վերցրին եւ դեսպանները ուղարկեցին Ներոն կայսեր մօտ։ Զինադադարի գաղտնի յօդուածներից մէկն այն էր, որ հռոմէացիքը պիտի յետ կանչէին Հայաստանից Տիգրան Ե.-ին պաշտպանող հռոմէական զօրքերին։ Այս անապատաւորը զիջումն արաւ Կորբուլոնը այն պատճառով, որովհետեւ կրօնով եւ բարքով պարթեւներին աւելի մերձաւոր հայ ժողովուրդը միշտ պարթեւների կողմն էր հակում քան հռոմէական իշխանութեան հպատակութեամբ էր այն ժամանակ միայն, երբ այդ իշխանութեան նեցուկ էր լինում հռոմէական բանակը։

Տիգրան Ե. Թէպէտ Ներովդեան ցեղի առ հռոմէացին ունեցած ստրուկ հոգու տէրն էր, բայց դժ եւ նուաղ չունէր մի ապստամբ ժողովուրդ սանձելու։ Վռազգէսի խաղաղութեան պայմանները ընդունեցան Հռոմիում ուստի եւ սկսաւ յայտնի պատերազմ։

Հայաստան ուղարկած հռոմէական զօրքերի հրամանատար Ցէզէննիուս Պէտոս անզգուշաբար ցրուեց իւր դժերն եւ երբ վրանալի մէջ գտնուող Տիգրանակերտցին օգնութիւն էր կամենում հասցնել, յանկարծ Վռազգէսից եւ յետ քաշուեց (62)։ Պարթեւաց թագաւորը Տաւրոսի անցքերից դուրս եկաւ մի աւ մի չարդելով հռոմէացի պահապան գնդերն ու պաշարեց Արածանի հարաւային ափերում Ռանդէայի մօտ Ցէզէննիուս Պէտոսի բանակը. Պէտոսը ստիպուեցաւ անձնատուր լինել, որովհետեւ Կորբուլոնը դիտմամբ ուշացաւ Ասորիքից նորան օգնութեան հասնելու։ Հռոմէացիք ստիպուեցան դուրս գալ Հայաստանից եւ պարտուած զօրքը գնաց մի կամուրջ եւս շինեց Արածանու վրայ պարթեւների համար։ Կորբուլոնը աշխատել էր Եփրատի սահմանները պահպանել, մինչեւ իսկ ամրոցները էր կատուցել միւս ափին, թշնամու երկրում։ Մոնէզէս զօրավարի հետ տեղի ունեցած տեսակցութեան ժամանակ Կորբուլոնը համոզացնեց քանդել այդ ամրոցները, սրա փոխարէն պարթեւները խոստացան Հայաստանից դուրս գալ եւ ապահովել Ներոն կայսեր ուղարկուած դեսպանների բերելիք պատասխանին։ Հռոմիում վրճռեցին պատերազմն շարունակել եւ հրամանատար կարգեցին կրկին Կորբուլոնին։ Հասիւ անցել էր նա Եփրատն եւ Ծոփաց աշխարհն էր մտել, որ Վռազգէսի ու Տրդատի դեսպանները ընդառաջեցին եւ խաղաղութիւն առաջարկեցին։ Ռանդէայում Տիրիդատէսը տեսակցեց Կորբուլոնի հետ, ուր որոշուեցաւ, որ Տիրիդատէսը բոլոր բանակի գլխաւորը կայսեր պատկերի առաջ վայր դնէ իւր թագը եւ ապա Հռոմի ուղեւորուի նոյնը կայսրից առնելու համար։ Վռազգէսն ու Մոնէզէսն

եւս պատանդներ տուին իրենց այս խոստման կատարման երաշխաւորելով։ Տիրիդատեսի ուղեւորութիւնը տեւեց մինչեւ 66 թիւը, երբ նա Հռոմմում մեծ շուքով ընդունուեցաւ եւ Ներոն կայսեր ձեռքով Հայաստանի թագաւոր պսակուեցաւ։ Այս եղբն երկու կողմին եւս գոհացրեց, հռոմէացիք իրենց գերիշխանութիւնը հաստատեցին Հայաստանի վրայ, իսկ պարթեւները կարողացան իրենց թագաւորական ցեղի մի ճիւղը Հայաստանում թագաւորեցնել, որով պարթեւներն ունէի շահուեցան քան թէ հռոմէացիք։

(Շարունակելի)

Ն Ի Ն Թ Ե Ր

ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մովսէս Կաղանկատուացու Աղուանից Պատմ։ Ներկաթագիր (Ա. խումբ) օրինակից մի պակաս հատուած։

Նախորդ յօդուածով տեսանք, որ ներկաթագիր օրինակը 1676 թուականին Զաքարիա Սարկաւագ պատմագիրը նորոգել է եւ պատմութեան պակասը լրացրել՝ արտագրելով Թերին այլ ձեռագիր օրինակից։ Սակայն թէ Զաքարիան Աղուանից պատմութեան մէջ, (ներկաթագիր օրինակում), մի խոշոր հատուածի պակաս լինելը չի նկատել, որի վերայ եւ դարձնում ենք այժմ բանասէրների ուշադրութիւնը։

Ներկաթագիր օրինակում 1Բ (32) տետրը բաղկացած է տասն թերթից՝ մինչդեռ ամբողջ ձեռագրի տետրները՝ շատ քիչ բացառութեամբ՝ բաղկացած են տասներկու թերթից. այսպիսով 1Բ. տետրից պակասում է երկու թուղթ։ Ահա թէ ինչպէս։ Ձեռագրի էջ. 371բ. երեսը վերջանում է «ու տաճճանչ» բառով, իսկ էջ 372ա. սկսւում է «և կատարեալ գնաստա» խօսքերով։ Սոցանից առաջին թերթը Զաքարիան նշանակել է ՃՀԴ. թուականիով, իսկ Բ.-ը ՃՀԴ. թուով. ուրեմն նա երկաթագիր ձեռագիրը նորոգելու ժամանակ մէկը միւսի անմիջական շարունակութիւնն է համարել և թերի մասը չէ նկատել։ Այդ պակասն է ահա, որ տալիս ենք այժմ՝ առնելով երկրորդ խմբի պատկանող օրինակներից։

ՊԱՏՄ. ԱՂ. ԳԻՐՔ Գ. ԳԼ. Ի.

— «Յոկ յետ երից ամաց (834 թ.) բագրատ[1] ումն ամիրայ[2] նկատ հրամանաւ իշխանին Տաճկաց, որ ամիրմումնին[3] կոչի,[4] հասեալ[5] ի Նախճաւան քաղաք, անտ ըմբռնի[6] մանուկ մի Յոհան անուն ի ձեռս նորա, եւ սակս հաւատոցն որ ի Քրիստոս չարաչար տանջեալ նահատակի ի տուրք քառասունն[7] մերձ յաւր[8] սրբոյ պասեքին, որոյ նշխարքն լուսաճաճանչ[9] փայլմամբ[10] զթշնամիան հիացուցանէր,[11] զոր տեսեալ նոցա, անհետեցին ի գիշերի, և ոչ ոք դիտաց զնա ի քրիստոնէիցն, պահպանին իւրում միայն մնա յայսոնութեանն։[12]

Յոկ ի միւսում ամին (835 թ.) զաւուրս Յո. եղելոյ սատակիկ անձրեւաց, լցաւ ծայրալիր հոսմամբ գետն Կուր, մինչեւ ԺԵ, հրասխ

---

1. Բ. Բաղխ մի։ Ն. Բաղխայ։
2. ԲՆ. Ամրա։
3. ԲՆ. Ամիրմումնին։
4. ԲՆ. Կոչիւր։
5. ԲՆ. „յասեալ“. Նորա։
6. ԲՆ. ըմբռնեալ։
7. ԲՆ. Քառասներորդն։
8. Բ. օր։ Ն. յաւուրս։
9. Ներկաթագիր օրինակում սոյն վկայաբանութիւնը թերի է եւ վերջանում է «լուսաճաճանչ», ուր նոյնը եւ Մոսկուայի հրատարակութեան մէջ։
10. Բոլորագիր օրինակից ամբողջացնում ենք պակասը, իսկ նօտրագիր օրինակի տարբեր ընթերցուածները ծանօթութեանց մէջ։
11. Պարիսեան տպագրութեան մէջ՝ „փայլմամբ ասացուցանէր զթշնամին“։
12. Թէ ինչպէս է, որ Պարիսեան հրատարակութեան մէջ սոյն վկայաբանութեան վերջին կտորը „փայլմամբ.... մնայ յայտնութեան“ մտել է, իսկ մնացեալ պատմական մեծ հատուածը պակասում է, այս մասին մենք դժուարանում ենք որոշ բան ասել, քանի որ չունենալ հրատարակութեան ձեռագրերը ձեռքի տակ չունինք։

արտաքս ծովանալ ընդ եղեայն [15] իւր սահման. և անդուստ յաշխարհական ծովէն կասբից ելանէ վիշապ ձուկն մի անաբիլ նման լերինն, և զորսորդաց ձկունս յորովայն իւր ամպկը և անավաստակ ծնալ որսորդացն լինէր: Աստ ինն հնարեալ նաւորդացն, գումարեալք ի մի վայր, յօշեն զնա ի տանոյն կողմանէ սրով, մինչև սատակել նմա, և Կուբա տանել զնա ուստի եկն: Եւ ապա դիւրաւ լինէր որսորդացն դիւա ձկանցն, զի իբրև ի կապարանէ արձակեալ գային:

Ի նոյն ամի տէր Գաւիթ Հայոց կաթուղիկոս վաղճանեցաւ, և անէծ [41] զյաջորդսն [45] ի սրբոյն Գրիգորի հոգոյն, որք կին այսոքիկ: Աբգլմելք Ջահարայ որդի [46] սրով սատակիւբ: Եւ Աբգլա Սուրհարճոյ [47] որդի, և Արու Ջաւիր արաճացի, ածան ի պարսաւ և կենդանոյն սիկ հանին զերկոսեանն:

Եւ գիտութիւն իմն զայս ուսաք զԱմիրմամնոյ դարաբասին, թէ յաջակողմն գոտնն նսեմի շուրտայայ աւազն որ մեծ է, քան զայլսն գահճապետաց աւազ: Եւ ձախոյ կողմանէն, գաստաւորն և գանձու ամիրային, որք առնէին իրաւունս և գործերայց հարկաց վճարմունս: [48] Եւ յինն ժամ աւուրն մտանին առաջի, և զվաղորդայն աւուրն հրամանառնուն, և զմարդկան մատակարարին զօգտակարսն:

Իսկ յերկու ամ. Ձ.Ձ. թուոյն հայոց (837 թ.) ՌԺ. ան. (երկոտասան) Ո, հեծելոց յանկարծահաս եղեալ ի բախտաւոր [49] արշաւէն [50] երկիրս [51] Աղուանից: Անդ ակն [52] ի վերայ հարեալ Սահլի Սմբատեանն, որ յարքայից [53] զԱռաքելական տոհմէն էր, զորձակից իւր կալեալ զմեծ նահատակն Գէորգիոս, [54] զիմն ի վերայ որպէս արձակել խոյացեալ ի արկար Թոչունս, այսր անդր ցրուեալ տապաստ գաշատացն արկեալ վանէր: Եւ ի նոյն ամին, նոյն ՅԷրն Սահլի Սմբատեան, ձերբակալ առ բարեալ զտպստամբն բարան, զմարդախողխող աշխարհաւեր, [55] արիւնարբու գազանն, և նա ի ձեռս Ամիրմամնոյ, և ըստ [56] վաստակոցն առնու յարքունեացն իշխանութիւն զվերայ Հայոց Վրաց և Աղուանից, տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար: ա

Այլ յԲ.Ճ.ԶԺ, [57] Թուականին Հայոց [58] (838 թ.) Աբրահամ Ամիրամնին, գնաց [59] զօրու մեծաւ յաշխարհն հոռոմոց և էառ [60] զմեծ քաղաքն գնմորիայ, սրով և գերութեամբ: Եւ անտի դարձաւ ի բնակութիւն իւր, սա [61] է Աբուսահակն: [62]

Ի սոյն ամի տէրանց տէրն Յովաննէս, բ որ Հայոց Վրաց և Աղուանից եղեւ տէր, խնդրեցաւ յարքունեացն կրկին անգամ գիտուլսար,

---

ա. Հայր Ալիշան իւր օրինակից մէջ է բերում այս փոքրիկ հատուածը միայն. Սխալական 93 թ. երես 32 ծանօթութիւն Կաղանկատ. Գ. Ի. «Սահլի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բարան, զմարդախողխող աշխարհաւեր արիւնարբու գազանն, եւ ի ձեռս Ամիրմամնոյ, և ըստ վաստակոցն առնու յարքունեաց իշխանութիւն ի վերայ Հայոց Վրաց և Աղուանից, տիրել իշխանութեամբ ամենեցուն Արքայաբար»: Զարմանալի է, թէ ինչու յիշատակաց արժանի Հ. Կարապետ վարդապետ Շահնազարեանը իւր պարիսեան հրատարակութեան մէջ Հայր Ալիշանի օրինակից զանազան ընթերցուածները բերելով, այս պատմական նշանաւոր հատուածը մոռացութեան է տալիս:

բ. Մեզ թուում է, թէ նոյն այս Յովհաննէս իշխանն է, որ յիշուած է Արցախի Մեծարանց Սրբոյն Յակովբայ վանուց ամենահին արձանագրութեան մէջ: Այդ արձանագրութիւնը գտնուում է մի կոտրուած Խաչքարի պատուանդանի վերայ, որ

---

43. Ն. եղեայն:
44. Ն. յանէծ:
45. Ն. (զյաջիշտողն). պակասում է բ)
46. Ն. որ Նորին:
47. Ն. Սուրհարայ:
48. Ն. զճարմունս:
49. Ն. Բաղդադայ:
50. Ն. արշաւէն:
51. Ն. յերկիս:
52. Ն. ան:
53. Ն. որ յարքայից:
54. Ն. Գէորգիոս:
55. Ն. աշխարհաւերն:
56. Ն. ընդ:
57. Ն. ՄՁԺ:
58. Ն. „պակասի՝՝ հայոց:
59. Ն. գնաց:
60. Ն. առ:
61. Ն. Սայ:
62. Ն. ապուսահակն:

Յոյսս. Փառքս, երկյս այսօրիկ աշխարհայ։

Եւ այժմ առի եւ մատոյս ի Յագրաց կուսէ, զարմանալի մեծ քան զձնձղուկ և եկեր զման ինչ Ագուանից աշխարհիս։ [55]

Եւ յետ երկուց ամաց (840) դմնդակ եղեալ կարի [54] *ձմեռն կեղեալ հասոյց մահ աղնաանոց, և հովուապ բազմաց։*

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եկին հասին քաղաքականացիքն [55] *և արարին վշաս Սիսականոյ,* [56] *և Ամարաս գաւառաց։ Եւ եղ Նայխ անուանեալն Արումեաւ ի վերայ նոցա, և կոտորեաց զնոսա»։*

Յ. Վ.

վանքի նորոգութեան ժամանակ (ՈԿԱ- 1212) շարել են հարաւարևմտեան բրմի մէջ։ Արձանագրութիւնն է՝

«ՅԲ (853) ԹՈՒԱԿԱՆՈՒԹ. . .
ԵՆ ՀԱՑՈ Ի ԹԱՄԱՆԱԿՍ. [57] .
ՅՈՎԱՆԻՍԻ ԱՂՎԱՆ. [58] . . . .
ԻՇԽԱՆԻ ԵՒ ՍՈՂՈՄ. . . . .
(Մ)ՆՉ ԱՐԱՆՑ ԵՊՍԿ. . . .
ԿԱՆԳՆԵՑԻ ՋՍ. . . . . .»

Տեղեկութիւնք՝ սպիտակագոյն չէչքար. (Pumez, Ponce) արձանագրութեան երեսը մաշուած։ Մեծութիւն. բարձրութիւն՝ 7 վերշոկ. լայնութիւն՝ 11 վերշոկ և հաստոց՝ 5 վերշոկ։ Գրչութիւն՝ մեսրոպագիր տողք 6. տառք 4×2 հմ։ գետնից 2 արշին 6 վեր. բարձր։

55. Ն. աշխարհիս Աղուանից։
54. Ն. կարա։
55. Ն. Բաղասականացիքն։
56. Ն. Սիսան որոց։

---

26 ԱՊՐԻԼԻ.

Գալեան կարկաչուն վտակի ափին
Մ'ողորուած մոխով ես նստած էի
Եւ նայում էի պղտոր Ջրերին,
Պէսպէս ցաւերով տանջուած սիրտս ես։

Եւ փոսիջը ձեռիս քրքրում էի,
Ծաղիկներն մէկ մէկ Ջուրն էի ձգում,
Եւ պղտոր ալիք գալեան վտակի
Միշտ յառաջ էին անդարձ գլորում...

Եւ աչքս Ջրին ասում էի ես.
«Կեանք, դու էլ մէկ մէկ օրերս ինձանից
Խլում ես պղտոր այդ վտակի պէս.

Ինչպէս ծաղիկներն իմ փոքի միջից՝
Ընտանեաներս են անուշ երազներ —
Սիրտ իմ, դրանք էին, եւ դարձար ասիր»։

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԱԿԱՆ Է ՄՆՈՒՄ
ՀԱՑ
ՄԱՅՐԵՐԻՆ ԵՒ ՁԱԻԱԿՆԵՐԻՆ։

Շատ տարի առաջ ամերիկացի D-r Martin*–ը նկարագրելով չինացիների արևմտեան քաղաքակրթութեան մօտենալու ձգտումը, ի թիւս այլոց այս խօսքերն է ասել. «Չինաստանի մանուկները շատ դանդաղ են զարգանում մարմնապէս և հոգեպէս. առաջինն այն պատճառով, որ նոքա երկար ժամանակ մնում են պինդ բարուրուած, խանձարուրի մէջ փաթթուած, իսկ երկրորդն այն պատճառով, որ մայրերն ու դայեակները չեն կարողանում նրանց փոքրերին տէքթաթներ պատմել եւ երգեր երգել»։ Միայն գործնական ամերիկացին գիտէ, ինչպէս դերմանական առածն ասում է, մեխին՝ հէնց մէջ տեղը տալ, պատճառների պատճառի տուտը բռնել։*

Փոքր ինչ ուշի ուշով խորհեցէք, թէ ինչ է նշանակում այս խօսքը՝ «մանուկները հոգեպէս դանդաղ են զարգանում» որովհետև մայրերը չգիտեն հէքիաթ պատմել, երգ երգել», և ապա մտէք մեր տները . . . . Ո՞ւր է մեր առաջուայ պառաւ կանանց հոգեզուարճ լեզուն և կենդանաբար ձայնը, ո՞ւր է մեր մանկանց անբռնազբօս զուարթութիւնը, որոնց ամէն մի ձիտլու մէջ նոր բանականութիւն էր լուսանում. Թերևս գաւառներում տակաւին մի հնաք մնացած լինի, բայց մեր մեծ քաղաքները՝ Թիֆլիսը, Բաղուն կատարեալ ամայութիւն են ներկայացնում։

Ղեկչ մայրեր . . . . Անզգամութիւն կը լինի, եթէ վիրաւորենք ձեր անտարա մայրական սէրը դէպի ձեր սիրեցեալները։ Ընդհակառակն, մենք առաւելապէս խօսում ենք այն բազմաթիւ մայրերի մասին, որոնք իրանց քանուցրոս ժամից բոլոր ժամերը նուիրում են իրանց հոգու հատորին, չզլանալով և ոչ 24 րոպէ. որոնք իրանց զաւակի արթուն ժամանակ՝ նորա հետ կչկչում են անձանձիր, անդադար, ամէն հնարաւոր լեզուներով, իսկ նորա քնած ժամանակ՝ օրօրում ու երգում են ամէն եղանակներով, լսած, դիտեցած, ինքնահնար մեղեդիներով։—Բայց ի՞նչ է այդքան խօսածի և երգածի նիւթը. այն ժողովրդական բանաստեղծութիւնն չէ, որովհետև նորագոյն գրականական լեզուն՝ մեր կրթուած հասարակութիւնից ժողովրդական բանաստեղծութիւնը վռնտել է, որպէս անպատշաճ գեհկութիւն. և ոչ էլ դեղարուեստական բանաստեղծութիւն է, որովհետև չունինք (ի մի հաւաքած ցիր ու ցան եղածները). Իսկ մանուկը մեծանում է, կամայ կամայ, նա ոչ թէ մի օր, ոչ թէ մի շաբաթ, այլ ամիսներ և տարիներ մայրական գուրգուրանքների է կարօտ։ Եւ ահա մայրը իւր բոլոր հնարագիտութիւններով ու հանճարով պէտք է ձիդ թափէ ու սեղծէ ծախ, ծղրիտ, կենդանիների, ճիւաղական, երևոյթ, մեծի, հայելուն, վրացերէնն, թուրքերէնն, ռուսերէն ձայներ, կապով—անկապ, մի և նոյն է։ Բանի որ այսպիսի ձայները ինքը մանուկն է, կրկնում այս ամէնը անշուշտ անհրաժեշտ է ասել, որովհետև յայտնի է, թէ մանկական քաղցը թոթովանքի մէջ ոչխարի երաժշտական ձայներ կան, բայց երբ որ նոյն թոթովախօսութիւնը երկրորդում է իւր կապիտ կոկորդով և խրթնաձայն հնչիւններով հայրը, ծառան, հիւրը, ամենայն ըղձապատուոյ, երևակայեցէք, թէ ինչ վայրենի խառնաձայն է ձևանում մանուկի մէջ, թէ ինչ անտանելի երաժշտութեան է մատնուում նորա քնքոյշ լսողութիւնը։ Գերմանական պրոֆեսորը պետին է մանում երբ որ մի կէս ժամ լսում է ուսանողների ապրած կատուների Katzenmusik–ը, իսկ այս տեղ մանուկը շաբունակ պիտի վարժուի միայն այդպիսի ձայներին։ Բայց որովհետև մանուկի ականջը պրոֆեսորի ականջի չափ նրբաճաշակ չէ, նորան գոհացնում է ամենայն ձայն անխտիր, ուստի և անդադար ժպտում է և իւր թոթովանքով արձագանգ է տալիս։ Մ՚օր միակ լոյն էլ հէնց այս է լինում, ուստի և ոչինչ ձևաս չի նկատում իւր շուրջը և չի կարող

նկատել. նա ընդհակառակն իւր հնարագիտութիւնների վերայ աւելացնում է, նորերը և ոգեսպառ է լինում իւր ստեղծագործութիւններով, որպէս զի զաւակի ականջի զուսպանական նիւթը չպակասի: Այսպիսի ահագին հոգեկան գործունէութեան պահանջի դէմ շատ անգամ նա զգում է իւր անզօրութիւնը և երբեմն այնպէս անօգնական է գտնուում, որ իւր կեանքի կէսը կը տար, եթէ Ղրիմու կանանց պէս կարողանար լեզու դառնալ և իւր զաւակի 5՝ իսկ ապա 10 մատները այսպէս զուռլել.

Բուք կու գայ, բուք կու գայ,
Բուքի տակէն մուկ կու գայ,
Ելէք նայեցէք ո՞վ կու գայ.—
Խաչուկ ազան տուն կու գայ,
Ծոցէն վարդի հոտ կու գայ,

Պզտիկ պզտիկ տունիկը,
Աւլից պզտիկ կնիկը,
Ելաւ պզտիկ էրիկը,
Առաւ պզտիկ ըսակիկը,
Կնաց պզտիկ բազարը,
Բերից պզտիկ հացիկը,
Տուից պզտիկ կնկանը,
Դրից պզտիկ գօլապը,
Կերաւ պզտիկ մուկիկը,
Ալ չմնաց հացիկը:

Ոսկ թէ երբեմն մայրն ինչպէս անձար է լինում բայց և լռել չի կարողանում, ապացոյցն այն է, որ եթէ յանկարծ մի կատու ներս մանէ, հանգամանքից օգուտ քաղելով, անմիջապէս այսպիսի երգ կը կապէ.

Փիսիկ, փիսիկ, փիսիկ, փի..ֆս,
Փիսիկ, փիսիկ, փիսիկ, փի..ֆս,
Հափսա, փիսօ, փիսիկ, փի..ֆս,
Կորչի փիսօն, գող կատուն:

Ահա այս օրինակից հասկացէք, թէ մայրը իրօք պատճառ ունի Ղրիմու կանանց նախանձելու, և թէ այսպիսի դէպքերում արդէօ ժողովուրդն աւելի յարմարութիւններով է օժտուած, քան կրթեալ բարձր դասը:

Նա մեր կանայք զգացել են այս պակասութիւնը, նոքա զանազան միջոցներ են գործ դրել այսպիսի անել զրուիչներից դուրս գալու համար: Յայտնի է, որ այդպիսի ապիւ ձգտմամբ ոմանք թարգմանել տուին ռուսերէն և գեր-

մաներէն մանկական երգեր, որ և բերնէբերան անցնելով, մուտք գտան ամենայն տան մէջ: Յայտնի է, որ Պատկանեանի, Աղայեանի «Մայրենի լեզուի» երգերը ինչպէս ամենուրեք տարածուեցան: Յայտնի է, որ մի ժամանակ նորաստիրութիւն էր գարձել տներում հրաւիրել կրթուած վարժուհիներ: Բայց թէ այս միջոցները որքան անբաւարար հանդիսացան և թէ տակաւին շատ բան կայ անելու, սկսանենք վերջին հանգամանքի քննութիւնից: Քիչ չէք գտնի բարձր զարդացած ծնողներ, որոնք մեծ նշանակութիւն տալով ժողովրդական տարրին, իրանց զաւակի համար նախ և առաջ հրաւիրում են պատաւ հայ-քրիստոնեայ ապահին: Սա ինչ որ աւանդութեամբ սովորել է և գիտէ, այն էլ պրուցում է երեխաներին: Բայց ծնողները շուտով նկատում են, որ ապահինն այնու ամենայնիւ մի տգէտ արարած է, իւր պատմութիւնների և հէքիաթների մէջ լիքն են նախապաշարումներ, անհամ խրատներ, կասկածելի բարոյականութիւն, սատանաների գործեր: Ուստի ծնողները սորան հեռացնում են և փոխարէնը բերում են մի կրթուած վարժուհի: Հիմա այսպիսի նոր կարգով անուած 3 տարեկան երեխան, իւր շնորհքի երեխայրիքը ցոյց տալու համար, գալիս է և ծնողների առաջ արտասանում է գատարկ կարասի ձայներ.

Արի գնանք Շաւարշան,
Որ տեղ ընկաւ քաջ Վարդան, —

և խեղճ ծնողները, շուարած իրար երեսի են նայում, կարծես թէ ասել ուզենալով. «Էլի Աստուած բարի տայ էն պառաւ կնկան. նորա խօսքերի մէջ գոնէ բնական զգացմունք կար, ճշմարտութիւն կար, հոգի և կենդանութիւն կար»:

Ոսկ թէ թարգմանած մանկական երգերը և մեր բանաստեղծների ինքնագիրները միշտ ուղիղ հանգն ու մանգը չեն գտնում, թէ նոքա շատ անգամ մանկական և բանաստեղծական աղից զուրկ են լինում, համեմատութեան համար վեր առնենք մի ժողովրդական բանաստեղծութիւն և իւր վարիանտը (այլ ընթերցուածը), որպէս զի տեսնենք, թէ ինչպէս երկու քայլ հետաւորութեամբ երգող

կանայք՝ մի մի ինքնուրոյն երգասաց աշուղ են դառնում, մինչեւ մեր բանասաեղծները այդ չափով ոգեւորուել չեն կարողանում.

Յոր ի մ՝.	*Նոր—Նախ.*
Ձի՛ւ, ձի՛ւ, հաւ ձիւ,	Հաւ ձիւ, ձիւ, ձիւ,
Հաւը էլաւ երթիկը,	Հաւն էլաւ թառի վերայ,
Ներաւ մեղը ու կարագը,	Մէկ կոշ մը հաւող կերաւ,
Գանակ գանակ կանչեցին,	Հարթեցաւ վար ընկաւ,
Աղանց գանակ մորթեցին,	Գանակ գանակ կանչեցին,
Փատէ գանկով քերթեցին,	Փաս – գանակով մորթեցին,
Ջո՛ւռ արաւ պապին երթիկը:	Փետուր վրան ծածկեցին,
	Ջո՛ւռաւ պապին երթիկը:

«Ուսանալ վարժուհին» այս խաղը յանձնարարելի կանուանէ եւ սորանից աւելի կը գնահատէ «Աղի գնանք Շաւարշան»-ը: Արդարեւ այս տեղ խելօք «տրամաբանութիւն» չկայ, բայց եւ այնպէս ամենայն կարդացող կասէ, թէ մէջը մի ինչ որ գրաւիչ բան կայ ... կենդանի շարժուձի զգացումն խաղութիւն կայ, մի ինքնագիտակցութիւն կայ, որ գժուար է «տրամաբանօրէն» ըմբռնել: Սակայն երեւակայեցէք, որ սա մի խաղ է ներկայացնում: չորս, վեց կամ ութ ձեռքերից իւրաքանչիւրը հինգ մատով պիտի բռնել է միւս ձեռքի երեսի կաշին, եւ այդպէս կազմուել է մի երկար կախան. «ձիւ, ձիւ» ասելու հետ միասին այդ կախանը վեր ու վայր է շարժուում, հետզհետէ աւելի արագութեամբ. հէնց որ հաւը սկսում է «պապիին» մեղր ու կարագը ուտել (կամ հաւող ուտել եւ հարբել), իսկոյն ամեն կողմից «գանակ, գանակ» են կանչում, բայց գանակի գալուն սպասել չկարողանալով՝ անգանակ են մորթում, փայտի գանակով են քերթում: Եւ այս երկիւղից ապա ամենքը «ջռռ» են անում, կախուած ձեռքերը իրար խոզնելով, թռչում ցրուում են ամեն կողմերը:—Մինչ ձեր զգացումը չի՞ ասում, թէ այս ոտանաւորի մէջ երկու մաս կայ. մինը խաղացող երեխայոց համար, միւսը՝ խաղացընող մեր համար: Երեխայոց մասն է ականջին դպնող եւ խաղող ձայները. «ձիւ, ձիւ,—հաւ, հաւ,—գանակ, գանակ,—կանչեցին, մորթեցին, քերթեցին,—ջռռ»: Իսկ մեր մասն է աշխուժացնող, խաղին հոգի եւ կենդանութիւն տալու հրաւիրող յորդորակը, որ շատոյտով «գանակ գանակ» է կանչում, շատոյտով «մորթում է, շատոյտով «քերթում է, եւ ամենքին «ջռռ» անել է տալիս:

Նոյն խորհրդով հետեւեալ ոտանաւորը երեխայի ականջին թմբկահարում է «տըմբըլ—տըմբելիներով» եւ Յսէ-Յօհաննէս, Նիկողոս, աէր-Պօղոս, Քոռ-Փանոս եւ Զըմբըլ Թորոս շատ սիրուն հանող ծիծաղաշարժ անուններով. իսկ մեր աշխոյժը եւ խնդութիւնը բորբոքելու համար՝ նկարագրում է հարսանիքի մանրամասնութիւնները: Յետոյ էլ այն է, որ մայրը երեխային վեր ու վեր թռցնէ.

— Ասօր ձեզի ոմ էկաւ,
— Տըմբըլիկին պապուկը,
Տըմպըլ տըմպըլ չալեցին,
Տըմպըլիկին խաղցուցին.
Հացն ու դինին, պատուրմանն,
Հաւի միսն ալ հազիր կան,
Հարսի անունը Խէ-Խօրող,
Փեսին անունը Նիկողոս.
Առին տարին սուրբ Նիկողոս,
Պսակողն էր տէր-Պօղոս,
Կնքահարն էր Քոռ-Փանոս,
Տաւուշէն էր Զըմբըլ-Թորոս,
Տըմպըլ տըմպըլ չալեցին,
Տըմպըլիկին խաղցուցին,
Վերջը մեյնակ ճամբեցին,

Հիմա այդ ժողովրդական բանաստեղծութեան դէմ՝ կարդացէք հետեւեալ «խելօք» եւ «բարեվայելուչ» արուեստական կանգունաչափ ոտանաւորը եւ տեսէք, թէ արդեօք կը գտնէք մէջը այն զուգընթաց բաժիններըը, որով մօր եւ երեխայի զուարճութիւնը լրիւ փոխադարձաբար աւելի աշխուժացնող լինէին: Ահա մի ամբողջ «կենդանական թագաւորութիւն», բայց որ տեղ մի հաւի-ձիւի չափ թռչուն կամ կենդանութիւն եւ շարժուն չկայ, իսկ արձակ ծանրութեամբ խրատ՝ որչափ ուզենաս.

Երբ որ ծագեցաւ պայծառ արեգակ,
Ափրաս առաւիս հաւ ու ծիծեռնակ,
Չի՛ւ ուիսաս գառնուկ այծ ուր հորթ ու կով՝
Գնացին իրանց գործին շտապով,
Միայն ծոյլ տղան չի գնաց դպրոց,
Փիլքը շպտեց ու փախաւ փողոց.
Իրիկուն ամենքն յետ դարձան ուրախ,
Միայն տղան էր տրտում դլխակախ.

Դամ նայեցէք հետեւեալ բարեկիրթ շար-

ժուռնալին և իմացէք թէ, ինչ սառնութիւն պէտք է շնչէ խաղալու եռանդի վերայ.

— Ա՛յ խոտ հարող, ասա տեսնենք,
Դու ինչպէս ես խոտ հարում:
— Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ խոտ հարում:

Ուշադրութիւն դարձրէք, թէ ինչպէս ժողովրդական բանաստեղծութիւնը միշտ կրճատական, յատուկ բառեր և խօսքեր է ընտրում իմաստները արտայայտելու համար, իսկ արուեստականը, վանկերն ու ոտքը լրացնելու համար, ճանապարհին իմաստի կէսը կորցնում է, և մնացածը շաղ է տալիս.

Ժողով. Բ.	Արուեստ. Բ.
Առանց մազի կը մազոտիմ,	Անձրև, անձրև, ցած սրի,
Հողին հետը կը չաղուխիմ,	Բուսցուր ցորեն ու գարի,
Դեանին տակը կը թաղուխիմ,	Բուսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Մասին բուսին կու տամ աճ,	Աւելի փոչի, մաքրէ օդ,
Սև հողը կը ներկեմ կանաչ:	

Յակ ընդհակառակ, ինչպէս հիանալի է, երբ որ արուեստական բանաստեղծութիւնը իմաստութեամբ օգտուում է ժողովրդական՝ ով դիտէ, որ բեկորներից.

Ժողովր. Բ.	Արուեստ. Բ.
Արեգակ, արեգակ, դուրս արի,	Արև, արև, արի դուրս,
Հէրն ու մերդ եկել են,	Փեղկի բերինք աչքի լոյս,
Յակէ բլիթ բերել են,	Գու գալիկդ՝ լուսնկան,
Պատի ծակը կոխել են,	Բերից չամիչ մէկ աման,
Մուկն եկել է, տարել է,	Ամպը եկաւ, մեզ տար,
Կատուն եանէն վազել է,	Չամիչը աչքիս կորաւ,
Գոմշի ոտը կոխել է,	Բաց երեսդ, արեգակ,
Ադամանը վիթել է:	Ամպ չամիչ փէշ կու տանք ...
	Օ՛ֆ, արևին խաբեցինք,
Ոչխ. ընթերցուած.	Ամպն տակէն հանեցինք:
Արև, արև, դուրս արի,	
Հէրն ու մերդ եկել ա,	
Թուր ու թոռանք բերել ա,	
Դուան տակին թաղել ա,	

Քիչ վեր դնանք և աւելի բարձր հասակի բանաստեղծութեան դառնանք. այնտեղ էլ ժողովրդական բանաստեղծութիւնը սիրում է կրկնակի ընթացք տալ ամբողջ հատածին, բայց այնպէս որ դատ դատ կարծուած իմաստները՝ ներքին առընչութեամբ դեղարուեստօրէն իրար հետ կապում է, որի լաւ օրինակ է «Ջան դիւլում»-ը: Առաջին երկու տողերում կարծես թէ, «Ջան դիւլում»-ը մի անտարբեր բանի վերայ է խօսում.

Գետ ա գնում լափ տալով, | Քարի տակին վար կանեմ,
Ջուխտ ընձորը ծափ տալով... | Սև ակռաւին քար կանեմ...

Իմ աղպերը սարին ա,
Շուրն թևքի կարին ա...

Եւ այսպէս մեզ «սար ու ձոր» մանածեւլուց յետոյ՝ յանկարծ խօսքին անակնկալի վերջաւորութիւն է տալիս.

Գետ ա գնում լափ տալով, | Քարի տակին վար կանեմ,
Ջուխտ ընձորը ծափ տալով, | Սև ակռաւին քար կանեմ,
Ա՛հ հրէս եկաւ իմ աղպէրը, | Իմ սիրածը ինձ տուէք, —
Ալ գտակը թափ տալով, | Գժութիւնս թարգ կանեմ:

Իմ աղպերը սարին ա,
Շուրն թևքի կարին ա,
Աղպէր, աղպէր, չոփիդ փչիր,
Գու քիրը Դեանչու սարին ա:

Այս տների դէմ մենք արուեստական բանաստեղծութեան օրինակներ չենք բերի, միայն կը հարցնենք, թէ մեր մեծահատոր վիպերից քանիսը կարող են՝ իրանց բազմաթիւ էջերով՝ այնքան ոյժ և ղօրութիւն արտայայտել, ինչ որ հետեւեալ չորստողանի տուէրը իր մէջ ամփոփում է, ուր ձեր առաջ կենդանի նկարագրուում է մի նոր Պլէոպատրա.

Կաքաւը կաղնեց քարին,
Կատուցը լիքը արին.
Մէկ գաստա վարդ եմ քաղել,
Տարէք իմ թազա եարին:

Այժմ դառնանք մեր առաջուայ խնդրին: Եթէ մեր նորագոյն դրականութիւնը, այսպէս աննկատելի կերպով՝ մեր ընտանիքի դործածութիւնից դուրս հանեց հարազատ, քաղցր, ուրախ, բազմազեղուն և ջղագինդ բանաստեղծութիւնը,—միթէ տեղն էլ ոչինչ չպիտք է դնէ: Ձմռանանք D-r Martin-ի խօսքերը չինացիների յետագիմութեան մասին: Մեր մայրերը և դայեակները ծարաւի են ճնայցել. միթէ նոցա պապակը չպիտք է, կարուի: «Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր յուրաց, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ վարձս իւր»:

Խօսք չկայ, որ անցեալին պատնակ և

կրկին պատասխանելին հրատարակել՝ էլ չենք կարող. ներկան անմխիթար է. պէտք է մտածել վաղուան համար: Մեր մայրերը և զաւակները մեր գարուն զրահանութեան զոչում են.

Բիւլբիւլն եկաւ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.
Էլ ո՞վ ա որ զարդ չունի —
Ո՞ւր ես գալի, այ գարուն,

Ահա մեր առաջարկութիւնը: Պէտք է մեր մայրերի համար զիրք ստեղծել: Այս և այն տեղ ցիր ու ցան եղած ժողովրդական և արուեստական բանաստեղծութիւնից պէտք է պատմելու և երգելու նիւթեր ժողովել՝ մանկանց զանազան հասակին յարմարաւոր դասաւորութեամբ: Ընտրութիւնը շատ զգուշաւոր պիտի լինի. սկզբունք պէտք է դրուի հարազատ բանաստեղծութիւնը, իսկ «խելօքութիւնն» ու «վայելչականութիւնը» նեղ մտքով չպէտք է հասկանալ: Պէտք է առաջնորդուիլ ազգային և հոգեբանական ճշմարտութեամբ: Յամբաղրութիւնը կարող ձեռքի պէտք է յանձնուի: Տպագրութեան ձոխութիւնը ոչինչ չպէտք է խնայել, լաւ պատկերներով զարդարած լինի, հայկական եղանակների խազերը ուենեայ (բայց ոչ այնպէս տպէտ ձեռքով կազմած, ինչպէս որ Գամառ-Քաթիպայի մանկական ոտանաւորների խազերն էին): Ոսկ մեր բանաստեղծները թող փոքր ծառայութիւն չհամարեն, եթէ ուզենան այս ճիւղի գրականութիւնը ճոխացնել, ինչպէս որ պ. Յ. Յովհաննիսեանը զարմանալի յաջողութեամբ փորձեց, «Արարատ»-ի անցեալ համարում «Նոր գարուն»-ը տպագրելով, որի մէկ տունը վերև առաջ բերինք (Բիւլբիւլն եկաւ ...):

Հրատարակիչներին, մարդասէր ազգայիններին, և մանաւանդ յառաջադիմութիւն սիրող կանանց ուշադրութիւնն այս լուրջ խնդրի վերայ, յիշեցնելով թէ «Ով որ արբուսցէ միւսի ի փոքրիկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ, ամէն ասեմ՝ ձեզ, ոչ կորուսցէ վարձս իւր»:

Այս յօդուածը վերջացած էր, երբ որ Տիկին Ս. Քարամեանցը՝ իւրեն յատուկ բարեսիրութեամբ՝ յանձնեց մեզ հետևեալ պզտիկ բանաստեղծութիւնը, որ նա տեղն ու տեղը գրի է առել, նոյն իսկ բանաստեղծուհի հայ աշուղ կնոջից լսելով, որ և մենք յարմար գտանելիք, որպես յաւելուած, այս տեղ առաջ բերել:

Ոտանաւորի բովանդակութիւնը հասկանալու համար, բաւական համարուի հետևեալ ծանօթութիւնը: Մարգարա գիւղի մօտ Ելասխի վերայ այժմ վերջացնում են մի փառաւոր կամուրջի շինութիւնը, ուր առաջ բանում էր լաստը (գետամ, լոդկա, գոմիկ, ձրագ, բայդաղ): Սիմինդ—ցեմենտ, Սէֆիլ—երևի տաճիկ գետամշու անունը, դուրդուշուն—արձիճ, Վրացկը—Թիֆլիսից եկած վարպետները, բարից քեօմուրը—քարածուխ, Թելինկա—ինքը բանաստեղծուհին:*

Ճշմարիտ է գիւանը,
Հաստատաւ կարմինջի բանը.
Փափագին եկաւ իշխանը.
Գովամ նորաշէն կարմունջը,

Արագին կապեցին կարմունջը,
Թափեցին քրտինք ու արուն,
Տէրիցն է էս կարգ ու կանուն.
Գովամ նորաշէն կամուրջը,

Թիֆլիսու եկան ուստէքը,
Ուղիղ է էս աշխատանքը,
Բացուաւ քասիբների հանքը.
Գովամ նորաշէն կամուրջը,

Զարխով են քաշում վարպետները,
Կանչում են սուրբ Հայրապետները,
Կընդունին գաւառապետները.
Գովամ նորաշէն կամուրջը,

Փոս փորին, սիմինդ լցին,
Գետամ ու լոդկէն գործից քցին,
Գոմիկի ճրագն անցրին.
Գովամ նորաշէն կամուրջը,

Կարմունջ շինին չուգունից,
Սէֆիլ գետամշուն քցին բանից,
Լոդկին գուրս արին գիւանից.
Գովամ նորաշէն կամուրջը,

Կարմունջ փորմով գալեցին,
Գոմիկի դուռը փակեցին,
Բայդաղը կորից թևքեցին.
Գովամ նորաշէն կամուրջը,

Գալիրեցին զուրզուշունով,
Կեցցէն վրացիք գուժինով,

---

* *Սէֆիլ՝ տաճկերէն նշանակում է խեղճ, անօգնական:* Ծ. Խ.

Կընդնի գօրք գօշունով.
Գովամ Նորաշէն կամուրջը։

Կարմունջը Թամաշի նախշին,
Ձաղերը ոսկով քաշին,
Պատմութիւն երգով ասին.
Գովամ Նորաշէն կամուրջը։

Կարմունջ, դու ազա, իշխանաւոր,
Կարմունջների մեծ Թագաւոր,
Շատ մարգիկ փափագաւոր.
Գովամ Նորաշէն կամուրջը։

Կարմունջ, բարձր ճաղերով,
Թևդինկէն գովաց խաղերով,
Թամաշա Թափան գեղերով.
Գովամ Նորաշէն կամուրջը։

Փահլէք գիտեն չարն ու բարին,
Քարից քեօմուր վառին,
Կարմունջը շօշին յարմարին.
Գովամ Նորաշէն կարմունջը։

Հունարով է ուստա Նաշան,
Ջուխտ վանոն իրարու բաշին,
Կարմունջը զալամով քաշին.
Գովամ Նորաշէն կարմունջը։

Գլուխ կը բերին նոր տարուն,
Կօճն գարնան բերք ու բարին,
Մուրազ է խեղճ զարիբներուն.
Գովամ Նորաշէն կարմունջը։

Թևդինկէն խաղում է երգով,
Յոյս ու միաք Աստուծոյ փառքով,
Գովանք հայոց վարքով.
Գովամ Նորաշէն կարմունջը։

Այս ոտանաւորի մէջ պարզ նշմարուում է արուեստական բանաստեղծութեան ազդեցութիւնը։ Յանգերը բուն ժողովրդական չին, այլ աւելի հոդուածք յանգեր չեն, այսինքն ամբողջ բառերի գեղեցկայանգութիւն չեն կազմում (ինչպէս որ ուրիշ օրինակում տեսանք հետևեալ կերպով վարդ չունի, զարդ չունի, դարդ չունի), այլ աւելի հոդուական վերջին վանկով են կազմուում—ով, ով, ով (երգով, փառքով, վարքով)։ Բայց դարձեալ այնքան ժողովրդական կերպարանք ունին, որ յանգը պահպանում են մի քանի վանկով և ոչ թէ միայն մէկ ամբաստ վանկով, ինչպէս որ արուեստական բանաստեղծութեան սովորութիւն է (գոր օր. այն տեղ կարդում ենք. պիտանիս...չի բանը, իշխանը, կամ ի—ա—ի)։

Այս ոտանաւորը չէ նմանապէս և ոչ գեղարուեստական ստեղծագործութիւն, ուր ոտանաւորի երկարութիւնը չի համապատասխանում իմաստի չնչինութեան և զուրկ է լաւագոյն ժողովրդական բանաստեղծութեան կարճ, հատուն, պատկերաւոր գարձուածքներից։ Մէջը զգայունքը մի անգամից չի արտայայտուում այլ կաոր կաոր, ուստի և կրկնութիւններով լիքն է։

Մի խօսքով գործը անտաղանդ և տգէտ կնոջ գործ է։ Սակայն հէնց ուշադրութեան արժանի հանգամանքն այս է, թէ ինչպէս կանայք—գիւղուհիների և հարբրբանների աշխարհում (Կողբ, Դգղիր, Մարգարա) երգերով անուանած տգէտ և հասարակ կինը՝ ազատ կազմակերպում է բնութեան ազդած տպաւորութիւնները բանաստեղծօրէն արտայայտել։ Թէ ինչպէս տիպասաղով անցեալը (լաստը) և ապանչանալով նորով (կամրջով) չի կարողանում ազատուիլ այսպիսի երկու ընդդիմակ զգացումներից, որ և արտայայտում է խղճալով յոյս ու միաք Աստուծոյ փառքով և գովելով հայոց վարքով։

Այս առակի ձնացած խրատը՝ Թողնում ենք ընթերցողի խորհրդածութեան։

Ս. Մ.

ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ ԴՐԱՑՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ.

Մենք խոստացել էր ենք միայն այն գիտութեան, որ սերնդական աշխատութեամբ ենք վաստակել, որովհետև միայն դրանք են մնայուն եւ կենդանի տպաւորութիւններ։

Ս. Սմայլս.

Ներկայումս գոյութիւն ունեցող դպրոցներն իրանց լայն հանրագիտական ծրագրներով չեն կարողանում զարթեցնել սաների մէջ հոգւոյ գործնական ոյժ. նրանք առաջ են բերում բազմաթիւ երիտասարդ մարդիկ, որոնց վրայով դպրոցական իմաստութիւնն անցել է մրրիկի նման, թողնելով նոցա մէջ միայն կործանման հետքեր։ Այդ հանգամանքը առաջ է բերել մի նոր ձգտում. այն է՝ սահմանել կրթութեան բուն նպատակին հասնելու համար մի նոր սիստեմ, տարրեր պաշտօնական դպրոցում ընդունուածից, այսինքն ինքնուրոյն աշխատութեան սիստեմ, առանց ուրիշի միջամտութեան, առանց ստիպման և վարձատրութեան,

Յայտնի է, որ պատանիները դպրոցում երկար տարիներ տանջուելուց յետոյ դուրս են գալիս այն տեղից և նոր զգում, որ իւրանց գիտութեանց առանձին մասերը անհրաժեշտ է կապակցել և թերին՝ լրացնել ընթերցանութեան միջոցով։ Նոյն միջոցին են դիմում նաև շատերը, որոնք զանազան պատճառներով հնարաւորութիւն չեն ունեցել օգտուելու դպրոցի բարիքից։ Այդպիսիների մէջ ընթերցանութեան սէր կարող են զարթեցնել և միջոց տալ միայն ժողովրդական գրադարանները և մի քանի այլ հաստատութիւններ։

Ամերիկան շատ վաղուց արդէն ունի մի հաստատութիւն, որի նպատակն է որոշ ուղղութիւն տալ ինքնակրթութեան ձգտող մարդկանց ինքնուրոյն պարապմունքներին, չզրկելով նրանց առօրեայ աշխատանքից, որով հայթայթում են իրանց ապրուստը։ Մեր խօսքը Ամերիկայի Chautauqua (Շօտօքօ) կոչուած ժողովրդական հաստատութեան մասին է, որ կատարելապէս համապատասխան է այդ երկրի պահանջներին, մի երկրի՝ որի բնակիչները պատմական հանգամանքների շնորհիւ անկախութիւն և ինքնուրոյնութիւն ունին ոչ միայն ապրուստի միջոցներ հայթայթելու, այլ և գիտութիւններ ձեռք բերելու ընդհանուր տուանց ժամանակ և փող կորցնելու ուսում ստանալու համար։

Անօգուտ չենք համարում մեր ընթերցողներին մի գաղափար տալ այդ հաստատութեան կազմակերպութեան մասին։

Chautauqua-ն զանազան ժամանակներում հիմնուած երեք հաստատութեան մի ընդհանուր անունն է և որ ներկայումս կազմում է մի ամբողջութիւն։ Այդ երեք հաստատութիւններն են՝ գրականական—գիտնական ընկերութիւն, Կօլլեժ և ամառային համալսարան։

1) Գրականական—գիտնական ընկերութեան նպատակն է սիստեմատիկաբար իրանց կրթութիւնը լրացնել ցանկացողներին ղեկավարել, դիւրացնելով գրքերի ընտրութիւնը, ուղարկելով իւրաքանչիւր անդամին, որտեղ էլ որ լինի, գրքերի ցուցակ, երբեմն և ամբողջ տարուայ ընթերցանութեան համար գրքեր։ Ամբողջ ծրագիրը պէտք է լրանայ 4 տարուայ ընթացքում, իւրաքանչիւր տարի պարապելով 9 ամիս, օրական մի—մի ժամ պարապելու պայմանով։ Այդ քառամեայ դասընթացքի իւրաքանչիւր տարին ունի իւր մասնաւոր անունը։

Այսպէս առաջին տարին կոչում Անգլիական, որովհետև այդ ուսումնական տարում անցնում են Անգլիայի պատմութիւնը և գրականութիւնը, վերածնութեան շրջանի և նորագոյն ժամանակի գեղարուեստի պատմութիւն, նոր պատմութիւն և երկրաբանութիւն։ Երկրորդ տարին անուանւում է «Ամերիկական», որի ժամանակ անցնում են Ամերիկայի պատմութիւն և Ամերիկական գրականութիւն, պետական և միջազգային իրաւունք, ընկերաբանութիւն (sociologie) և բնախօսութիւն։ Երրորդ տարին կոչուում է «Յունական», որովհետև ուսանողը այդ տարուայ ընթացքում ծանօթանում է յունաց պատմութեան, գրականութեան, հին յոյների սովորութիւնների հետ։ Վերջապէս չորրորդ՝ «Հռոմէական» տարին սովորում են Հռոմի և միջին դարերի պատմութիւնը, լատինական գրականութիւն, Հռոմէական և միջնադարեան արուեստի պատմութիւն և քաղաքատնտեսութիւն։ Իւրաքանչիւր ուսումնական տարուայ վերջին ընկերութիւնն ուղարկում է իւր անդամներին մի շարք գրաւոր հարցեր, որոնցով որոշելու են նրանց պարապմանն չափը։ Գրաւոր պատասխանները կարող են հիմք ծառայել ապագայ վերջնական քննութեանց պատրաստելու և եթէ անդամների մէջ ցանկացողներ լինեն քննութիւն տալու, նրանք կստանան այդ իրաւունքը կամ և ոչ, նայելով նրանց գրաւոր պատասխաններին։ Ցաջող քննութիւն տուողը ստանում է վկայական, որ սակայն ոչ մի արտօնութիւն չի տալիս ուսանողին և միայն ծառայում է իբրև վկայութիւն ինքնուսի լուրջ և յաջող պարապմանց մասին։

Վերջնական քննութեան ժամանակ ուսանողը պարտաւոր է պատասխանել մինչև 30 հարցի։ Սովորաբար այս տեսակ հարցեր են լինում։ Ի՞նչ ներգործութիւն է ունեցել Բրիտանիայի աշխարհագրական դիրքը նորա բնակիչների բնաւորութեան վերայ։ Գրել գերմանական կայսրութեան մէջ տեղի ունեցած յեղափոխութիւնների պատմութիւնը։ Ո՞րոնք են Վենետիկի նկարչական դպրոցի բնորոշ գծերը և ո՞վքեր են այդ դպրոցի գլխաւոր ներկայացուցիչները և այլն։ Ցիշեալ հարցերին պատասխանելու համար թոյլատրվի է օգտուել աղբիւրներից, ծայրահեղ դէպքերում միայն հարցերի պատասխանները պէտք է անպատճառ աշակերտի կողմից ինքնուրոյնաբար կազմուած լինին։

Գրականական—գիտնական ընկերութեան կազմակերպութիւնը ամենահինն է այն համանման հիմնարկութիւնների մէջ, որոնք միացած կազմում են Chautauqua հասարակութիւնը։ Նա կազմակերպուել է 1878-ին։ Սոյն հիմնարկութեան մէջ պարապմունքների բացման օրից մինչև այժմ պարապել են մօտ 225 000 հոգի, իբաց առեալ ոչ պաշտօնապէս անդամ ճանաչուած ուսանողները։ Վերջնական քննութեան ենթարկուողների և վկայական ստացողների միջին թիւը հասնում մօտաւորապէս 35 153-ի։ Երբեմն Chautauqua հաստատութեան ուսանողները միանում են և կազմում առանձին փոքր ընկերութիւններ. օր. «փոխադարձ օգնութեան ընկերութիւն», որի անդամների թիւը ընկերութեան գոյութեան սկզբից մինչև այժմ հասնում է 1 000-ի, ներկայումս գոյութիւն ունին 800 այդպիսի գործող շրջաններ։

1882 թուին այդ ուսանողների 8,246 հոգուց 10 % կազմում էին 20 տարեկ., փոքր հասակ ունեցողները՝ 46 %, 20-ից—30 տար.՝ 28 %, 30-ից—40 տար.՝ և քառասուն տարեկանից մեծ հասակ ունեցողները կազմում են միայն 15 %։ Ինքնակրթութեան ձգտում ունեցողների մեծամասնութիւնը կազմում էին 20-ից աւելի հասակ ունեցողները, որոնք աւելի տոկուն են և աւելի են ջանք գործ դնում նպատակին հասնելու, քան միւսները. որպես ապացոյց կարելի է առաջ բերել վերջնական քննութեան ենթարկուողների և վկայական ստացողների հաշիւը։ Մինչև 20 տ. հասակը վերջնական քննութեան են ենթարկուել 11 %, 20—30 տ. 37 %, 30—40 տ. 33 ½ %, իսկ 40-ից բարձրը կազմում են 28 %։

2) Կօլլէժ (հիմնուած է 1885 թ.) անուանուած հաստատութիւնը յարաբերութիւն է ունենում ցանկացողների հետ իւր յատուկ ձեռնարկների միջոցաւ։ Ցանկացողները կարող են նրանից ստանալ այն ծրագիրը, որ պարունակում է իւր մէջ համարեա բոլոր միջնակարգ և բարձրագոյն կրթութեան առարկաները՝ մանաւանդ գիտական դասընթացներով՝ լատիներէն, ֆրանսերէն, գերմաներէն և անգլերէն լեզուներից, մաթեմատիկայից, հոգեբանութիւնից, քաղաքական-տնտեսութիւնից, պատմութիւնից, ֆիզիկայից, կենսաբանութիւնից և երկրաբանութիւնից։ Այստեղ նոյնպէս ցանկացողները կարող են ենթարկուել վերջնական քննութեան և ստանալ վկայագիր։ Կօլլէժ ընկերութիւնը տալիս է և գիտական աստիճանի արտօնութիւն. 1885-ից մինչև այժմ անդամ են ստորագրուել յիշեալ ընկերութեան 2,444 անձինք։

3) Ամառնային համալսարանը զետեղուած է մի գեղեցիկ, հոյակապ շինութեան մէջ, որ գըտնուում է Նիւ-Իօրկի հարաւ արեւմտեան կողմում, լճափի ամենասքանչելի տեղում, բանաստեղծական հրաշալի դիրքով։ Այս համալսարանի ուսանողները ցրուած են հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգներում և Կանադայում։ Անդամներից շատերը ամառնային եղանակներին միաւժամանակ դասդարում են սեփական գլխաւոր պարապմունքներից և գալիս են այստեղ մի քանի շաբաթ անցկացնելու թարմ օդում, լսելու նշանաւոր գիտնականների դասախօսութիւնները և օգտուելու գեղարուեստից, համերգներից, ներկայացումներից և այլն։ Ամառային ամիսների ընթացքում այստեղ կարդացուում են՝ 1) դասախօսութիւններ, երբեմն մինչև անգամ յատկապէս Կօլլէժի դասընթացի վերաբերեալ առարկաների միւռևէ շրջանից, համաձայն ուսանողների ընդհանուր ցանկութեան կարգացուում է մասնագիտական նիւթերից որևէ բաժին, 2) հոգեբանութիւնից, մանկավարժութիւնից և մեթոդիկայից մանաւանդ ուսուցիչների համար, 3) Աստուածարանութիւնից, Սրաժշտութիւնից, հրապարակախօսութիւնից և այլ նիւթերից։ Տեղի են ունենում նոյնպէս համերգներ և գրամատիկական ներկայացումներ։

Chautauqua-ի ժողովները հնարաւորութիւն են տալիս իւր՝ նոյն հոգի ու միտք, նոյն որոշ պահանջներ և ձգտումներ ունեցող անդամ—ուսանողներին միմեանց հետ կենդանի յարաբերութիւններ պահպանելու, փոխադարձ օգնութեան միջոցով առանձնակի պարապմանց ժամանակ գիտութեան մէջ պատահած զանազան մութ, կասկածաւոր կէտերը պարզաբանելու ընկերական շրջանում։ Իւր ամբողջ գոյութեան ընթացքում ամառնային համալսարանն ունեցել է 2,590 անդամ։ Միայն 1894 թ. հաւաքուել են 405 անդամ, որոնցից 83-ը լսել են լատիներէնի դասընթացը, 75 անգլերէնի, 66 գերմաներէնի, 50 ֆրանսերէնի, 39 մաթեմատիկայի, 31 պատմութեան, 27 յունարէնի, 15 հասարակական գիտութիւնների, 13 երրայերէնի, 11 բնագիտութեան, 11 բնաբուծութեան, 8 կենսաբանութեան և 5-ը երկրաբանութեան։

Հաստատութեան անդամները հասարակութեան զանազան շրջաններից են՝ կան և պաշտօնեաներ, վաճառականներ, արհեստաւորներ և այլն։ Մի զարմանալի եռանդ են ցոյց տալիս համարեա բոլոր ուսանողները դէպի գիտութիւնը, որն աւելի արտայայտուում է նորանով, որ կատարեալ անշահասիրութեամբ են նուիրուած այդ գործին. դոցա՝ գիտութեամբ պարապելու անկեղծ սէրը երևում է նորանից, որ ինչպէս վերևն ասացինք, Chautauqua-ի հաստատութիւնների աւարտման վկայագրերը ոչ մի առանձին իրաւունք և արտօնութիւն չեն տալիս։

Chautauqua-ի անդամներից շատերի ինքնակենսագրական տեղեկութիւնները խիստ հետաքրքրական և խրատական են։ Դոցանից կարելի է եզրակացնել, որ սիրայօժար ինքնաշխատութեամբ ձեռք բերած գիտութիւնը երբէք այն նեղութիւնն ու ձանձրոյթը չէ պատճառում, որից շատերը գանգատում են այժմ։ Անտանելի ձանձրոյթը, յոգնածութիւնը հետևանք են այն բանի, որ մեր գպրոցական պարապմունքները փոխանակ անսահման ուրախութիւն պատճառելու աշակերտներին, ենթարկում են նրանց անհաճոյ պարտականութեանց մի անվերջ շարքի։ Մասնակցողներից մեկը գրում է. «Ես զբաղուած եմ մի մեծ առևտրական հաստատութեան մէջ առաւօտեան ժամի 8 %։ սկսած մինչև երեկոյեան ժամի 6-ը իսկ ընթերցանութեամբ պարապում եմ միայն ճանապարհին ձիաքարշի վերայ 20 ր. առաւօտները, երբ տանից գալիս եմ ծառայութեան և երեկոները նոյնպէս 20 ր. երբ գործից վերադառնում եմ տուն, Բացի սրանից

ինձ յաջողուում է պարապել սիրածս առարկայով երբեմն և երեկոները տանը»։ Սոյն ընկերութեան անդամներից մի կին, գրում է. «ես ապրում եմ ագարակում, որպէս օգնական իմ ամուսնուս և աշխատում եմ որպէս հասարակ բանուոր. երբեմն մինչև անգամ դաշտ եմ տանում ձիերը, բայց չնայելով այդ ծանր աշխատութեանը, ես վերջին երկու ամիսը կարողացայ նուիրուել սիրած պարապմունքիս, երբ դուրս էի գալիս ագարակից դէպի դաշտ»։ «Անցնելով յունական դասընթացը, գրում է մի պատանի, իմ մէջ յառաջացաւ մի ցանկութիւն՝ սովորել յունարէն լեզուն. բազմաթիւ գրքերի ընթերցանութիւնը իմ մէջ դիտութիւններով պարապելու սէր զարթեցրեց և ահա այդ նպատակին հասնելու համար վճռեցի միակ միջոցին՝ մտնել համալսարան, որ և իրագործեցի»։ Chautauqua ընկերութիւնը բազմաթիւ անդամներ ունի միայն նահանգներից դուրս ուրիշ երկրներում ևս։ Հարաւային Աֆրիկայում ունի 40 անդամ, որոնք կազմում են 9 շրջան, Մեկսիկայում այդպիսի շրջանների թիւը հասնում է 11-ի, նոյնքան էլ Հնդկաստանում, Չինաստանում և Կորէայում։ 1885 թ. Chautauqua ընկերութեան անդամ գրուեցին 750 ճապոնացի, որոնք ներկայումս կամենում են յարաբնման մի ընկերութիւն կազմել իւրեանց հայրենիքում։ Ցաճախ բանտերում բանտարկեալներն անդամ միանում են և խմբեր կազմում, որոնք Chautauqua ընկերութեան առաջնորդութեամբ սկսում են պարապել. մի քանիսը նոցանից մինչև անգամ քննութիւն են տուել։

Chautauqua-ի նման Անգլիայում կազմուել է երկու հաստատութիւն, 1) Վիկտորիայի ընթերցասէրների ընկերութիւն և 2) Ցնային ընթերցանութեան ժողովրդական ընկերութիւն։ Բացի այս հաստատութիւնից Ամերիկայում կայ նոյնանման և այլ ընկերութիւններ, որոնց բաժանմունքները ճիւղաւորուած են Եւրոպական զանազան պետութեանց մէջ։ Դոցանից ուշագրութեան արժանի է կաթոլիկների ընթերցասիրաց ընկերութիւնը Պետերբուրգում։ *

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ։

Թէև մինչև այժմ դեռ պարզուած չէ ժանտախտով վարակուելու եղանակը եւ չէ ուսումնասիրուած, թէ ինչ ճանապարհով են ժանտախտի բակտերիաները մտնում մարդու մարմնի մէջ, բայց էլի հին կայ կարծելու, որ միայն հիւանդներին եւ նրանց առարկաներին դիպչելը բաւական չէ վարակուելու համար։ Աւելի հաւանական է, որ վարակումն ըստ մեծի մասին յաճախ լինում է քերծուածքի միջոցաւ եւ առհասարակ որպէս կաշուի, նոյնպէս եւ լորձային թաղանթների ամբողջութիւնը մնասուած մասերի միջոցով։ Ժանտախտով հիւանդներին խնամողները, եթէ մաքրութիւն են պահպանում եւ զգուշութիւն բանեցնում, ըստ մեծի մասին ապահովուած կարող են համարուել վարակուելուց։

Օրինակ, Հոնգ-Կոնգում 1894 թուին, ժանտախտային հիւանդանոցում աշխատող եւրոպական 15 բժիշկներից ոչ մէկը չը վարակուեց ժանտախտով։ Նոյնպէս եւ հիւանդներին խնամող ողորմած քոյրերից ոչ մէկը չը վարակուեց. անվնաս մնացին նոյնպէս եւ բժշկական ուսումնարանի ուսանողները, որոնք մի քանի շաբաթ մնացին ժանտախտային հիւանդանոցում։

*
* *

Ներկարում է արդեօք մարդկային կեանքի միջին տեւողութիւնը։ Այդպիսի մի հարց է դնում The Sanct բժշկական թերթի խմբագրութիւնը եւ պատասխանում է դրական կերպով՝ Անգլիայի վերաբերմամբ։ Օրինակ, Դոկտոր Farr'ի աղիւսակով, որը պարունակում է 47 տարուայ մի շրջան, 1838–1854, այր մարդկանց կեանքի միջին տեւողութիւնը հաւասար է 40, իսկ կանանցը՝ 42 տարուան։ Դոկտոր Ogle'ի աղիւսակով 40 տարուայ շրջանում՝ 1871–1880, այդ թիւը բարձրանում է այր մարդկանց համար մինչև 44, իսկ կանանց մինչեւ 45 տարի եւ վերջապէս Tathum'ի վիճակագրական աղիւսակով 1881-ից մինչեւ 1890 թուականը կեանքի միջին տեւողութիւնը այր մարդկանց վերաբերութեամբ՝ 44, իսկ կանանց նկատմամբ՝ 47 տարի։ Մարդկային կեանքի այդպիսի աճումը The Sanct'ը վերագրում է բժշկականութեան կատարելագործման եւ, նամանաւանդ, առողջապահական եւ նախազգուշական միջոցներին։

*
* *

Paul Raymond'ը ներկայացնում է հետեւեալ թուանշաններով այն ընդհանուր վնասի գինը, որն ստանում է Պարիզը քանուորների չափազանց օդի գործածելուց։ Դորա համար նա որոշում է բոլոր տարբեցողների (ալկօհոլիկների) միջին թիւը, որոնք իւրաքանչիւր տարի լինում են հիւանդանոցներում։ Raymond'ի ասելով իւրաքանչիւր հիւանդանոց (իսկ դրանց թիւը Պարիզում 15 է) օգնութիւն է տասցնում ամսական միջին թուով 62 ալկօհոլից թունաւորուածի, այսինքն ամսական 800 տարբեցողի, իսկ տարեկան 10,000։ Այդ հաշուով արբեցողները միջին թուով ապրում են հիւանդանոցներում 300,000 օր, կամ եթէ դրամով հաշուենք՝ լինում է 900,000 Փրանկ ծախք. եթէ դորա վրայ աւելացնենք եւ կորած օրերը, դուրս կը գայ, որ օրին Պարիզին տասցնում է տարեկան մօտ 2,000,000 Փրանկ վնաս։ (Rev. Sientifique. № 5. 1896 թ.)

*
* *

Verschuren (Anvers) *կատարեց մի կարգ չափազանց հետաքրքիր դիտողութիւններ թռչունների արագ թռչելու վերաբերմամբ։ Դորա հետեւանքն այն եղաւ, որ ծիծեռնակը անցաւ 236 կիլօմետրը (Compiegne'ի և Anvers'ի մէջ եղած տարածութիւնը) մի ժամ եւ ութ րոպէում, այսինքն 207 կիլօմետր մի ժամում կամ 58 մետր մի րոպէում։ Այդ արագութիւնը (մօտ 60 մետր մի րոպէում), բաւական է, որ նրանք թռչէին, օրինակ, հիւսիսային Աֆրիկայից մինչեւ Բէլգիա 12 ժամում։*

*
* *

Աւագ հինգշաբթին Սպանիայում կատարուում է մի առանձին շքով։ Արքայական Պալատի մէջ մատուցանուող պատարագին ներկայ է գտնուում ամբողջ պալատը եւ աւագանին։ Բոլոր տիկինները հագնում են քուն ազգային հա-

* *Քաղուած „Образованіе“ ամսագրից։*

գուստ եւ մանտիլլա՝ սպիտակ ժանեակով քանուած: Միակ օրն է համարեա Ա. Հինգշաբթին, երբ բոլոր իսպանացիք եւ իսպանուհիք պիտի անպատճառ ազգային տարազով երեւան ամեն տեղ: Այս տարի մի առանձին շքով կատարուեցաւ այդ տօնը Մադրիտում: Պապական նոր նշանակուած նուիրակի առաջին պատարագից յետոյ՝ մայր թագուհին, մանուկ—թագաւորի, արքայական գերդաստանի եւ նախարարների ու աւագանու եւ օտար դեսպանների ներկայութեամբ կատարեց ուռնալուայի հանդէսը: Պատարագից յետոյ թագուհին անցաւ մեծ դահլիճն, ուր արդէն 12 պառաւ տատի եւ 12 ծեր պապի սպասում էին նորան, որոնց ոտքերը լուանալուց յետոյ, գեղեցիկ տօնական զգեստներ եւ ոսկէ դրամներ ընծայելուց յետոյ առաջնորդեց ճաշարան—դահլիճը, այնտեղ անձամբ պատոյ ընթիր ու համադամ կերակուրները տրամցուց նոցա: Ճաշից յետոյ արքայական սեղանի պաշտօնեաներն ու գաւաթները իր յիշատակ ընդունելով գնացին: Այդ օրը սպանական մայրաքաղաքի սովորութեամբ ամեն մարդ պէտք է քաղաքի եօթն եկեղեցիներն ուխտի գնայ: Այնքան մեծ էր ժողովրդի հոսանքը, որ ժամը 10-ից մինչեւ ուշ երեկոյ կառքերի եւ ձիաքարշների երթեւեկութիւնը դադարել էր բոլորովին:

Անգլիայից, Միացեալ Նահանգներից եւ այլ տեղերից բազմաթիւ այցելուներ էին եկել Մադրիտ, Սիվիլայի եւ Տօլէդոյի կրօնական փառաւոր հանդէսները տեսնելու, որին առաւել մեծ փայլ ու շուք էր տալիս Անտալուզիայի գուարթ ու ջինջ երկինքը:

Խաչելութեան տօնին մայր-թագուհին 44 մահապարտի կեանք շնորհեց, որոնցից երեքը ապստամբների պարագլուխներ էին:

ԱԶԳԱՅԻՆ.

ԿԵՆԴԱՆԻ ՀԻՎԱՆԴԱԲԻՒՆ.

Եթէ «Արարատը» երբեմն երբեմն կարեւոր է, համարում խօսելու մեր մէջ երեւացող թերութիւնների մասին, պարտաւորութիւնը չէ՛ անշուշտ նրան զրկողն, այլ եկեղեցու իսկական շահը: Թերութիւնը ծածկելով կամ անուշադիր թողնելով կարելի չէ ուղղել: Ոսկեան յառաջադիմութեան պայմանը անձնաքննութիւնն է, ահա այդ անձնաքննութեամբ պէտք է զբաղուի եւ Արարատը, որպէս զի դանէ մեր եկեղեցական կեանքի թոյլ, թերի եւ սխալ կողմերն ու գարման առաջարկէ: Մեր միակ եկեղեցական թերթի պարտքն է իսկապէս սուր աչքով հետեւել ժողովրդական կեանքին, մանաւանդ նորա մէջ երեւան եկող վնասակար ազդեցութիւնների դէմ անթարթ աչքով հետեւել եկեղեցու պաշտօնեաների գործունէութեան եւ առաջնորդել նորանց միշտ դէպի լաւը:

Այս գործունէութեան ընթացքում յարմար կարող է պատահել, որ գովասանքի փոխանակ կշտամբանք լսուի եւ վարձու փոխանակ պատուհաս պահանջուի: Եթէ «Արարատի» բերնից չը հնչէ վատութեան առաջին պատասպարտութիւնը, մի ուրիշի բերանից կը հնչէ այն եւ աւելի դառն եղանակով: «Արարատը» երբէք պարտաւորեալ չէ կարող լինել դէպի իր բոյրինները,—դէպի համօրէն հայ եկեղեցականները, նրա խօսքը միշտ հայրական խրատ եւ եղբայրական յորդոր է: Եթէ մեր մէջ վերջերս արձանագրուած վատ սովորութիւնների եւ վատացած բարքերի պատճառով՝ շատերը հակամէտ են ամենայն մի գիտողութիւն նպատակաուորւ, կուսակրական եւ անձնական համարելը, դրա համար «Արարատը» չէ կարող յետ կանգնել իւր մեծագոյն պարտքը վճարելուց. նա ինքը պիտի լինի ամենայն անգամ շեղուածները նկատողը եւ շեղուողներին ուղղութեան հրաւիրողը: Ա՛յս է վայել ս. Հոգւոյն իրրեւ բերան ծառայող Թերթին ու նրա դիրքին:

«Արարատն» իւր այս պարտքը միշտ ձգտել է վճարել. ով նրա հին գարեշրջանների հետ ծանօթ է, գիտէ, թէ ի՜նչպիսի աչալրջութեամբ հետեւում էր նա մեր եկեղեցական կեանքին եւ հայրապետական հեղինակութիւնն իւր վրայ կրելով՝ հասնում էր իսկ իւր նպատակին. ինչո՞ւ նոյնն եւ այժմ պիտի չը կատարէ:

Այս նախաբանը կարեւոր համարեցինք այն պատճառով՝ որ, ինչպէս ասացինք, վատ սովորութիւնների շնորհիւ այսօր ամենայն մի գիտողութիւն, ամեն մի թերութիւն, անձնական կամ այլ դիտաւորութեամբ է բացատրուում:

Ժամանակ է այդ չարիքի առաջն առնելու, որպէս զի կարողանանք մեր թերութիւնները տեսնել եւ ուղղուել: Ժողովուրդը եկեղեցականներից գործ է պահանջում եւ իրաւամբ: Եթէ երկար բացակայի այդ գործը, այն ժամանակ հաւատարակս ամենքս էլ դատապարտելի կը դառնանք, ուստի իւրաքանչիւր եկեղեցականի համար պատուոյ խնդիր պիտի լինի ոչ եթէ ընկերոջ պարտաւորները լինելն, այլ գործով մրցել թիւնը:

Սակայն կը հարցնեն, ինչ գործ եք կատարում չէ՞ որ մենք ժողովուրդ ենք հովուում քարոզում ենք ըստ կարի, թեմեր ենք կառավարում և այլն և այլն: Այո՛, այդ բոլորը գործեր են, բայց վաղուց է հնացել այն ձևը, որով մենք նոյնը կատարում ենք և կամ վարուց ենք մոռացել մենք այն հին ձևը, որով պիտի այդ գործերը կատարուին: Անդադար լսում ենք, որ մեր քահանայք ծխականաստան են միայն, մեր լաւ քարոզիչները սակաւ, մեր վարդապետները ժողովրդից հեռու ևին, ով հաւաքեց արդեօք սոյն բոլոր սուտ ու ճշմարիտ մեղադրանքները, որ կուտակուում են մեր եկեղեցականների վրայ: Սակայն այդ աշխատանքն արժանի է նրա վրայ թափուած ջանքին, ծուխն առանց կրակի չէ լինում ուստի այդ մեղադրանքների մէջ կը լինեն և կան իսկ ճշմարտութիւններ, որոնք ինչքան էլ դառն լինին, այնուամենայնիւ պիտի լսենք և ըստ այնմ փոխենք մեր ընթացքը:

Բոլոր առաջ բերուած մեղադրութիւնները քննելով՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ դրանք բոլորն էլս ծնունդ են մեր մի թերութեանը, որ է անկենդան, մեռեալ, ձևական գործունէութեանը:

Մինչդեռ հին և հնագոյն հայ եկեղեցականը յիրաւի հայր և հովիւ էր իւր ժողովրդին, նա էր կատարած ձևականութիւններով չը գիտէր իսկ այդ ձևերի դոյութեան մասին, այժմ ուրախ այդ ձևականութեան դիւտի վրայ, մոռացել է և մոռանում է հետզհետէ իւր պաշտօնի ոգին: Ոգին տնդի է տուել ձևին:

Որ և է գործի միջից եթէ պակաս է դեկավարող ոգին, նա մեռեալ և անկենդան է: Եթէ քահանան իւր ժողովրդի հետ միայն ձևական յարաբերութիւններ ունի, եթէ նա իւր ժողովրդին տեսնում է որոշ դիպուածներում և նոյն առնասարութեամբ կատարում մկրտութիւն, անօրհնէք, հարսանիք ու թաղումն, այն ժամանակ նա եկեղեցու պաշտօնեայ և Աւետարանի աշակերտ չէ, այլ ձևականութիւն կատարող մի աշխարհական պաշտօնեայ: Ժողովուրդը քահանային հայր և տէր է կանչում ինչ կապ կայ հօր, տիրոջ և այդ մեքենայի պես աղօթքներ արտասանելի մէջ:

Նոյնը չասենք արդեօք և ժողովրդի թերևս առաւելութեան և անկման վրայ իւր կուրծքը ծեծող քարոզչի մասին, որ մատամբ անդամ չէ կամենում դոնէ մի մխակ թշուառի օգնած լինել:

Կարող ենք արդեօք արդարացնել մեր եկեղեցական դատաւորների և առաջնորդների աթոռների վրայ նստում ենք միայն լսելու և մտնելու թղթերով զբաղուելով: Ջենք ժխտում և այն, որ այսպիսի յարաբերութեանց կազմուելուն նպաստել են և ժողովրդականք, որոնց մէջ կրօնական անտարբերութիւնը հետզհետէ աճում է, բայց դարձեալ թերութիւնը մերն է, մենք չենք աշխատել գործով կենդանացնել նրանց հաւատը: Կենդանի գործը կը հալեցնէ անտարբերութեան սառուցէ լեառը, ահա այդ է պահանջում մեզնից:

Թշուառութիւնից ազատուած մի ընտանիք, յուսահատութիւնից փրկուած մի անձն, կրթութեան ճանապարհի վրայ դրուած մի պատանի, հիւանդութեան ժամանակ խնամք գտած մէկը, վշտի մէջ մխիթարութեան ձայնից սփոփուողներից մին ևէն ևէն, կը կապուին այնպիսի մի հօտ, որ իւր հովուից երբէք չի բաժանուիլ և այնպիսի այժ ու զօրութիւն կը տան մեր եկեղեցականութեան, որպիսին նա չի ունենալ, եթէ միլիոնաւոր անձնաւորութիւնների պաշտօնեայ միայն համարուին:

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ· ՄԱՅՐ ԱԹՈՌ·

Ընդհանուր ներհաւատութիւնը յայտնում է իւր Հայրապետական օրհնութիւնը և բարձր գոհունակութիւնն այն բոլոր անձանց և հաստատութեանց, որոնք փութացել էին շնորհաւորել Ս· Յարութեան Տօնը, սրտեռանդն բարեմաղթութիւններ վերատաքելով առ Ամենն Բարձրելոյն վասն բարօրութեան և արեշատութեան Հզիս Սիրեցեալ Հայրիկի:

Ս. Յարութեան Կիւրակէ օրը Ապիս վիհափառ Հայրապետը Ս. Պատարագ մատոյց Աստ. Սեղանի վերայ: Ժամասացութիւնը շատ հանդիսաւոր էր: Նորին Ս. Օծութեան սպասաւորում էին Գեր. Տ. Մահար և Յոռէն եպիսկոպոսները, վից վարդապետ և չորս սարկաւագունք: Ճաշու ըլլքից յետոյ՝ Նորին Սրբութիւնը ազգու ձայնով և մեծ ոգևորութեամբ բացատրեց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Յարութեան նշանակութիւնը: Վաղուց հետէ Միածնաէջ Տաճարի աւագ բեմից չէր հնչուկ այսպիսի ի խորոց սրտէ բղխող ջերմեռանդութիւն, հաւատ, յոյս և սէր ներշնչող խօսք: Քարոզի վերջում Նորին Սրբութիւնը սրտաբուղխ օրհնութեամբ հրաւիրեց եկեղեցւոյ մանկանց օրհնել գՅարուցեալն Յիսուս. «Օրհնեցէք, մանկունք, օրհնեցէք» խօսքերին մատաղերամ երգիչների խումբը մեղմ և ներդաշնակ ձայնիւ օրհնութեան ձայն էր հընչեցնում, ասելով՝« Օրհնեցէք, մանկունք, գյաղթող Մանուկ Հօր՝ յարուցեալ վաւօք»: Իսկ ինքը Ծերունազարդ Հայրապետը Աթոռի վերայ բազմած, ձայնակցում էր այդ քաղցրահնչիւն օրհներգին: Այսպէս կրկնուեցաւ երեք անգամ ի վառս և ի պատիւ Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Ս. Հոգւոյն:—Արդարև մի հոգեպարար հանդէս, որին ափսոս ներկայ չէր հայ ուխտաւորների հոծ բազմութիւն....

Օրհներգից յետոյ Սրբազնագոյն Պատարագիչը դառնալով դպրապետութիւն առնող Բարձր. Տ. Ղևոնդ վարդապետին՝ իւր բարձր գոհունակութիւնը բարեհաճեցաւ յայտնել այդ օրհներգը պատրաստելու համար:

Աւագ հինդշաբթի երեկոյեան Նորին Ս. Օծութիւնը առանձին իմն հանդիսաւորութեամբ կատարեց Ոտնլուայի կարգը՝ մի հակիրճ և վերին աստիճանի սրտաշարժ ու ազդու խրատ խօսելով Փրկչի քարոզած խաղաղական խոնարհութեան մասին:

Թաւրիզում տեղի ունեցած ժողովրդական յուզմանց առթիւ, որի ժամանակ երեք հայի տուն կողոպտուեցան և գերեզմանատունը սրբապղծութեան դէպքեր եղան, տեղոյն Առաջնորդական Տեղապահ Տ. Յովսէփ վարդապետ հետ հետաքրքրների փոխանակութիւնից յետոյ, Նորին Ս. Օծութիւնը հետապրով Նորին Սրբութեան Տահլնշահի պաշտպանութեանը դիմեց, խնդրելով նաև զանմեղ Սպրազամի միջնորդութիւնը: Այս միջնորդութիւնը շատ սիրով ընդունուեցաւ Նորին Սրբութեան կողմից և անմիջապէս կարգը վերականգնեցաւ՝ շնորհիւ ձեռք առած խիստ միջոցների: Այս մասին մի ընդարձակ հեռագրով Նորին Սրբութեանը հաղորդուեցաւ ի գիտութիւն և ի միամտութիւն: Պատասխանի մէջ ընդունում է Հայոց Ազգի գարևոր հաւատարմութիւնը և խոստացուում է միշտ սրտի մօտիկ առնել Հայոց շահերի պաշտպանութիւնը:

Մեծի պահոց Ջ. Կիւրակէ օրը երեկոյեան Մայր Տաճարում քարոզից Գեր. Տ. Անանիա եպիսկոպոսը: Սրբազան քարոզիչը Ս. Գրիգոր Լուսաւորչի նշանակութեան մասին մի քանի խօսք նուիրելուց յետոյ, Փարիսեցւոց և Սադուկեցւոց ազանդները և անկեղծ սիրոյ նշանակութիւնը բացատրեց:

Գիւղի եկեղեցում Վեհ. Հայրապետի հրամանով նոյն օրը քարոզեց Բարձր. Տ. Աշոտ վարդապետը. իսկ աւագ ուրբաթ երեկոյեան՝ Գեր. Տ. Յոսէն եպիսկոպոսը: Սրբազան քարոզիչը իրեն յատուկ պերճախօսութեամբ հրաւիրում էր ժողովրդի ալ և ալ դասակարգերին գալ ծունկ չոքել և հաշիւ տալ Յաչեցեալի գերեզմանի առաջ:

Մարտի 28-ին վերադարձաւ Մայր Աթոռս Շնորհուանակ Դարեգին սարկաւագը, որ 1892-ին՝ Գեր Տ. Երեմիա Արքեպիսկոպոսի առաքելահութեան ժամանակ Թիֆլիզի բարեգործական ընկերութեան հաշուով ուղարկուած էր Գերմանիա՝ Աստուածաբանութեան պատմական մասն ուսումնասիրելու համար: Շնորհ. սարկաւագն, ինչպէս յայտնի է, Արարատի ընթերցողներին, քննութիւն է տուել և դոկտորութեան աստիճանի արժանացել:

Ամսոյս 19-ին Ասարխանից եկաւ Ս. Էջմիածին բարեշնորհ Բագրատ Արեղեան, որ վարում էր գործակալութեան և քարոզչի պաշտօն Ասարխանի Թեմի Առեմեանի մասում:

ՈՒՆՍԱՀԱՅՔ.

ՇԱՄԱԽԻՈՅ ԹԵՄ.

ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՇՈՒԵՑՈՒԹԵԱՆ ՄՏԻՑ ԵՒ ԵԼԻՑ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՆԱՅԻՑ ՍԱՂԻՒԱՆՈՒ ՎԱՍՆ 1896 ԱՄԻ.

Թ.	Մ ու տ ք.	Ր.	Կ.
1	Առ 1-ն յունուարի 1896 ամի մնացեալ է վանքապատկան գումար	125	59 ½
2	Ի մասահամբուրից	75	48
3	Ի գնոց վաճառեալ մորթեաց մատաղաց	2	30
4	Վասն շինուելեան նորոգ ճանապարհի նուիրեալ յոմանց բարեպաշտ անձանց	166	
5	Ի գնոյ վաճառեալ խոտատեղեաց	6	
6	Ի գանձանակաց ժողովելոց յիկեղեցիս քաղաքաց վիճ. Համախուց	40	81
7	Ի մոմավաճառութենէ	14	56
8	Հանգանակեալ գրամ ի Բագուքաղաքի ի նպաստ կառավարչութեան վանիցն	810	
9	Ի կապալագրամոց վանքապատկան Հողոյն Գիւրջվանի	40	
10	Անձեռնմխելի գումար 600 րուբլի, զորս նուիրեալ է բարեպաշտուհի ոմն ընծայարանի վանիցն և այժմ դտանի առ պ. Խաչատուր Առաքելեան Վարախանեանց Բ. կարգի վաճառական ի տարին 48 րուբ. 80 կոպ. տոկոսեօք	648	80
	Ընդամենն	1929	54 ½

Թ.	Ե լ ք.	Ր.	Կ.
1	Ցաղագս մշակագործութեան այգւոյ վանիցն—այն է՝ ղրարուեական հատանելոյ, րրելոյ, մաճի(սարի), ջանկապատելոյ, այգեկթի, եւլն	267	46
2	Ցաղագս տնտեսական ծախուց վանիցն յընթացս ողջոյն ամի — շաքարի, թէյի, նաւթոյ, մսոյ, իւղոյ, պանրի, րրնձի, ածխոյ և այլ ժամանաւոր կարևորեաց	161	79
3	Ցաղագս պատրաստելոյ ղչորս ձեռք անկողինս	23	72
4	Հանդերձագին Սահակայ սարկաւագի Տէր-Միքայէլեան	60	
5	Վարձ ծառայի	43	
6	Կառափարձ և ձիափարձ վասն երթևեկելոյ ի Շամախի և ի Բագու ըստ պահանջման հարկին	62	86
	Ընդամենն	613	83

Ցետ հանելոյ զծախսն ի մտից՝ մնայ վանքապատկան պատրաստի գումար առ 1-ն յունուարի 1897 ամի հազար երեք հարիւր տասն ռուբլի եօթանասուն մեկ եւ կէս կոպ. (1310 ր. 71 ½ կոպ.), երկու կարաս գինի և մի թաղար ցորեն. *

ՑԱՒԻԼԵԱԼ ԵՆ.

4 Ամենամեծ խեցեղէն կարաս գինւոյ.
8 Մետաքսեայ թաշկինակ զանազան մեծութեամբ.
1 Փող սկսոյ մետաքսեայ, սպիտակ և հիւսկէն.
1 « » « » հասարակ.
4 Վերմակ՝ չիթ երեսօք և րրդեայ միջովք.
4 Մահիճ—գլխոշակ « »
5 Գլխարարձ.
2 Աչտանակ՝ վարշաւեայ արծաթի.
1 Ծօկտոր Ռամօ գիրք.
1 Արցախ գիրք. միամեայ «Արձագանք», միամ. «Նոր—Դար», միամ. «Մշակ», մի օր. պատմութիւն Ս.-ի Բալասանեան.

ՈՉՆՉԱՑԵԱԼ ԵՆ

1 Փայտեայ հնաձև աթոռ.
4 Հին մետաղեայ գրդալ.
2 Սփռոց անկողնոյ.
4 Մահիճ—գլխոշակ—և 3 վերմակ (մնայ միայն րուրդն).
1 Տաշտ հնացեալ.
3 զոյգ դանակ և երիք զոյգ պատառաքաղ.

Մաղաքս եպիսկոպոս Բարխուդարեանց:

---

* Հարկ է յայտնել, որ վանքիս վանահայրութեան պաշտօնն ստանձնած ժամանակս մինաստանուժն ամենևին ոչ ուտելիք կար, ոչ խմելիք, ոչ անկողին և ոչ մի կոպ. գրամ, վասն որոյ ստիպուեցայ 300 րուբլի կանխիկ պարտքով մտնել վանքը. Մինչդեռ վերջին ծայր յաջող եղած են իմ նախորդի վանահայրութեան տարիներում՝ վանական այգւոյ արդիւնքն—1100 րուբլուց մինչև 1200, և ընդհակառակն իմ միջոցին երկու տարի ոչինչ արդիւնք տուած չէ այգին.

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ ԱԶԱԶԱՐԱՆ ՁԵՄԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Հ Ա Շ Ի Ւ

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ—ՋԱԼԱԼԵԱՆԻ ԿՏԱԿԱԾ ԴՐԱՄԱԳԼԻՒ՝ ԱՌ 1896 թ.

Մ Ո Ւ Տ Ք.

	տոկոսաբեր դրպեր	տոկոսի դրամ. Ռ.	կ.
Կար ց'մէկն յուն. 1896 թ.	64100	1268	82
1896 թ. ընթացքում մուտք է եղել	3400	3307	68
	67500	4576	50

Ե Լ Ք.

Վճարած է՝ տոկոսաբեր թղթեր դնելու համար 3372 ռ. 81 կ. և 1895 թ. հաշիւը լրագիրներում տպագրելու համար 18 ռ. 72 կ., ընդամէնը		3391	53
Ց'մէկն յուն. 1897 թ. կայ առ ձեռն	67500	1184	96

Ծանօթութիւն. Վերոյիշեալ 67500 ռ. տոկոսաբեր թղթերը կազմուած են.—ամենասկիզբը կտակած 6 ½ % ով արժէթղթից 25000 ռ. արժողութեամբ, որ գտնուում է պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքում և Մոսկուայի նահանգական գանձարանում գտնուած հետևեալ արժէթղթերից.—1893 թ. 5-դ կարգի (ВЫИУСКЪ) ռուսական 4 % ոսկեայ փոխառութեան օբլիգացիաներից 500 ռ. արժողութեամբ, պետական բնտայի 4 % վկայաթղթերից 39800 ռ. արժողութեամբ, Մոսկուա—Ղազան երկաթուղու 4 % օբլիգացիաներից 300 ռ. արժողութեամբ, Գիւղական հողային բանկի 4 ½ % վկայաթղթերից 700 ռ. արժողութեամբ, Մոսկուայի հողային բանկի 5 % զրաւաթղթերից 400 ռ. արժողութեամբ և Հարաւ—արևմտեան երկաթուղու ակցիաներից 800 ռ. արժողութեամբ, ընդամենը 42500 ռ.:

Հասան—Ջալալեան արքեպիսկոպոսի կտակած գրամագլուխը պակաս է, ասկի սկսած 1883 թ. 125 տարուայ ընթացքում մինչև 12 միլիոն ռ., որից յետոյ պակաս է, գործադրուելի կտակողի անունով ուսումնարանական հաստատութիւններ և գանազան հիմնարկութիւններում տարեկան դրամ հիմնելու համար:

Վերատեսուչ Լազարեան ձեմարանի արևելեան լեզուաց՝

ԳԻՈՐԳ ԹԱՆԱՆԵԱՆՑ:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք.

Ղստան ժողովը դումարուելով երկկ Ղալաթիոյ Ղսրհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և Առենապետութեամբ վեհ. Ստեփան վրդ. Ասլանեանի, ի միջի այլոց զբաղուեցաւ հետևեալ խնդիրներով.

1.—Բ. Դրան կողմէ յուղարկուած լինելով ի Պատրիարքարան Կարնոյ Առաջն. Տեղապահ Տ. Յովսէփ վարդապետի և Գալատիոյ Առաջն. Տեղապահ Տ. Տաճատ վարդապետի պաշտօնին համար պէտք եղած հրամանագրերն, ժողովը որոշեց հրաւիրել յիշեալ Առաջն. Տեղապահներն մեկնիլ իրենց պաշտօնատեղին:

2.—Ս. Երուսաղէմի միաբաններէն Տ. Ղեւիշէ վարդապետ Զիլինկերեան Բաղէշի Առաջն. Տեղապահ կարգուեցաւ:

3.—Դարձեալ Ս. Երուսաղէմի միաբաններէն Դանիէլ վարդապետ Յակոբեան Երզնկայի Առաջն. Տեղապահ կարգուեցաւ:

4.—Ազբիանուպոլսոյ Թաւառ. Ընդհ. ժողովը՝ ըստ հրահանգի կեդր. Վարչութեան՝ առաջնորդական ընտրութիւն կատարած և տեղեկագիրն յուղարկած էր, որմէ կը յայտնուէր թէ Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմաքսեան առաջնորդ ընտրուած է:

Ժողովը քննելով տեղեկագիրն հաստատեց ընտրութեան օրինականութիւնը և առաջնորդ կարգեց զՀմայեակ Եպիսկոպոս:

5.—Տիվրիկի նորընտիր Առաջն. Տեղապահ Պէրպէրեան Տ. Ներսէս վարդ. կը հրաժարէր, իր հիւանդագին վիճակին յայտնելով:

Ժողովը որոշեց բժշկական քննութեան տեղեկագրի մը վրայ տալ այս մասին իր որոշումն:

6.—Ժողովը լսելով որոց նկատմամբ Աննն. Սրբազան Պատրիարք Հօր հաղորդած տե-

գիկութիւններն և տնօրէնութիւններն, առաժամանակեայ խնամակալութիւն մը կազմեց՝ Նորին Սրբազնութեան նախագահութեան ներքև և անդամակցութեամբ Կրօն· Ժողովոյ դեր-առաենապետ Տ· Վահրամ Սրբազանի և Քաղ· Ժողովոյ դեր-առաենագրիը Սեթեան Մկրտիչ էֆ·ի և պաշտօն յանձնեց նոյն խընամակալութեան, սահմանել որքոյ վերաբերեալ նախապատրաստական կարգադրութիւններն զանոնք փոխադրել և վերադիլ տալ և միանգամայն պատրաստել որքոյ խնամածութեան վերաբերեալ ծրագիրը:

„ԲԻԶԱՆԴԻՈՆ“:

Մուշից սասացած տեղեկութիւնների համաձայն վանքի վիճակն անտանելի է դարձած: Վանքն անխնամ, միաբաններըը ցրուած, եւ պաճներըը օրապահիկ հացի անդամ կարօտ մնացած· իսկ տնտեսական գրութեան մասին խօսք լինել անգամ չէ կարող իրերի այսպիսի վիճակի մէջ: Նախկին ուխտաւորների կենտրոն Մշոյ վանքն այժմ ճանաչել իսկ դժուար է:

—Դոտորաճներից ազատուած որբերի խնամելու խնդիրն օրական խնդիր է այժմ Ցամքահայաստանում: Ամեն տեղ աշխատում են, որչափ կարելի է օգնութիւն հասցնել որբերի կացութիւնը բարւոքելու համար, կազմուում են ընկերութիւններ, յատկացնում են որոշ հասոյթներ, թէև շատ չնչին չափով այժմեան մեծ կարիքի նկատմամբ: Կ· Պօլսի պատրիարքարանի մէջ կազմուած է մի առանձին յանձնախումբ Սրբ· Պատրիարքի նախագահութեամբ և Տ· Վահրամ եպ· Մանկունու անդամակցութեամբ, որը պիտք է հսկէ զանազան կենտրօններում որբանոցների խնամատարութեան և հոգայ կարելուն չափ նպաստներ ժողովել, մանաւանդ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ որբերի խնամատարութիւնը հետզհետէ անցնում է օտար քարոզչական ընկերութիւնների ձեռքը, որոնք աշխատում են խնամատարութեան հետ տարածել նաև իրենց վրայ առնել: Պատրիարքարանն ի նկատի ունենալով այդ դասախարակութեան հետևանքը և օտար հաստատութիւնների մէջ ապաստանած հայ որբերի հայ եկեղեցուց չկորելու խնդիրը, մի կողմից հոգս է տանում որբերին պատսպարել տալ բուն ազգային հաստատութիւնների մէջ և կրթել ազգային ոգով, իսկ միւս կողմից առաջնորդների միջոցով արդէն դիմել է որբանոցների օտար տեսչութիւններին, պահանջելով չկորել հայ որբերին հայ եկեղեցու կապակցութիւնից: Այդ արդար պահանջին գոհացում տրուելով, ինչպէս տեղեկանում ենք, այժմ հայ որբերը Հայոց եկեղեցի են յաճախում:

—Մխիթարեանները առաջարկել են Վանի առաջնորդարանին՝ կամ մեծ վանքն իրենց յանձնել՝ այնտեղ հայ որբանոց բանալու համար, այն պայմանով, որ վանքի բոլոր նիւթական ու բարոյական մատակարարութիւնը իրենց ձեռքը լինի (·՞՞): Առաջնորդարանը ընդունեց նոցա առաջարկի առաջին մասը, իսկ երկրորդը մերժեց: Եւ որբանոցը .... գեռ չբացուեցաւ:

Ամերիկական միսիոնարական ընկերութեան բացած գպրոցի երկսեռ աշակերտների թիւը Վանում արդէն 300-ի է հասել, որոնցից 200-ի որբ ու անօգնական երկսեռ դիշերօթիկներ են, իսկ 100-ը երթևեկ: Այդ թիւն արդէն 500-ի հասած կլինէր, եթէ յարմարաւոր ու ընդարձակ շէնք ունենային: Վարագայ վանքի տեսչութիւնը տեսնելով տեղի նեղութիւնը՝ առաջարկեց 50-ի չափ որբեր տեղաւորել Վարագում՝ վանքի ծախքով իրենց մօտ, բայց մերժուեցաւ այդ առաջարկութիւնը, որովհետև միսիոնարները կամենում են իրենց անմիջական տեսչութեան տակ պահել բոլոր որբերին:—Այդպիսի որբանոցների թիւն այժմ բազմաթիւ է արդէն· և երևակայել պէտք է թէ ինչ կրթական և բարոյական աշխատակցութիւն է, որ անում է Ամերիկ· Միսիոներական ընկերութիւնը, որի համար ոչինչ ծախք չեն խնայում: Ի հարկէ, Ազգ· Պատրիարքարանը իւր սուղ ու չնչին միջոցներով չպէտք է կարողանայ մրցել նոցա հետ· իսկ այս ամենը շատ խորհրդածութիւններ դուռն են բաց անում մեր առաջ .... Որբերի նորակազմ խնամակալութեան կարգադրութեամբ 120 որբ ազգ միայն առ այժմ կարող են Ազգ· հիւանդանոցի մէջ ապաստանարան դանել, որոնց պիտի յաջորդեն և ուրիշները, այն ինչ օտարների որբանոցները ի-

բննց սանների թիւը շուտով հազարներով կը հաշուէն։

— Ուրֆայում Ամերիկ. միսիոնարուհի միս Տաարքի ձեռներեցութեամբ բացուած որբանոցի մէջ սկզբում ապաստանարան ըստաց 77 տղայ և 83 աղջիկ սանների թիւը 200-ի է հասել։ Այդ որբերի մի մասը խնամուում են Քէմպըրիճի համալսարանի ուսուցչապետ Հէրիսի և իւր կնոջ օժանդակութեամբ, իսկ միւս մասը ամերիկացի բարեգործներին։ Այդտեղ մաս ունի և Գերմանիայում վերջերս կազմուած մի ընկերութիւն՝ Բեռլինի ուսուցչապետ յայտնի Լէպսիուսի նախաձեռնութեամբ (որը ունի և իւր առանձին օրգանը Cristliche Oriant)։ Արդէն Ուրֆայ են հասել միս Պատրուզի (որն արդէն սկսել է հայերէն սովորիլ), Փալշէր և Ըկարտ գերմանական ընկերութեան ծախքով պահուող որբերի խնամատարութեան համար։ Ոսկ ընդհանուր վերահսկողութիւնը ճնում միս Տաարքի վերայ։

— Ռոտոսի Բօրդէզ իշխանուհին յանձն է առել որդեգրել և դաստիարակել մօտ 25 երկտեռ հայ որբեր։ Նորերս Ջենովա ուղարկուեցան Մալթացի 4 աղջիկ և 8 տղայ հայ որբեր՝ այնտեղ դաստիարակուելու համար։ Դոցա հետ ուղարկուեցան և Ազարեան պատրիարքի կողմից իննը որբ՝ Նէապոլ հասցնելու համար։ Ռոտոսական դեսպանի կնոջ ձեռքով Ջենովա են ուղարկուած Արաբկերցի 6 աղջիկ և 5 տղայ որբեր, որոնցից առաջինները պիտի դաստիարակուին Մոնտմանսօ քաղաքում իսկ վերջիններըը Ռեկանատօյում։ Եթէ այս եղանակով շորսնակուի հայ որբերի խնամատարութեան խնդիրը, շուտով կոտորածներից ազատ ճնացած բոլոր որբերը դանագան քարոզչական ընկերութիւնների ձեռքը կանցնին, որոնց հոգատարութեան ու խնամատարութիւնն այնքան էլ բուն քրիստոնէական ոգուց բղխող ազբիւրներից չեն։ Մի քանի տեղերից արդէն հայ որբերից ոմանք թողում փախչում են, առաւել լաւ համարելով նախկին խեղճուկ վիճակը՝ քան այդպիսի դաստիարակութիւնը։

— Լոնդոնի մէջ բնակուող հայերը իրենց մէջ հանդանակութիւն անելով յօդուտ որբերի՝ ուղարկել են ի տնօրինութիւն Ս. Պատրիարքի։

ԲՈԼԳԱՐԻԱ.

Բուլղարիայի իշխանապետութեան հրամանով երկրի ներսի քաղաքները բռնութեամբ ուղարկուած հայ գաղթականներից շատերը նորից վերադառնում են վառնա, որովհետև ոչ մի գործ չկարողացան գտնել ուղարկուած տեղերում։ Կառավարութիւնը ոչինչ արգելք չէ դնում նոցա վերադարձին։ Շատերը պատրաստուում են վերադառնալ կրկին Կ. Պոլիս, իսկ ոմանք այլ տեղ գաղթել։ Նպաստ այժմ ընդունում են միայն հիւանդներն ու խիստ կարօտեալները։ Առաջին օրիական շոգենաւով վառնա հասնող 8—10 ընտանիք գաղթականները, որոնք Պօլսից Կիպրոս և Բերիա էին գնացել, պատմում են, որ Միջերկրականի կողմերն ապաստանող հայ գաղթականները մեծ նեղութեան մէջ են, որովհետև աշխատանքի ոչ մի տրիք չկայ։

— Ամգրիայից 10 տնդուկ հանգրձեղէն է ստացել Օր. Փրայդէր Ջատկական տօներին վառնայում եղած կարօտ հայ գաղթականներին բաժանելու համար։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԹԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ Վ. ԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն Տ. Դարեղին քահանայի Խաչատրեանի, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ ղանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Դեր. փոխ-Թեմակալին Նրեւանայ. հմ. 135։

— Յանուն Տ. Վարդան քահանայի Վաղարշապատ գեղջ հմ. 136, որով շնորհի նմա կոչումն աւագ քահանայութեան, ըստ միջնորդութեան Դեր. փոխ. Թեմ. Ս. Լեւանի։

— Յանուն Սիմէոնի հմ. 137, որով պատուիրեցաւ շրջաբերականաւ հրատարակել, զի յետ այսու վանն զրծոց պսակի մի

դիմեսցեն առ վեհափառ Տէրն, այլ առ մեր ձառոյն իւրեանց հոգևոր իշխանութիւնք։

— Ցանուն Տ. Աբել քահանայի Դ.ըղբլթամիր գեղջ հմր. 154, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական վան ժրաջան ծառայութեան նորա յօդուտ եկեղեցւոյ տեղւոյն և գաղթականաց։

— Օրհնութեան յանուն քաղաքական ժողովոյ Կ. Պոլսոյ հմր. 168, որով յուշ առնի նոցա զպարտաւորութենէ իւրեանց։

— Ցանուն կրտսեր լուսարարի Մայր տաճարի Տ. Ադամ վարդապետի հմր. 177, որով շնորհի նմա լանջախաչ ականակուռ։

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն Հայուհեաց բարեգործական ընկերութեան Դաւրիժոյ՝ հմր. 184։

— Ցանուն Տ. Կորիւն վարդապետի հմր. 187, որով կարգի քարոզիչ գիւղօրէից Իջմիածնի գաւառի յընթացս մեծի պահոցս։

— Ցանուն Տ. Մեսրովբ քահանայի Մելեան հմր. 209, որով շնորհի նմա կամիլաւկայ զգեստ։

— Հաստատութեան նորընծաիւ հոգաբարձութեան թեմակ. հոգևոր դպրանոցին Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ հմր. 211։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Սահակեանոսի Դաստպարբէկեան վան 10-ամեայ արդիւնաւոր և հաւատարիմ ծառայութեան նորա ի պաշտաման զանձապետութեան ս. Իջմիածնի և Հին Նախիջևան՝ հմր. 212։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Սարգսի Թամազեան Ասարեանցւոյ հմր. 217, վան նուիրելոյ նորա զքարեայ տունն իւր արժողութեամբ 5000 րուբլեաց ի սեփականութիւն աղքատանոցին Ասարեանի։

— Ցանուն Կրօն. ժողովոյ Կ. Պոլսոյ հմր. 227, որով լուծեալ համարի պատկն Մարիամու Սարուխանեան ընդ Գարեգին Նշանեան ի պատճառս ընդունելոյ առն նորա յԱմէնս զգաւանութիւն յունաց և ամուսնանալոյն ընդ պլուժ հնոջ, թոյլատրելով յիշեալ Մարիամու մնանել ի նոր ամուսնութիւնն, լսած միջնորդութեան կրօն. ժողովոյ։

— Մխիթարական յանուն պ. Վահրամայ Մուրադեան հմր. 229, ի պատճառս մահուան հօր նորա Կարապետ—Աղայի։

—Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի, հմր. 248, որով պատուիրի յատկացուցանել զարդիւնս մոմավաճառութեան թեմին Երևանայ հոգևոր Դպրանոցի տեղւոյն, և այ և թոյլ տալ վճռ. Աաենին ժողովել տարեկան նուէրս յեկեղեցւոց թեմին ի նոյն կէտ նպատակի։

— Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի հմր. 252, որով Տ. Մեսրովբ Արքեպիսկոպոսն կարգի ի վանահայր Երնջակու ս. Կարապետի վանուց, իսկ արդի վանահայր Տ. Միքայել վարդապետն Տ. Մինասեան փոխադրի ի Հաղարծին պաշտօնիւ վանահայրութեան։

— Օրհնութեան յանուն Աղէքսանդրի Տ. Սարգսեան հմր. 259 վան նուէրի նորա հնադիտական ժողովածուի։

— Ցանուն Սինոդի ս. Էջմիածնի հմր. 278, որով պատուիրի թողուլ զՏ. Սարգիս քահանայն Շիրեան Սորաշէն եկեղեցւոյ Ցըմրպեաց ի նոյն եկեղեցւոջ յօգնականութիւն Տ. Գէորգ աւագ քահանայի Տէրտէրեան, որպէս անօրինեալ է վան նորա յամին 1895։

— Ցանուն Գեր. Տ. Մեսրովբ արքեպիսկոպոսի, որով կարգի վանահայր Երնջակու ս. Կարապետ վանից. Թ. 283։

— Ցանուն Տ. Մարտիրոս քահանայի Դանձապետեան Նոր Նախիջևանի, որով շնորհի նմա արտօնութիւն կրել զկամիլաւկայ, Թ. 302։

— Ցանուն Տ. Գրիգոր քահանայի Բաղեշցեան Նոր Բայազիտու, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 305։

— Ցանուն Տ. Արիստակէս քահանայի Նալբանդեան Աղէքսանդրապօլու, որով շնորհի նմա խաչ լանջական. Թ. 306։

— Ցանուն Տ. Աբրահամ քահանայի Սպանդուճեց, որով շնորհի նմա արտօնութիւն կրել զկամիլաւկայ. Թ. 309։

— Ցանուն Տ. Ահարոն քահանայի Օշականի զեղջ, որով շնորհի նմա արտօնութիւն կրել զկամիլաւկայ. Թ. 311։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Առ 22 Մարտի տարւոյս Ճեմարանիս հանգուցեալ ուսուցիչ Վարդան Աբովեանի որբերի անունով ստացուած նուէրների գումարն էր ընդամէնն 1672 ռուբլի 77 կոպէկ: Առ 28 ապրիլի ստացուեցաւ նոր նուէրներ. ա) Իճեսարաբիոյ և Նոր-Նախիջեւանի թեմի կառավարիչ Բարձր. Յուսիկ վարդապետն ուղարկեց առանձին ցուցակով հանգանակած նուէրներ 200 ռուբլի. բ) Արցախու թեմի կառավարիչ բարձր. Գարեգին վարդապետ Սաթունեան ուղարկեց առանձին ցուցակով հանգանակած նուէրներ 306 ռուբլի. գ) Մեծ. սիկին Աննա Աթամալեանց իւր նորոգ հանդուցեալ ամուսնին հանգուցեալ Միրզա Աթամալեանցի յիշատակի համար բազմից ուղարկեց նուէր 500 ռուբլի և դ) Վեհափառ Հայրապետի Դիւանից ստացուեցաւ պ. Աբգար Յովհաննիսեանի շնորհիւ Թիֆլիսում հանգանակած գումար 250 ռուբլի: Ընդամէնը մարտի 22-ից մինչև ապրիլի 28 ստացուած նուէրների գումարն է 1256 ռուբլի, որ աւելացնելով մինչ ցայն ստացուած գումարի վերայ, յանուն Վարդան Աբովեանի որբերի ստացուած բոլոր նուէրների գումարն առ 28 ապրիլի տարւոյս կլինի 2428 ռուբլի 77 կոպ:

Տեսուչ Ճեմարանի՝

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ.

ԱՋԴՈՒՈՒՏ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Քանի որ անուրանալի փաստ է հնադէտների համար, որ առանց ի մօտոյ ծանօթ լինելու հաւաքուած և գտնուած հնութիւնների պեղումների տեղին և գտնուի տեղեկութիւններին՝ դժուար է ճիշտ եզրակացութիւն անել հնութիւնների վերաբերութեամբ. և քանի որ մենք մեր հաւաքած հնութիւնների մի փոքրիկ մասն Ազգիս Վեհափառ Կաթուղիկոսին մատուցանելու բաղդն ունեցանք՝ լաւ հասկանալով, որ տեղական հնութիւնները աւելի ցանկալի է Ս. Էջմիածնի թանգարանում ամփոփել՝ քան թոյլ տալ հեռու տեղեր տանելն, սոյն երկրագրովս անհրաժեշտ ենք համարում դնել մեր հաւաքած հնութիւնների անուններն, հաւաքման և պատահմամբ պեղման տեղերն և մեր ամփոփ տեղեկութիւնները, որպէս զի մեր հաւաքած հնութիւնները ուսումնասիրողը կարողանայ աւելի ճիշտ եզրակացութեան հասնել դոցա վերաբերութեամբ:

1. *Անդրջրհեղեղեան դար.*

Երկու հարիւր կտորից և քսան տեսակից աւելի քարացած կենդանական և բուսական մնացմունների նախնական տեսակներ՝ կրինայ, օձեր, խխունջներ և բոյսեր, որոնք հանուած են «Վայոց Ձոր»-ի սահմանների մօտ գտնուած՝ Ալմալու, Օղբին, Ազատկ, Մարտիրոս, Մալիշկա, Ութդառան և Փաշալու գիւղերի կաւային շերտերով բլուրներից, որոնք մօտ լինելով «Դալիք Թափայ» հանգած լեռան՝ պարզ ցոյց են տալիս, որ այդ տեղ՝ շնորհիւ հրաբուղխի՝ ցամաք է դոյացել, պատճառ դառնալով ջրային կենդանիների քարանալուն:*

2. *Բրօնզեան դար.*

Մի հատ հին հեթանոսական բրօնզեայ կոթաւոր եռոտանի երկաթեղն ճրագ՝ երկայն խողովակներով և գլուխն հատած ծայրերով՝ (en taille) դորագիծ գիւղի մօտ եղած մի բլրակի վերայ, որն ամիոփուածք լինելով բարձր սիւնաձև պատուանդանի վերայ՝ գտնուել է տասն արշինաչափ խորութեան մէջ: Բրօնզեայ վղնոց, միապաղաղ քալկեդոնիկ քարից (Agate calcédonique) տերևադրոշմ քանդակով մատանի, զանազան յօրինուքներ, տեգ, վեց կտոր անյայտ գործիքներ, ինչպէս և բրօնզի կտորներ և մի հատ բրօնզեայ դրամ ասպաղանչան և գուցէ՝ ասորական տառերով:

3. *Նախաքրիստոնէական դարերից.*

Վեց հատ կաւեայ անօթներ՝ կարմիր և սև գոյներով նկարուած, որոնցից մէկը շատ մեծ (սուրահի ձևով, գաւաձև), երկուսն բոլորշի, խոր գաւաթաձև, մէկը ճոռատուր գաւաձև, միւս երկուսն կանթեղաձև, որոնցից ունկատուր գաւաթաձևն գտնուած է կրապաշտական գերեզմաններից Կարմիր վանք կոչուող մենաստանում, որն նախօրօք՝ մեր կարծիքով՝ Արծրունեայց գրեհակն լինելով, ինչպէս ցոյց է տալիս շրջապարսպի ձևն և աւազ գրան ճաւկատի պինդպրօշն (արծիւ՝ մարմինը լրած ոչխարի մարմնի մէջ). շատ հաւանական է, որ դեռ շատ հնութիւններ է պարունակում իւր մէջ այդ վանք—գրեհակն իւր շրջակայքով, որին իրր ապացոյց կարող է լինել այն, որ Ս՛ոսկուայի Հնագիտական Ընկերութեան անդամ պ. Փէօդորովն գտել է այդ տեղից կաւեայ ար-

* *Պէտք ենթադրել, որ քարացած խոշոր տեսակի ծովային-աստղ է: Ծ. Խ.*

ձան, բաւական թուով բրօնզեայ դաշոյններ, ա-նօթներ եւայլն։ Նոյնպէս և «Վայոց Ձորը», որտե-ղից մեր հնութագրութեամբ, Աղէքսանդր Մակե-դոնացին անցած լինելով, ամեն տղդի տարապի, զէնքերի, իրեղէնների և դրամների առատ աւար թողած պիտի լինի։ Վեց հատ դրամ պրատաշատական, երեք հատ Արշակունեաց — Պահլաւունի, երկու հատ հեթանոսական և տասն հատ հին արաբական քիւֆի տառերով, բոլորն էլ արծաթի։ Նոյնպէս հետևեալ պղնձի դրամները։ Մի հատ անյայտ՝ կուռքի պատկե-րով, չորս հատ հին արաբական ձկակիր, եր-կուսն երկարաձև, մեկ հատ Թռչնակիր՝ սի-րամարդ, բազ, ջայլամ, հնդկահաւ, կաքաւ, մի հատ երկայնաձև՝ սրակիր, ութն հատ կենդանակիր՝ փղի, ուղտի, բորենու, այծի, ցլի, նապաստակի և եղջերուի նկարներով, մեկ հատ աստղակիր՝ գուցէ՝ ասորական տա-ռերով և մի հատ քիւֆի տառերով և կարի-ճի նկարով։

4. Քրիստոնէական դարերից։

Մի հատ գրչագիր մաշտոցեայ «Մանր ուսմունք» առանց յիշատակարանի. երկու հատ արծաթի և երկու պղնձի դրամներ, ո-րոնցից մեկը՝ Յաչակրաց ժամանակից, մեկը հռոմէական, մեկը յունական, իսկ միւսը հայկական՝ Հեթում Թագաւորի ժամանակից։

Վերջացնում ենք երկտող սոյն համեստ կարծիքով, որ աւելորդ չէր լինի, եթէ Ս. Էջմիածնի կողմից մի հնագէտ յանձնարա-ուէր շրջակայքի հնութիւնները Ս. Էջմիած-նի թանգարանի համար ժողովել, որոնցից շատ շատերն, սեփական փորձերից գիտենք, շատ ընդին դրամով կարելի է գնել իւր տե-ղում, քանի կը հասներ Եւրոպական ճա-նապարհորդ—հնագէտ և առաւել թանգ վճա-րով կը հաւաքէր մեր կողմերից հեռացնելու հա-մար այն հնութիւնները, որոնք աւելի յար-մար են իրենց տեղումն ուսում մնասիրելու հա-մար։

Աղէքսանդր Տէր Սարգսեանց։

22 մարտի 1897 թ.
Ս. Էջմիածին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ։

Ներկայ յօդուածս առաջարկում եմ հայ Օրացոյց կազմողների ուշադրութեան և յուսով եմ որ իմ այս մի քանի նկատողու-թիւնները առիթ կտան մասնագէտին աւելի և աւ քննել և լուսաբանել այս հարցը։ Նօսքս յատուկ անուանների գրութեան մէջ պատա-հող սխալների մասին է, որոնք ոչ թէ պատա-հական կերպով, իրրև տպագրութեան վրի-պակ, աչքի են ընկնում այլ տարեցտարի մը-նալով Օրացոյցներում այսօր այնքան են շա-տացել և աղաւաղել ուղղագրութիւնը, որ շատ անգամ մարդ հաւատալ չէ ուզում թէ այս ինչ անունը յունական այն ինչ անուանն է համապատասխան։

Դժբաղդաբար այսպիսի կոպիտ սխալներ, որոնք մեզ ռուսահայերիս համար սովորա-կան են դարձած, այսօր կրկնուում են և Ե-րուսաղէմում տպագրուած Օրացոյցների մէջ, ուր տպագրական գործին և լեզուի վերա-բերեալ օրէնքներին կարծես թէ աւելի ու-շադրութեամբ են վերաբերուում։

Իհարկէ, ես այստեղ մի կողմն եմ թող-նում յատուկ անունների այն ուղղագրու-թիւնը, որը հետևանքով տրանսկրիպսիոնի ընդհանուր կանոնների, կարելի է ասել, դա-րերի ընթացքում քաղաքացիական իրաւունք է ստացել, կամ որը, ենթարկուելով լեզուի որոշ հնչական կանոններին, փոխել է իւր ուղղագրութիւնը. բայց ցաւ ի սիրտ պէտք է ասել, որ այս սխալներն առաջ են եկած լոկ ազիտութիւնից մի անգամ և հիմայ մենք անտարբեր վերաբերուելով հարցին, այս մի անգամ ապած սխալները կրկնում ենք և կրկնում։ Օրինակ, մի անգամ ընդունուած է գրել Դաւիթ և ոչ Դաւիդ, ինչպէս որ պէտք էր։ Թաթոսլ և ոչ Թադոսլ (Θεοδωρ), Նունէ և ոչ Նիւնէ, Կոստանդիանոս և ոչ Կոնստանտի-նոս, Աթանագինէ և ոչ Աթենոգենէ, Բազարատ և ոչ Պագրատ և ուրիշ։ սրանք այսպէս էլ պէտք մնան։ Հարցն ուրիմն ազիտութիւնից առաջ եկած սխալների մասին է։ Ահաւասիկ այս սխալները, որ իմ կարծիքով պէտք ուղ-ղագրուին։

ՅՈՒՆՈՒԱՐ. 21· Պօղիքտոսի՝ փոխանակ Պողևկտոսի կամ Պողևկտոսի։ Այս անուան առաջին վանկը Պօղոս անուան հետ կապ չունի։

27· Եւգինէոսի փոխ. Եւգենիոսի։

30 · · · · · և Եվլեթիւրոսի · · · փոխ. Եվլեթերոսի · · · ·

ՓԵՏՐՈՒԱՐ 7· Յօնանու փոխ. Յոնանու կամ Յովնանու։

ՅՈՒՆԻՍ 4· Բագոսի փոխ. Բակքոսի · · · · ·

30· Անիքտոսի փոխ. Անիկիտէսի։

ՕԳՈՍՏՈՍ 7· Պիստոսի փոխ. Պիստոսի։ Սա մի կոպիտ սխալ է, քանի որ կանացի անուններն երբէք ու չեն կարող վերջաւորուիլ։

ՍԵՊՏԵՄԲ. 22· Փիլիկտիմոնի փոխ. Փիլոկտիմոնի · · · · և Սիմէոնի Սիւնակեցւոյն փոխ. Սիմէոնի Սիւնակեցի, քանի որ ուղ. հոլ. սիւնակեաց է, ուրեմն սեռ. պէտք է լինի սիւնակեցի և ոչ սիւնակեցւոյն։

23· · · · կուսանացն Փևփրոնեայ փոխ. Փեբրոնեայ։

27· · · · և Ռոմանոսի երգեցողին փոխ. Ռոմանոսի կամ Հռոմանոսի։

29· Ղամբէոսի և Ղամբէուհւոյն = Eulampios և Eulampia· — Այս անունների ևս վանկը շաղկապի (և) տեղ ընդունելով, հետզհետէ վերացել է, թէև ինձ կարող են առարկել, որ Եւսեբէոս անունը Հայերը Սեբէոս էլ են գործածում սակայն այսպիսի կրճատումներ կարող են միայն գործածական բառերի մէջ լինել, և ոչ թէ այս երկու սակաւ գործածական անունների մէջ։ Ցամբնայն դէպս գուցէ Ղամբէոսը Հայկական է, բայց պէտք է գրել Ղամպէոս։

30· Եւստաթէոսի և կնոջն Նորա Թէոփիտոսի և կուսանացն Երմոնեայ և Նեքտարինեայ· պէտք է լինի Թէոպիտոսի (գարձեալ կանացի անուն ու վերջաւորութեամբ)։ Երմիոնեայ և Նեկտարինեայ։

ՀՈԿՏԵՄԲ. 7· Պեղիգիայ փոխ. Պելագիայ · · · ·

9· Պանդալեոնի փոխ. Պանդելեմոնի։

14· · · · և Սիւղիանոսի փոխ. Սիւղուանոսի։

21· · · · և Ռոմիլայ փոխ. Ռոմիլայ կամ Հռոմիլայ։

ՆՈԵՄԲ. 10· · · · Բուբայ փոխ. Բիւբայ։

25· · · · Տարագրոսի երէց Տարաքոսի, Պրոպոսի փոխ. Պրոբոսի։

29· · · · և Բարդուղիմէոսի փոխ. Բարթուղիմէոսի։

ԴԵԿՏԵՄԲ. 8· · · · եւ Գրաբոսի փոխ. և Եւգրաֆոսի։ Այստեղ ևս եւ վանկը ընդունած է շաղկապի տեղ· ուրեմն պէտք է լինի Եւգրաֆոս — Eugraphus·

11· Օգսէնտիոսի փոխ. Օքսէնտիոսի։

16· Եւտիկի փոխ. Եւտիքի։

18· · · · Սրբոց կուսանացն Ինգոսի, Թոմնայի և Գղերիկոսի քահանային։

Ահա մի մեծ սխալ. Ինգոսը (այն էլ Ինգիսը) եղել է ներքինի, ինչպէս երեւում է Վարք սրբոցից, բայց օրացոյցի մէջ դուրս է գալիս, որ կոյս է։ Աւելին ի՞նչ մեղաւոր էր Մ···քահանան, որը նորերս մեր քաղաքում մկրտեց Խ···ի աղջիկը և անունը դրեց Ինգոս։

Ինչ կվերաբերի Գղերիկոս քահանային, սա Գղիւկերիոս՛ն է։

Գուցէ լսացի այս սխալներից ուրիշներն էլ կան, թող հետաքրքրուողը գտնէ. նոյնպէս եթէ իմ այս գրուածքիս մէջ թիւրիմացութիւններ կան՝ պարզէ։*

Սահակ Թանղեան։

Ն. Նախիջեւան
5 Ապրիլի·

* Յարգելի յօդուածագրի դիտողութիւնները վերաբերում են առաւել Օնացուցի ուղղագրութեան, քան թէ Օրացոյցներ կազմողներին, որոնք այդ անունները պարտական են տօնացուցի համաձայն գրել· ուր այդ սխալները շատ հին են, ինչպէս առհասարակ յունական շատ անունների հայերէն տառադարձութիւնները։ Տօնացուցի այդ սխալներն այն քան հին են· որ մինչեւ իսկ շարականների մէջ են սպրդել· օրինակ՝ Գրափոս է գրած շարականի մէջ, որ պէտք է Եւգրափոս լինէր։ Տօնացուցի մի նոր քանասիրական եղանակով պատրաստուած հրատարակութեան մէջ կարելի կլինի ուղղագրել այդ օրինակ շատ սխալներ։

Ծ· Խմբ·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ.

1· Յարուցեալ Յարուցիչը · · Կ· Վ· · · 145
2· Քրիստոնէական տօների սկիզբը եւ պասէքի վիճակը · · · · Կ· Վ· · · 147
3· Նէս միլիօն Զուիցերացիների ուղեցոյցը Հայոց օգտին · · · · Թարգ· Գ· Ս· · 151
4 ՆԿՆՂԾՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ · · · · · · · 155

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5· Պարթեւները Պարսկաստանում· · Ն· Ք· · 157
6· Նիւթեր Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան համար · · · Խ· Վ· · · 161
7· 26 Ապրիլի · · · Յ· Յովհաննիսեան · 165

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՒԻՐԱԿԱՆ.

8· Հայոց գրականութիւնը պարտական է մնում Հայ մայրերին եւ զաւակներին· Ս· Մ· · 164
9 Ինքնակրթութեան գործը Ամերիկայում Ս· Սմայլս 169
10· ՄԱՆՐԱԼՈՒՐՔ · · · · · · · 172

ԱԶԳԱՑԻՆ.

11· Կենդանի հովուութիւն · · · · · 175
12· ՆԿՆՂԾՈՅ ՀԱՑԱՍՏԱՆՅԱՑՑ · · · · · · ՄԱՑՐ ԱԹՈՌ · · · · · · · ·
ՌՈՒՍԱՀԱՑՔ· · · · ·
ՏԱՇԿԱՀԱՑՔ· · · · ·

ՊԱՏԱՍՏՈՒՆԱԿԱՆՔ.

ՆՈՄԱՆ Խմբագրութեան·
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·
ՑԱՒԻԼՈՒԱԾ· Դրիգոր Խալաթեցի· Գ· Խալաթեան·
ԾԱՆՈՒՑՈՒՄՆ·
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1897 Թ. ԱՊՐԻԼ

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՂԼՅԻՒ»

ԳՐԻԳՈՐԻ ԽԼԱԹԵՑԻՈՅ.

Պատմական վիպասանութիւն

—

ՆԱԽԱԲԱՆ.

*Գրիգոր Խլաթեցին՝ «որդի Ծերին» կամ Ծերենց մականունով, ծագկել է ԺԲ-րդ դարու վերջերին և ԺԳ-րդի առաջին քառորդում՝ իբր մայրենի Խլաթ Ծննդավայրից ստացած լինելով Խլաթեցի կոչումը: «Սնեալ և վարժեալ ի զորձ քահանայութեան առ սուրբ Ձգնաւորի միոյ Վարդան կոչեցեալ», ասում է Խլաթեցու վարքագիրներից մէկը, «ի հռչակաւոր ուխտն ս. Ստեփաննոս Ձիպնավանք կոչեցեալ» և «վեց ամ սպասաւորեալ նմա»,—դնաց այնուհետև Գրիգոր կատարելագործելու իբր ուսումը Սիւնեաց Երնջակ գաւառի Ապրակունեաց վանքը «մեծ վարժապետ» Յոհան Որոտնեցու մօտ՝ ուսումնակից ունենալով իրեն Համանուն՝ յետոյ մեծահռչակ Տաթեւացուն, և մնաց այնտեղ ութ տարի. իսկ Յ. Որոտնեցու մահից (1386 Թ.) նա գարձաւ իբր բնիկ գաւառը՝ «իբր հոգեւոր հարազատ և համբերակ» գիտնական Սարգիս վարդապետի մօտ՝ Քաջբերունեաց Արձէշ քաղաքի Սուխարայ վանքը և տասն տարի «բազում աշխատութեամբ պեզերեալ», ստացաւ նորանից աստիճան վարդապետութեան: Խլաթեցու կեանքից յիշւում է այնուհետև, որ նա ճանապարհորդել է վարդապետների և աշակերտների ուղեկցութեամբ դէպի Սուրբ քաղաքը (Երուսաղէմ), ուր կացել է երկու տարի: Հաւանական է, որ այդ միջոցներին լինի վանձանած Սարգիս վարդապետը (1401—1402 Թ.) որին՝ ինչպէս յայտնի է, յաջորդում է Սուխարայ վանքում նորա աշակերտ և Խլաթեցու ընկերակից Վարդան վարդապետը՝ Հոգւոց վանքի ուխտից. իսկ սորա մահից յետոյ, որ հանդիպեց Տոսպայ Սալնոպատ վանքում, ուր հետացած էր սա բարբարոս այլազգիների երեսից,—նոյն Սուխարայ ուխտի առաջնորդութիւնը վարեց կարճ ժամանակ Խլաթեցին: Սակայն իբր նախորդի պէս նեղուելով այլազգիների արշաւանքներից և սիրուած լինելով Թողնել Սուխարայ ուխտը, նա հետացաւ իբր առաջին ուսումնատեղին՝ այն է Բզնունեաց Արծկէ քաղաքի Դաստակ կամ Ձիպնայ անապատի Ստեփաննոս Նախավկայի վանքը: Այստեղ անցրեց Գրիգոր իբր կեանքի մնացեալ օրերը՝ շարունակ նուիրուած լինելով գրական գրաղմունքներին և բարեգործութեան և մեռաւ մարտիրոսական մահով՝ նահատակուելով քրդերից 27-ին Մայիսի, 1425 Թուին՝ 75 կամ 80 տարեկան հասակում:[1]

Այս հաշուով Գր. Խլաթեցին պէտք է ծնուած լինի մերձաւորապէս 1350 Թուականին,—իբր սկզբնական ուսումը և կրօնաւորական կոչումը ստացած Վարդան Ձգնաւորի մօտ 6 տարի մնալուց յետոյ՝ մօտաւորապէս մինչև 1375 Թ.,—կատարելագործած իբր ուսումը Յ. Որոտնեցու մօտ՝ 8 տարուայ ընթացքում՝ որ ասել է՝ ոչ ուշ քան 1385 Թ. (որովհետև յաջորդ Թուին վախճանուեց «մեծ վարժապետը»),—և վարդապետական աստիճան ստանալու համար դեգերած՝ լինելով Սարգիս վարդապետի մօտ՝ 10 տարի, այսինքն ոչ ուշ քան 1400 Թուականը (որովհետև այդ միջոցներին վախճանուեց Սարգիս վ.): Եթէ Խլաթեցու Երուսաղէմ գնալն ևս դնենք նորա վարդապետական աստիճանն ստանալուց յետոյ՝ նախ քան վանահայրութիւնը, պէտք է որ այդ ուղեւորութիւնը եղած լինի 1400—1405 Թուերի մէջ, որովհետև յաջորդ 1406-ին նա ստանձնեց Սուխարայ ուխտի և կարճ միջոցից Ձիպնավանքի առաջնորդութիւնը:

Ժամանակակիցները—Թոմա Մեծոփեցի, Առաքել Սիւնեցի և այլք—մեծ գովութեամբ են խօսում Խլաթեցու մասին. «ոչ գովով նը-

---

1. Տես Առաքել (ըստ երեւութին՝ Սիւնեցի, աշակերտ Խլաթեցու) վարդապետի ճառը—„նահատակութիւն Խլաթեցի Գրիգոր ծերենց վարդապետի“ ձեռագիրը Բայսմատուրքից քաղած—„Նօտարք Հայոց“, Տաւաք. Ղեւոնդ վ. Փիրղալէմեան, Կ. Պոլիս, 1888, էջ 75—77: Նոյն Առաքել Սիւնեցին իւր „Նեղութեղութիւն ի մահ նահատակութեան ծերենց Գրիգոր վարդապետի“ չափաբերականում կոչում է իւր ուսուցչին նաեւ Գրիգորիոս Բզնունի: („Հայեղք“, Տէվկանց, Թիֆլիս, 1883, էջ 175—180.) — Տես նաեւ Թոմա Մեծոփեցի, Պատմ. Լանկթամուրայ, Փարիզ, 1860, էջ 14, 17, 41—45, 83. — Ջամչեան, Պատմ. Հայոց, Գ. 451—452:

ման նմա ողորմած և մարդասէր և ապաշաւոր աղքատաց և անանկաց»։—կոչում են նորան «*մեծ բարեւնապետ, որ ի վերջին աւուրս քան զառաջինն գերագոյն երևեցաւ*»։ որ «*յիսուն և հինգ ամ գիրս գրեաց սիւ և գիշեր անհանգիստ աջովն*»։ որ «*կրկին վկայասէր երևեցաւ և զանցայտ պատմութիւնս սրբոց ի լոյս ածէր*»։ որ «*յոյժ ուսումնասէր գոլով և մարտիրոսաց պատուող՝ մարտիրոսաց պսակացն եհաս*» և այլն։

Գր. Իլխանեցու անունով հասել են մեզ այլ և այլ գրուածքներ։[2] Աւելորդ չենք համարում առաջ բերել գոցա համառօտ ցուցակը՝ օգտուելով մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից։ Հարկաւ ցանկալի էր ստուգել այս ցուցակը Իլխանեցու հնագոյն և ընտիր գրչագիրների հիման վրա և գորանով աւելի ճիշտ որոշել մեր հեղինակի գրականական գործունէութեան ծաւալը, որ պէտք է խոստովանել, սակաւ ծանօթ է և քնաւ չէ ուսումնասիրուած։

1։ *Նախ յիշելու է նորա Տաղերը*, որոնց առնների կամ տողերի սկզբնատառերը սովորաբար հեղինակի անունն են կազմում։ Գրնում ենք այստեղ մի քանի Տաղերի վերնագրերը՝ հետևելով Հ. Տաշեանի «Ցուցակին»։—*Գանգատ ունիմ*, Յարութեան, Յովհաննէս Սազմոսի, Գիւտ գօտւոյն Աստուածածնին։ Վենետիկեան ս. Ղազարի մի գրչագիրը ամփոփում է իւր մէջ 23 ազերբաական Տաղեր։ Թէև ի նկատի ունենալու է միշտ, որ գրչագիրներում շփոթուում են յաճախ համանուն հեղինակների մանաւանդ մանր գրուածքները՝ մէկի երկը միւսին վերագրելով։

2։ «*Ողբ մեռելի*», որ մի քանի գրչագիր Դէորգ Երզնկացուն են վերագրում։

3։ «*Իրատական քաներս լաւ եւ ընտիր*»—*Աւրհնեալ է Հայրն Հուսոյ, Որ սաւգծ ըզմիզ ի հողոյ, Շնորհեաց մեզ միաք հանճարոյ, Առնել զկամս իւրոյ* և այլն, տուներ Ա—Ժ։

4։ Դանձերը, որոնց տողերի սկզբնատառները նոյնպէս հեղինակի անունն են կազմում։ Գնում ենք այստեղ մի քանի գանձերի վերնագրերը՝ հետևելով Հ. Տաշեանի «Ցուցակին»։—Թլփատութեան, Կիրակոսի, Վահանայ Դողթնեցւոյ, Տեառն ընդառաջին, Առաջաւորաց, Առաւմեանց, Թէոդորոսի, Բ. Կիր. Աղուհացից, Կիւրղի, Յովհ. Երուսաղէմացւոյ, Ղազարու, Նոր Կիր., Ներսիսի Մեծի, Փոխման Աստուածածնին, Վարագայ Խաչի, Հր. Առաքելոց, Յովակիմայ և Աննայի, ս. Նիկողայոսի, Թադէոսի և Բարդուղիմէոսի, Ինձնաւորոսի Աստուածալգեցի, Որգւոց Որոտման, Սուքիասանց, Աւագ Բշ. և Գշ., Գ. Կիր. Աղուհացից, պլխատման Յովհաննու, Տապանակի, Դանիէլ Կիրակամատ, Գիշերապաշտման։—Սոցա վերայ աւելացնելու է «Արարատի» 1895 թ. ապրիլ համարում Ն. Քարամեանցի հրատարակած 16 տող գանձը։ Ձեռ տպագիր Գանձարանք։ Հմմտ. նաև Ս. Կանայեանցի կազմած Ցուցակ հայ. ձեռ. Ներսիս. Հոգ. գպրանոցի (Թիֆլիս, 1893, էջ 11—16) հետաքրքրական Գանձարանը՝ 1505 թուին գրուած։ Սակայն աւելի լիակատար է վերոյիշեալ Վենետիկեան ցուցակները, որի մէջ կան պահուած Իլխանեցու 41 գանձերը։

5։ Գանձ ձեռնադրութեան (տպ. Գիրք Ձեռն. Կ. Պօլիս, 1752։)։

6։ «*Վասն Մովսիսի Գրոցն*»—Մեկնութիւն Արարածոց—որ բաւական ընդարձակ ճառ է՝ հետևողութեամբ Բարսղի Վեցօրէից, Արիւստոսեղի, Ականց գրոց և Վարդանայ Մեկնութեան գրուած և հետաքրքրական լեզուի կողմից։

7։ «*Վասն Յետսաց*» (Հատուած)։

8 «*Իսրատ ժամատեղոյ ըստ արևելեան սահմանաց և սկսուածոց և ասութեան սաղաբիւրեն, զոր խնդրեալ ս. վարդապետն Յակոբ Ղրիմեցին ի մեծ լաբեռնեայն Գրիգորի Իլխանեցւոյ*»։

9։ *Ճառ ի ծնունդ ս. Աստուածածնի*։[3]

10։ *Ներքոյ տարեւորական տեղեաց*։

11։ «*Դատաստան կամ որոշումն վասն խնդրոյ երիք պսակի*» այն է Թուղթն Նորա

2. *Հմմտ. մանաւանդ Հ. Ց. Տաշեանի „Ցուցակ Հայ. ձեռ. Մատ. Մխիթ. ի Վիէննա*, 1895—96, էջ 515 *եւ Ցանկը՝ էջ* 1074։

3. *Այս ճառի, յաջորդ Ներբողի, որպէս եւ Իլխանեցու Տաղերն ու Գանձերն ամփոփող վերը յիշած Վենետիկեան լիակատար գրչագրի մասին հաղորդել է ինձ սիրայօժար Արժ. Տ. Եսայրոս Տաշեանը, որին յայտնում եմ այստեղ իմ ջերմ շնորհակալութիւնս։*

(Իլաթեցւոյ) առումն»։ (Ձեռ. Ցուցակ Վենետիկ. ս. Ղազարի գրչագ.)։

12. «Թուղթք» Իլաթեցւոյ։ (Անդ։)

13. Մանաւանդ արժանի է ուշադրութեան Իլաթեցու խմբագրած «Յայսմաւուրքը»։ փոքրը իւր ժամանակ նահատակուած վկաներուն պատմութիւններով հանդերձ. «զիւրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն, ասում է Մեծոփեցին մեր հեղինակի մասին, որ կոչէ Յայսմաւուրց, շարադրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն՝ ի լոյս ետած»։ Այս նոյն երկն է, որ ինչ ինչ յետսամուտ յաւելուածներով տպագրուեց երկու անգամ Կ. Պոլիս (1706 և 1730 թթ.) և մինչև այժմ ևս գործ է ածուում շատ տեղ Հայ եկեղեցիներուն՝ ուր դեռ մուտ չէ գործել Պոլսի վերջին (1834)՝ աւելի կատարեալ հրատարակութիւնը՝ յայտնի Ցէր Իսրայէլի խմբագրած օրինակից։

14. Իլաթեցու վերոյիշեալ երկասիրութիւնների վերայ աւելացնելու է և՝ մինչև այժմ մի քանի կարճ հատուածներով միայն ծանօթ՝ ներկայ «Ճիշատակարանն Աղէտից»,[4] որ գուցէ Զամչեանի (Տ. 451) յիշած «Պատմութիւն վկայից նահատակելոց ի ժամանակս իւր» գրուածքը լինի։ Սա 460 տողից բաղկացած մի չափաբան պատմութիւն է, որ մենք Պատմական վիպասանութիւն անուանեցինք և որը ամփոփում է իւր մէջ Լանկթամուրի և այլ բռնակալների օրով՝ 1386—1422 թուերին Հայաստան տեղի ունեցած զարհուրելի կոտորածների և տառապանքների տխուր անցքերը՝ ժամանակակից երբեմն նաև ականատես մատենագրի ճշմարտապատում և սրտաշարժ նկարագրութեամբ։ Ձը նայած իւր չափաբերական ձևին և բանաստեղծական պարագաներին՝ այս երկը պատմական մեծ արժէք ունի ի միջի այլոց և այն պատճառով, որ նա նոյն ժամանակի պատմագիր Թոմա Մեծոփեցուց աւելի վաղ է գրուած և տեղ տեղ գեղեցիկ կերպով ատուգում ու լրացնում է սորան։

Մեր վիպասանութիւնը պահպանուել է Արծուին քաղաքի Լուսաւորչայ Հայոց եկեղեցում գտնուած բոլորագիր գրչագիր ձայնքաղ Դանձարանի մէջ՝ յիշատակարանի վերջը, որից իմացուում է, որ գրչագիրը գրուած է Վան քաղաքում՝ Հայոց ՋԺԱ=1462 թուին—ուրեմն Իլաթեցու մահից 37 տարի յետոյ։ Ես ընդօրինակել եմ տուել այս գրուածքը յիշատակի արժանի հանդուցեալ Դրիդորիս Արքեպիսկոպոս Աղուանեանցից 1886 թ. ինձ ուղարկած «Ցոմար արձանագրութեան» մի տետրակից, որ արտագրուած էր Կարսի առաջնորդարանի քարտուղար պ. Ի. Դալբինեանի ձեռքով։[5]

Լոյս ընծայելով այս վիպասանական երկը՝ մենք ի նկատի ունինք ոչ այնչափ նորա բանաստեղծական և դեղարուեստական կատարելութիւնները, որովհետև նա արդարև միջակ գրուածք է՝ միջակ ոճով յօրինուած,—որչափ նորա պատմական բովանդակութիւնը և մանաւանդ նորա ընդհանուր արտագրութիւնը և ոգին, որ այնպէս ժամանակակից են և գրեթէ մեր ներկայ անմխիթար վիճակին...

«Ճիշատակարանն Աղէտից» հրատարակում ենք ամբողջութեամբ և անփոփոխ՝ բոլորովին համաձայն մեր գրչագիր օրինակին, բնագրի միայն այլազգի բառերը նոտրագրով նշանակելով և նորա տողերի թիւը որոշելու համար արաբական թուանշաններ դնելով լուսանցքում։ Բացատրութեան կարօտ մի քանի կէտերի մասին աւելորդ չը համարեցինք անհրաժեշտ ծանօթութիւններ տեղաւորել բնագրի ներքև։

Դր. Խալաթեանց։

27 Փետրուարի 1897 թ.
Մոսկուա,
Լազարեան Ճեմարան։

---

4 Այս գրուածքից բոլորովին տարբեր է Գրիգորի (հաւանականօրէն՝ Իլաթեցու) մի Ցաղը. „Ծկայք ողբաս ցուք, – Եղբարք զչարութիւն – Ազգի նետողաց“... եւ այլն. (Տես Ցուցակ հայ. ձեռագ. Ներսիս. Հոգ. Դպրանոցի, էջ 45) որպէս եւ „Ճոռաքաղի“ 1861 թ. օգոստ.– սեպտեմբ. համարում Գրիգոր Երիցու նոյպէս „Ճիշատակարան“ կոչուած „Ցունըս թուով հարիւր եւ քսան“, բայց աւելի ճիշտ 256 տող՝ աւելի կրօնական, քան պատմական ոտանաւորը՝ 1555 թ. գրուած, որ ասել է՝ թէ ոչ մի կերպ Իլաթեցու գործը չէ կարող լինել։ Մեր „Ճիշատակարանից“ մի քանի համառօտ հատուածներ կան քերած մինչև մէջ վերը յիշած Ղեւոնդ վ. Փիրղալէմեանի „Նօտարք Հայոց“ գրուածքում – էջ 3, 56 եւ 47՝ ընդամէնը 55 տող եւ Հ. Ղեւոնդ Ալիշանի „Այրարատում“ – էջ 525—525՝ ընդամէնը 77 տող։

5. Այդ տետրակը իւր ժամանակին ապահովութեամբ վերադարձրել եմ ես Դրիգորիս արքեպիսկոպոսին. իսկ իւր սեպհական ծնողագիր աշխատութիւնը՝ „Ստորագրութիւն կատսի շրջակայ գիւղօրէից եւ վանօրէից 1878“, – որ ինքը հանգուցեալ արքազանը յանձնել էր ինձ տպագրելու ըստ իմ հայեցողութեան, լոյս կը տեսնի շուտով Բարձրագոյն Հաստատուած Էմինի Ազգագրական Ժողովածուի մէջ։

«ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՂԷՏԻՑ
Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՐՈՒՄ,
ԶՈՐ ԱՍԱՑԵԱԼ Է
ԴՐԻԳՈՐԻ ՂԱՐԴԱՊԵՑՒ,
ՈՐ ՄԱԿԱՆՈՒՆ ԾԵՐԵՆՑ ԿՈՉԻ ԽԼԱԹԵՑԻ»։

—•••—

Ի յութ հարիւր հայոց թուականն
Ընդրաս և հինգ եօթն յաւելան (1386թ.),
Յունուարի մին պահք Յայտնութեան
Լոյս արևուն խաւարեցան։
Մեծ վարդապետն անուն Յոհան,
Որ և Կախիկ անուն Ծնընդեան,
Յետ վեց աւուրն խաւարման
Փոխի առ Տէրն իւր անժամանկան։
Ի սոյն աւուրս դառնութեան
Ծրագալուցի աւր Յայտնութեան
Մեծ պատուհաս ի Շահաստան
Բարբարոսաց ազգէն հասան։
Արքայն Հոնաց Թուխթամիշ խան
Զաւրս առաքեաց ի Պարսկաստան,
Որ եկն արար առ և Թախտան
Մինչև յերկիրն Հայաստան,
Հինգն Յունուարի Թավրէզ մըտան,
Ի քան և ինն ի Նախչըւան,
Անտի գնացին դէպի Մուղան,
Դարձան յաշխարհն իւրեանց բնական.
Զառ և զաւար ընդ ինքեանս տարան,
Մըտին յաշխարհըն Հոնական,
Անթիւ վնասչ գործեցան.
Ի գալ նոցա մինչև դարձան
Բազմաց արիւնք յերկիր հեղան,
Եւ շատք ի ձիւնն մրսեցան,
Բազումք յահէ նոցին փախեան

Եւ [ի] նըշմռնս սատակեցան.
Մարք ըզպայոց գութ մռայեան,
Ծնաւղք մանկանց գահիճ եղան.
Շատք ի սրոյ նոցին մեռան
Եւ այլ բազումք չարչարեցան
Ընտ ընտ այս գործըս չարին
Եւ ընդ կորուստ Հայաստանին
Եհաս միւս այլ հարուած կրկին
Եւ գառնագոյն քան զառաջին։
Մինչդեռ ի նոյն էաք սըգին,
Նկեալ եհաս մեզ ձայն գուժին,
Թէ շարժեցաւ տուն Ղսարազմին,
Առհասարակ ցեղ Թաթարին,
Ժառանգաւորք Սըմբըղնդին,
Աւտար որդիքն Աբրահամին—
Միահատոյն յաշխարհս մըտին,
Յաթոռս Աստըպատականին,
Առին աւար և գերեցին
Զազգս Պարսից և Հայ զարմին։
Տապալեցին, յատակեցին,
Անխնայաբար խոցոտեցին,
Զարըս սրոյ ճարակ տուին
Եւ ըզկանայսն գերեցին.
Զամանց գլուխսըն քերթէին,
Հանդերձ հերաւքն խըլէին,
Զայլոց ըզունչսն արգելուին
Եւ հեղձամահըս խեղդէին.
Որպէս զոչխարըս մորթէին,
Փոկս ի թիկանցն հանէին.
Զկնսըս հըրով խորովէին
Եւ ճենճերովքըն ցնծային.
Շատք զՔրիստոս ուրանային,
Եւ ըզՄահմետ դաւանէին,
Եւ ընդ գաւառ Այրարատին
Մըտին յաշխարհըն Աղուանին.
Զարքայանիստ քաղաքն առին
Որոմ Տըփխիսըն կոչէին.
Զարքայն Բագրատ ըզվրացին
Ի հաւատոյն ուրացուցին։
Անտի անդրէն դարձ արարին
Եւ ի Մուղան ձմեռնեցին։

---

7. Թովմա Մեծոփեցին (էջ 15) անորոշ է աւանդում խաւարման մասին. „Եւ ի սոյն աւուրս հանգեաւ ի Քրիստոս (Յոհան վ.) եւ խաւարումն եղեւ աշխարհիս հայոց“։

8. Զամչեան (Գ. 430) Յոհան Կախիկի կամ Որոտնեցու մահը դնում է 1388 թ., Ալիշան („Սիսական“, 220) 1385 կամ 1386 թ.։—„Անժամանակն“—այսպէս մեր օր. Փիրղալէմեանի օր. („Նօտարք“, էջ 36) ունի.... առ տէրն իւր անծկական։

15. Թախտան Պարսկ. քառ=աւարառութիւն։

17—18. Ժամանակագրական այս ճիշտ որոշումները չէ յիշում Թ. Մեծ. (էջ 14)։

23. Այս տողի մէջ թուում է թէ մի վանկ պակաս է. արդեօք սպասելու չէը—„Անթիւ վնաս էը որ գործեցան“։

28. Մեր օրինակում „Եւ նըշմռնս“, որ մենք ուղղեցինք „Եւ ի նըշմռնս“—համաձայն քերականութեան եւ վանկերի չափին։—33. „Ընտ ընտ“—այսպէս մեր օր. արդեօք՝ ընտ՛ես տ եւ կամ թերևս՝ Ու ընտ...։

Ապա յաւուրս գարնանային
Դարձ ի Սիւնիս Մեծն արարին,
Հզոր ոտային զվեհն առին
Մինչև ի Կարս արշաւեցին,
Զերկիրըս ամէն հալ արարին
Ի յանցանէն երթևեկին,
Զի չետ դարձան և կրկնեցին
Երրորդ անգամ չորրորդեցին,
Որոյ անուն գլխաւորին
Էր Լանկ Թամուր չարեաց զընդին։
Այս էր ի թիւս ութհարիւրին
Եւ երեսուն և վեց ամին (1387 թ.)
Զամուր տեղն յաւար առին
Եւ շատ ոճիրըս գործեցին.
Յորոց և մի էր և ԲԸՀնին,
Որ էր աթոռ երկուց պետին.
Զոր առին և քանդեցին
Զեպիսկոպոսն սպանեցին,
Այլ և զՀասանըն ծարեցին
Երեք որդւովքըն սպանեցին.
Զի ըմնոցին ամուրն առին
Եւ չորս հարիւր անզէն սպանին,
Եւ յԵրևան մեծ աւանին
Արս հինգհարիւր կոտորեցին։
Զուռնիմ ասել քան զոր կրեցին
Քրիստոնէից ազգ Հայ զարմին։
Դաղան ոսկերքս և սաւառնին.
Լոյս իմ քաղի, սիրտըս ճըմլին,
Ջանզի աչաւք իմ տեսանին
Ողորմագին հարուած սոցին։
Ի՞նչ անք բազումք ի տանց ելին
Եւ ի յընչից պարապեցին,
Ցերիւրացըն զըրկեցին
Եւ հետիոտըս տանէին։
Ծըղայք ի մէջ ճանապարհին
Ցոչ ի կարել գնալ՝ մեռանին,
Եւ կրաւնաւորք վանականին
Մ՚ոլորելով՝ յարկ ոչ գըտին.
Որք ի կանայս ոչ նայէին՝
Հարկիւ ի մէջ նոցա մտին։
Կարաւա հացի մերկ շրջէին,
Եւ բոկ ոտամբք հետևէին։
Պատիւ չը կայր պատուականին
Եւ ոչ նըշան ունևորին։
Զը կայր ոչ հաց հացաբաշխին
Եւ ոչ պինի գինաբերուին։
Զը կայր ոչ ձի ձիաւորին
Եւ ոչ տըրեխ հետևակին։
Աւտարք յաւտարըս շրջէին
Եւ կերակուրս մուրանային։
Տիկնայք որ ճոխ տունս ունէին
Եւ մետաքսաւք պերճանային,—
Հացակարաւտս երևէին,
Ծածկոյթ անձանցըն խնդրէին,
Իշխանք որ պետք անուանէին
Եւ արծաթով յըղփանային
Աղքատացեալըք լինէին
Եւ կերակրոյ կարաւտէին։
Եւ որք բազմաց հացըս տային՝
Մին պատառոյ ակն ունէին.
Թէպէտև յոյժ ամաչէին,
Այլ ի կարեացըն լըբէին.
Թէև մեռրալ պատկառէին,
Այլ ի սովոյն յանդգնէին։
Ծիւրեալք ի ցաւս ախտանային
Աչն անզգ և աստ մեռանէին
Մանկունքն ի մարսըն նայէին,
Մէթէ կենաց հընարս առնէին։
Մարքն ի գթոյն խորովէին,
Արագ ըզկեանս վճարէին։
Հարքն ի գորով տղայոց լային,
Աղիողորմն վայէին
Ի տեսանելն զոր սընուցին
Դառըն կարեաւքըն յաւարին.
Ի մեռանել մանկանց նոցին
Ինքեանք հոգիքն քակէին։
Ոխտոց չը կայր ոք որ լային,
Ի՛ ոչ գերեզմանս ճանաչէին.
Եւ այսպիսի ողորմագին
Այս տեսողացն երևէին։
Այս ոչ միայն քրիստոնէից,
Այլ և Տաճիկ ազգաց բնաւին.
Զի հաստատակ էր նենգութիւն
Պարսից ազգին, Հայ և Թուրքին։

---

73. Հաւէլ = անապատ։

86. Բընոյ եպիսկոպոսը՝ ըստ Մեծոփեցու (էջ 19), էր վանականը (Զամչ. գ. 422 ունի՝ ՏԷր վանակ)։

87. Հասան իշխանին չէ յիշում թ. Մեծոփեցին։

91. „Երեւան մեծ աւանն“ եւս չհայ Մեծոփեցու մօտ։

93. „Սաւառնին“ – այսպէս մի օր արդեօք՝ սաբսըռնին եւ կամ՝ սաբսաւիրն։

Եւ այս ամէն յայնկոյս գետին,
Որ յՆրսասայ անուն կոչի[ն]։
Իսկ յանցանելն յայսկոյս գետին,
Եւ յարշաւելն ըզհետ Թուրքին
Մինչև յԱմթայ Ջուրն հասին,
Բազում ոճիրըս գործեցին։
Անտի դարձան ի հայք ելին
Եւ ի վերայ Վանայ եկին։
Պատեցին, պաշարեցին
Զամուր դղեակն յաւար առին,
ԶՀայ և զՏաճիկսըն կապեցին
Եւ ի քարանցըն հոսեցին.
Այնքան հարին, սատակեցին,
Մինչ մըսադիզ անդ արարին։
Այլ և զամուրն Ներնջակին
Թողում ասել զանցս նորին,
Որ ի յաւուրց Աւազ Զաակին
Մինչև ի տաւն Սըրբոյ խաչին
Ծանր զաւրաք պաշարեցին.
Բայց վընասել ոչ կարացին։
Ապա յետոյ դարձ արարին
Յաշխարհն իւրեանց ուսոյ եկին։
Դարձեալ կրկին ի դուրս եկին
Ի քառատասն Ա՛երկու ամին
Ի Բաբելոն արշաւեցին
Ի՛ ի Միջագետս կոխեցին,
ԶՈւրհա քաղաքըն պանծալին
Եւ ըզԱմբի երևելին
ՁՄ՛երաին ամուր և ղՆըսկերին —
Զորս բնաջինջ գերեցուցին։
Եւ զայլ բազում քաղաքանին
Զորս քանդեցին, աւերեցին։
Անտի դարձան յաշխարհս վերին
Մինչև յԱնիկ արշաւեցին,
Զոր և Ջանիւ մեծաւ առին,
Եւ զՄ՛սրըն գերեցին։
Անտի դարձեալ յետ գնացին

167—172. Ներնջակի պաշարման ժամանակին վերաբերեալ մանրամասնութիւնները պակասում են Թ. Մեծոփեցու մօտ (էջ 47). իսկ Զամչեանի պատմածը (Գ. 424) հակառակ է Իսլաթեցու հաղորդածին։

176. Այսինքն Հայոց 842. Թուին = 1393 Թ. Մեծոփեցին (էջ 44) 844 = 1395 Թուականին է դնում Լանկ Թամուրի երկորդ արշաւանքը։

181 Նըսկերին = Մծբին։

184 Փիրդաւէմ. օր.— „Զորս քանդեցին եւ գնթեցին“։

190 Եւ զաւրս Թոպին Ներնջակին.
Տասնուհինգ ամ խըսարեցին
Զբերդն Ներնջակ՝ ապա առին։
Զթողում ասել զդործ անարին
Զվատթարհանդէս վրաց ալքային,
Որ եկն արար վատ յաղթութիւն
Զգաւրան փախոյց ըղՁաղաթին,
Որ պաշարեալ խըսարէին
Զամուր դղեակն Ներնջակին։
Անտի եհան զՍանի որդին
ԶՍուլթան Տախիրն Ներնջակին։
Տարաւ առ իւր և զաւրացոյց
Եւ ետ տանել Ահմատ Խանին։
Եւ ի գնալ չար զաւակին՝
Ապստամբեաց ընդդէմ խանին
Սուլթան Ահմատ թագաւորին,
Որ էր որդի Խանոյխսին.
Ոչ աջողեալ այն անբախտին
Սուլթան Տահիր որդւոյ խանին.
Զի հայրանենդ եղեալ չարին
Հետըն տարաւ ի Բաղդադին։
Իսկ ի լըսել Լանկ Թամուրին,
Զոր ինչ արար ալքայն վրացին,
Ի բարկութիւն շարժեալ կրկին
Հանդէս արար իւր հնձելին։
Այլ բազմութեամբ քան զառաջինն
Ի դուրս եկեալ Թամուր բէկին
Յամուրան եմուտ վրաց տանին.
Արար գերի զամենեսին։
Անտի գնաց մինչ ի Զրմիւռին
Քաղաք Լիկեայ Ծովեզերին,
Զչարսըն կոխեալ վիլգրուժին՝
Զհզաւր յաղթող մեծ սուլթանին

---

191. Ներնջակի պաշարողն էր Լանկ Թամուրի որդի Միրան Շահ Զաղաթան (Թ. Մեծ. էջ 71). վոխանակ „տասն ուհինգ ամ“, որ չէ յիշում Մեծոփեցին, Ալիշան („Սիսական“, 364) աւելի ուղիղ „ընդ երկար ամիս“ է դնում։ — Խըսարել = պաշարել։

200. Ներնջակի Թիր կամ Դահէր եւ կամ Տահիր (Տախիր եւ Տայիր) Սուլթանը Բաղդատու Թագաւոր Ահմէտ կամ Ահմատ խանի որդին էր, իսկ Ահմատ — Այշեխուր Սուլթանի կամ Շէխ Վէյիս խանի որդին։ (Զամչ. Գ. 537, Ալիշան, „Սիսական“, Անդ։)

201. „առ իւր“ այն է՝ ի Տփղիս։

206 Այսինքն՝ Խան Վէյիսին, որ վերոյիշեալ Շէխ Վէյիս խանն է։

221. Նորն է, որին Թ. Մեծոփեցին (էջ 65) „Խոնդքեար Իլտրում“ (կայծակ) է կոչում, այն է՝ Օսմանցոց Սուլթան Բայազիտը։

ՀՂաբայթաթարս այլ ընդ նմին
Գերի տարաւ զամենեսին։
Որոց ոչ էր թիւ համարին
Կոտորելոց զորս գերեցին
Ի տուն գամրաց Կապադովկին,
Որ Մէջկրկրեայ Հռոմք ասին։
Ո՜հ զայն ղազայն զոր արարին
Արանց, կանանց և ընդ մանկտին.
Զարան թողեալ մինչ կենդանին
Հողով, ջրովքն հեղձուցին։
Իսկ ըզմատաղ տղայ մանկտին
Զայն կալոտիս ձիոցն արկին։
Իսկ յիջանել Միր Թամուրին
Ի շահաստան Դամասկոսին՝
Ծով ու ցամաք սասանեցին
Վասըն լըրոյ չար համբաւին.
Զորս սըրոյ ճարակ տային,
Եւ զորս բոցով հրոյ այրէին։
Եւ ըզզլուխան զոր կըտրէին,
Զայնս մինարայս յաւրինէին։
Եւ յայսպիսի չար համբաւին
Աշխարհ ամէն սասանեցին։
Զայս արարեալ Միր Թամուրին
Դարձաւ յաթոռ Սըմըրղընդին.
Եւ անդ ետաս աւր վախճանին
Սատակեցաւ յիւր աթոռին։
Իսկ Միրան Շայ որդի նորին
Եկեալ ի թախթն Թաւրիզին,
Որոյ ընդդէմ կացեալ նորին
Ղարա Ուսուֆ ըսխաղուտին,
Էհալ զզաւրան Զաղաթին
Եւ առ զգլուխ Միրան Շային.
Թագաւորեաց ի նոյն թախթին
Թաւրէժ քաղաք շահաստանին։
Արար բազում խաղաղութիւն
Եւ յաջողումն մարդկային.
Էրէմնութիւն և էմնութիւն,
Ամենևին անդողութիւն։
Իսկ յաճախել մեղայ ախտին
Մարդկան ազգիս քրիստոնէին,
Եղև գնալ խան Ուսուֆին
ՑԱխըլճըխ քաղաք վրացին,
Արար ղազայ և գերութիւն
Անթիւ վնաս և չարութիւն։
Այս էր ի թիւ ութ հարիւրին,
Այլ և վաթսուն և հինգ ամին (1416 թ.)։
Իսկ զգերիսըն զոր առին
Յաւտար երկիր վըտարեցին.
Բաղդատ ա՛ի Մըսըր հասուցին
Ի՛ ի Յօրտասան Պարսկաց տանին։
Ոչ մին հազար կամ հինգ վեցին,
Այլ քան ըզբիւրըն կր աւելին
Նոյն սպանելոյն էր բազմութիւն
Եւ անհամար որ ոչ թըւին։
Իսկ ի յամի ութ հարիւրին
Ի՛ եւթանասուն թըւականին (1421)
Ղարայ Ուսուֆ ակըրն թախթին
Սատակեցաւ ըստ արժանին,
Յաղք, խայտառակ որպէս տեսին,
Անկեալ յերկիր մարմին պղծին,
Զի շփոթեցաւ զաւրքն չարին
Եւ յիւրեցաց փախուստ առին։
Ուռեալ նեխաւ գէշ գարշելին
Ագռաւք հանին զաչեր նորին։
Իսկ յետ երից աւուրց եկին,
Բարձին զդէշն և թաղեցին։
Իսկ զաւրք չարին Միր Ուսուֆին.
Ընդ որ գնացին՝ աւերեցին։
Չար, անզգամ մարդիկ էին,
Եւ անասախ ազգ Թուրքմանին.
Ընդ վեռանել Ուսուֆ բէկին
Զաւրք Զաղաթին եկին հասին.
Որոց զըլուխ և առաջին
Էր Շախ Ռուհ անուն նորին։
Էր նա որդի Միր Թամուրին
Կըրսեր եղբայր Միրան Շային.
Զաւրքն բազում քան զԹամուրին,

---

242. *Մըներ այս՝ որ է Մինարայս=աշտարակ։*

252. *Ղարա Ուսուֆ որ եւ Միր Ուսուֆ եւ Ուսուֆ բէկ՝ Սամսոյ իշխեցող Մարաց ամիրան էր, որին Թ. Մանուելն լոկ Ցուսուփ է անուանում։ Բախադուռ կամ Բահադուր Թաթար. քաջ է եւ նշանակում է քաջ կամ ղեւցազն։*

254. *Ալիշանի օր. («Այրարատ», 523) ունի՝ „Քառ զգլուխն...*

256. *Ալիշանի օր. ունի այս տողը նախընթացից առաջ։*

259. *„Էրէմնութիւն“ այսպէս մեր օր.*

286. *Ալիշանի օր. „զաչիր նորին“, որ աղաւաղ ընթերցուած է։*

292. *Անաստախ Թաթար. բառ=անիրաւ. Ալիշանի օր. „անառակ ազգ“, որ անյաջող սրբագրութիւն է։*

Այլ աւելի քան զնոսին։
Հինգ բիւր՝ որ է յիսուն հազար,
Էր սորա զաւրքն ընդ նոյն համար.
Զի երեսուն էր Թամուբին
Ի՝ այլ աւելի քան զղնոսին։
Բայց ոչ ունէր սա չարութիւն,
Այլ բարեսէր հանդարտութիւն։
Յորմէ սարսփան ազգ Թուրքմանին
Վասն իւր չարեացըն զոր ունին.
Զի անողորմ էր ե՛անիրաւ,
Անմիրաւթ ե՛ անաշառասէր,
Անգատաստան և անհաւատ,
Պիղծ, չարագործ իսկ և սրմարդ,
Անպատկառ և անամաւթ,
Մեղայ ասան, չարեայ անաւթ։
Փառք Աստուծոյ զոր ինչ արար
Ընդ Թուրքմանին չարեացն յարմար.
Քանզի խըրան նախ և վախճան
Եւ յետ գարձան կոտորեցան.
Ըստ արժանեացն ի ձեռս անկան
Շահ-ըմհուխին և մանանեցան։
Շատք ի սըրոյ նոցա մեռան
Ի՝ այլքըն փախեան և գերեցան,
Կողոպտեցան և գերեցան,
Զիոյ կոխան սատակեցան,
Յաղք խայտառակ թալանեցան,
Ի սար ե՛ ի ձոր վախըստական։
Ընդ որ փախեան՝ հալածեցան
Ի՝ ինքեանք միմեանց գահիճ գարձան,
Անթիւ ըռգակ էր զոր տարան,
Աղէկ ձիան և շատ ուղտան։
Կին և տըղայքն ի թիւ չանկան
Զոր գերեցան և կոխեցան։
Բայց ողորմած և խըղճական
Նա սիրտ ունէր Շահըմհուխն այն.
Ասախ արար խոլմ և հրաման
Ոչ կորուսանել զամենեսեան,
Այլ Թոյլ եառաւ որ ցըրուեցան,
Ի՝ աւտար երկիր վըտարեցան։

Եւ Շահըմհուխ այն մեծ սուլթան
Գընաց գարձաւ ի Նորատան,
Գընաց յաթոռն իւր բընական,
Ի Սամըրղանդ հայրենական,
Զթախթըն Թողեալ ըզ շահաստան՝
Անաէր Թաւրէզ քաղաքըն զայն։
Ապա որդիք Ուսուֆ Բէկին
Եկեալ Թախթին այն տիրեցին.
Բայց ինքեանք ոչ քարիշեցին,
Այլ միմեանց գիւաբն փախուցին։
Իսկ անիծեալն ամենեւին
Կրթսեր որդի Միր Ուսուֆին՝
ՀՍպանդիարն անաւթ չարին,
Լիրբ, անզգամ, յիմար հոգին,
Էր ՀՃաստակար և աւերող
Շատ բարեաց շէն գաւառին —
ՀԱրձէշ և գԱրծկէ աւերից,
ՀՃաւեն և գԱնիկըն քակից,
ՀԿարնոյ քաղաքըն գԱռգըռում
Քան զամենայն խիստ աւերից։
Իսկ Հաքանդար աւագ որդին
Ղարայ Ուսուֆ զահխաղուտին —
Նա ի Թաւրէզ տիրեաց Թախթին
Ի՝ ասախ արար շատ բարութիւն։
Բայց մեզ աւար ած և խաւար
Եւ չարութիւն գառն և գԺժար,
Ցնծել արար շատ բազմութիւն
Ի՝ ևն ի վերայ Ղլաթայ բերդին։
Բերդին Ճնասել ոչ կարացին,
Այլ կ՚քաղաքըն այրեցին.
Ի յԱղուանք արշաւեցին
Եւ չար ղազայ անդ արարին.
Ըզբերդն առին, կոտորեցին,
Շատ քրիստոնեայք անգէն սպանին,
Քան զերկերիւրն այլ աւելի,
Զոր անդ ի սուրըն քարշեցին
Թող զորս ի ծովըն խեղդեցան,
Եւ քարավէժ եղեալ կորեան։
Ո՜հ, զեղեցիկ կերպ ու սուրաթ
Այն մանկտեկացն որ կորուսան.
Լաւ հարկեւոր տանուտիրայք,

---

307. „Սարսպան“ — այսպէս մեր օր. Թերևս՝ սարսան։

310. Երկու արար. բառեր հայ աճ բացատականով. դրացնից առաջինը նշանակում է անագորոյն, անգութ, եւ երկրորդը՝ անսիրտ, անխիղճ։

317. „Խըրան“ — այսպէս մեր օր. արդեօք՝ խրտան։

329. „Ըռգակ“ = աւար։

333. „Ասախ“ կամ իասախ Թաթար. բառ — օրէնք, իրաւունք։ — „խուլմ“ պատուէր։

331. Թ. Մեծոփեցին (էջ 79...)՝ փոխանակ „Սպանդիարի“, միշտ Ա ս պ ա հ ա ն է կոչում Ուսուֆի կրտսեր որդուն։

365. „Ցնծել“ նոյն է՝ տնծել՝ տնծեալ, տնծեալ զօրք։ Ա լ ի շ. օր „Տնծել“։

369. „Աղուանք“ բերդը պէտք է եղած լինի Ղլաթի մօտերքը՝ Խերես սորա եւ ծղոակ գիւղի միջեւ. իսկ Ադիովիտ գաւառի Աղայ կամ Աղու գիւղը, որ յիշում է Թ. Մեծոփեցին (էջ 92), կարծեմ որ տարբեր է սորանից։

Համեստ ե՝ աղօր տանտիկընայք,
Բարձրահասակ ե՝ ազկ տեսակ
Դուն ու կերպով ճոխ կըսըրճակ։
Այս ամենայն ի սուբ անցան,
Դերեզմանի չարժանացան,
Կանայք տղայաւքըն գերեցան
Քան զհինգ հարիւրն այլ աւելան.
Զի ի միոյ գեղէ չէին,
Այլ ի բազում տեղայ էին.
Ի Հիլանայ ե՝ ի Բաղիշոյ,
Ոլք հասկաքաղ եկեալ էին.
Ծըղտաք ե՝ Աղաղ ամենևին,
Շատք Յաղիթայ անպէն էին,
Ոլք ի սուրն քարշեցան,
Կանայք որդւովքն գերեցան։
Այս ամենայնի պատճառ է այն
Շամըղըղին ամիրայի,
Զար սատանին արբանեկի
Ու ի նեռին կարապետէ,
Որ նա արար հպարտութիւն,
Զհնազանդեցաւ Իսքանդարին։
Շատք որ սպան ե՝ անթաղ մնացին,
Ոչ հաց հոգւոյ, ոչ ղրամ թողին.
Ու ոլք գերի վարեալ գնացին,
Յաւտար երկիր վըտարեցին։
Ի յայլազգին խառնակեցան,
Ըզչարութիւն նոցա ուսան։
Աւտարացան և յոռւացան,
Ըզհայրենիսըն մոռացան,
Պըղծեցան և գարշեցան,
Աղտեղացան և զապրացան,
Ոչ ի կամաց, այլ յակամայ
Հանդիպեցան այս գարք նոցա։
Մինէ Աստուածն քաղցրանայ
Ու ազատէ անտի զնոսա։
Ոլք հանդիպիք այս երգակիս,
Զիս յիշեցէք ըզկնկեալս —
Զմրափած Դրիգոր Իլաթացիս,
Որ սպատաւոր կոչիմ բանիս,
Ու սխալանաց շարադրիս —
Անմեղադիր լերուք անձինս,
Որ գրէի ըզբան ոդրիս
Ու կըսկըծայր սիրտս ի փորիս.
Ոչ հանդուրժեալ մըտաց խըղճիս,
Զոր ղըրեցի ես ի քարտիս։
Քանզի ի մէջ էաք չարիս,
Որ եկն եհաս մեր աշխարհիս,
Նա առաւել մերում ազգիս,
Այս տառապեալ հայոց տհմիս՝
Անուամբ միայն քրիստոնէիս
Գործոց գաւարկ ամբարըշտիս,
Սուրբ աբրինաց հակառակիս,
Բարիատեաց չարասիրիս,
Եմք անագաւթք հեղգ ի բարիս
Անապաշաւ խըղճամըտիս,
Ծոյլ և պղերգ յամեն բարիս,
Ի՝ անկարեկից յայլոց կարիս,
Ցիշողնատու ոչինչ բանիս,
Ի՝ երդըմնագանց ևս ի անօտիս,
Բախիլ յաչաղ յայլոց բարիս
Ու նախանձոտ առ ընկերիս,
Քինախընդիր չարաճըճիս
Ու բամբասող միշտ ըզբարիս։
Վասն այսորիկ տաժանելիս
Ու տառապեալ եմք յաշխարհիս,
Մեր խաւարած եկեղեցիս,
Ագգս ցրուած յամեն տեղիս։
Բայց զոհութիւն մարդասիրիս,
Որ ապրեցաք ի յայս վտիս,
Զմեզ ոչ թողեալ ի նեղութիւն,
Այլ փոյթ եհան յանդորրութիւն։
Ծուք աւրհնութիւն Հաւրն անեղին
Ու միածնի Բանի Նորին,
Այլ և Հոգւոյն իւր էակցին
Փառք և պատիւ ի մէնջ ատյին,
Երրորդութեանն միակին
Հայր և Որդի և Սուրբ Հոգին,
Որ ետ ինձ կար արկար անձին
Ու գիչն ու գնուն հասոյց ի միտ,
Բամեալ զգանձերս որ ի միջին,
Եչն առաջին և նուն յետին։

---

389. „Հիզան“ որ եւ Խիզան։

391. *Այս գիւղերը մինչեւ այժմ կեցած են վանայ ծովի ափին՝ Դատվանի եւ Խլաթի միջեւ։ Համմ. Ն. Սարգիսեանի Տեղագր. ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 273 եւ Միքայէլ Նալեանի Նկարագր. Ուղեւոր. Ա. էջ 85—86։*

392. „Յաղիթայ“ — *այսպէս իմ օրինակում. բայց Սղէթ կամ Սղիթ գիւղ ես չը կարողացայ գտնել Խլաթի շրջակայքում։ Արդեօք Մ՚ի եւ Ա՚ի շփոթութիւն չէ՞ այստեղ եւ Յաղիթայ (կամ Յաղիտայ) կարդալու չէ՞, որպիսի (Աղիտ) գիւղ արդարեւ գոյութիւն ունի Խլաթի մօտերքը եւ յատկապէս ծովակի եւ Աղաղի մօտ։ Համմ. Միքայէլ Նալեան, Անդ։ „Յաղիթայ“ ունի եւ Ալիշ. օր.։ Վերոբերեալ երեք գիւղերից Թ. Մեծուխեցին միայն ծովակն է յիշում։*

495. *Ալիշանի օր. „Այս ամենայն ի պատճառէ*
Այն Շամըզտին ամիրայէ“։

396. „Շամըղըղին“ — *այսպէս իմ օրինակում. կարդալու չէ՞ Շամըզըտին, որ Բաղիշու Շամշատին ամիրան էր։ Թ. Մեծ. էջ 85։*

401. *Ալիշանի օր. „Շատ որ ըսպան“...։*

402. *Ալիշանի օր. .... ոչ ղրամ հոդին։*

459. *քախիլ—նախանձոտ, նախանձ։* Ծ. Խ.

458—460. *Թէեւ այստեղ մի այլ փոխաբերական իմաստ չը կայ՝ օր. հեղինակի անուան վերաբերմամբ, թերեւս „Ցիշատակարանի“ տողերի քանակութիւնն է ակնարկում Խլաթեցին Ե (5) եւ Ն (400) թուանիշ տառերով։ Նման թուարկութիւն առաջ է բերում մեր հեղինակը իւր մի այլ գրուածքում՝ Սաղմոսի կանոնագուխների, գլուխների եւ տունների թիւը որոշելու առթիւ.*

«Զիս ի յէջէս հիմնարկեցին,
«Տարեալ ի հիմն աւարտեցին,
«Ալֆի խօրանաւ զարդարեցին,
«Վաթսուն և չորս գաւն բացին ....»,
(*Տես Հ. Տաշեանի „Ցուցակը“, էջ 644.*)։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԽՆԱՄԱԾ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ.

№	Անուն և ազգանուն	Հիւանդանոց մտած օրը	Հիւանդանոցից դուրս եկած օրը	Հիւանդութիւնը
1	Գարեգին Ճզմաչեան	24 սեպ. 96 Թ.	20 հոկտեմբ.	Typhus abdominalis
2	Գէորգ Ջանոյեան	24 սեպ.	20 հոկտեմբ.	T. abd. (սիփ).
3	Ոսկուհի Էյնաթեան	25 սեպ.	14 հոկտ.	T. abd.
4	Յակոբ Գէորգեան	26 սեպ.	15 հոկտ.	T. abd.
5	Մաքրուհի Ծերօրգեան	26 սեպ.	25 հոկտ.	T. abd.
6	Մինաս Յակոբեան	27 սեպ.	29 սեպ. (վախճան.)	T. abd.
7	Յակոբ Դրիդորեան	30 սեպ.	2 հոկտ. (վախճան)	T. abd.
8	Մանաս Յակոբեան	30 սեպ.	26 հոկտ.	T. abd.
9	Վիրգինէ Յակոբեան	30 սեպ.	28 հոկտ.	T. abd.
10	Պօղոս Դրիդորեան	2 հոկտ.	29 հոկտ.	T. abd.
11	Յովհաննէս Նաթանեան	3 հոկտ.	29 հոկտ.	T. abd.
12	Վարդան Աւդալեան	3 հոկտ.	30 հոկտ.	T. abd.
13	Յակոբ Պետրոսեան	5 հոկտ.	30 հոկտ.	T. abd.
14	Կիրակոս Տէր Ղուկասեան	8 հոկտ.	1 նոյեմբ.	T. abd.
15	Գրիգոր Ծերօրգեան	9 հոկտ.	2 նոյեմբ.	T. abd.
16	Պետրոս Յակոբեան	11 հոկտ.	2 նոյեմբ.	T. abd.
17	Ղևոնդ Փանոսեան	15 հոկտ.	2 նոյեմբ.	T. abd.
18	Տէր Դաւիթ Կարապետեան	17 հոկտ.	2 նոյեմբ.	T. abd.
19	Մարգար Դրիդորեան	14 նոյեմբ.	22 նոյեմ. (վախճան)	Phtisis (թոքախտ),
20	Սարգիս Վարդանեան	14 նոյեմբ.	28 նոյեմբ.	Congelatio (սառած).
21	Պետրոս Յովհաննիսեան	14 նոյեմբ.	29 նոյեմ.	T. abd.
22	Սահակ Վարդանեան	15 նոյեմբ.	18 նոյեմ. (վախճան)	T. abd.
23	Մանուկ Մարտիրոսեան	15 նոյեմբ.	5 դեկտ.	T. abd.
24	Գրիգոր Մկրտչեան	16 նոյեմբ.	4 դեկտ.	Dysenteria.
25	Ղուկիկ Վարդանեան	20 նոյեմբ.	12 դեկտ.	T. abd.
26	Գալուստ Մկրտչեան	22 նոյեմբ.	31 յունուարի	T. abd.
27	Պետրոս Մանուկեան	22 նոյեմբ.	27 նոյեմ. (վախճան).	Dysenteria.
28	Կարապետ Ազիզեան	22 նոյեմբ.	28 դեկտ.	T. abd.
29	Պետրոս Օհանէսեան	26 նոյեմբ.	28 դեկտ.	T. abd.
30	Սեդրակ մահտ. Մանուկեան	5 դեկտ.	28 դեկտ.	T. abd.
31	Արշակ Վարդանեան	9 դեկտ.	3 յունուարի 97 Թ.	T. abd.
32	Սահակ Սարգսեան	23 դեկտ.	28 յունուարի.	T. abd.
33	Մկրտիչ Մինասեան	24 դեկտ.	24 փետր.	T. abd.
34	Մխիթար Սէդեան	27 դեկտ.	28 յունուարի.	T. abd.
35	Մխակ Մարտիրոսեան	3 յուն. 97 Թ.	21 յուն.	Dysenteria.
36	Դանիէլ Նիկողոսեան	4 յուն.	8 մարտի.	T. abd,
37	Մանասէ Յակոբեան	19 յուն.	15 փետր.	T. abd.
38	Գրիգոր Սարգսեան	27 յուն.	9 մարտի.	T. abd.
39	Կիրակոս Տէր Ղուկասեան	27 յուն.	19 մարտի.	T. abd.
40	Մանուկ Մարտիրոսեան	28 յուն.	18 ապրիլի.	Myelitis cerb.-spinal. traum.
41	Գալուստ Ղուկասեան	13 փետր.	14 ապր.	T. abd.
42	Սարգիս Յովհաննիսեան	18 փետր.	15 մարտի.	T. abd.
43	Գրիգոր Մարգարեան	28 փետր.	15 ապրիլի.	T. abd.
44	Մելքոն Սարգսեան	1 մարտի.	18 ապր.	T. abd.
45	Օհանէս Ղուկիկեան	8 մարտի.	1 ապր.	T. abd.
46	Մկրտիչ Յարութիւնեան	20 մարտի.	18 ապր.	Abscessus region. recti.
47	Կարապետ Նազարեան	4 ապրիլի.	18 ապր.	Vitium cordis.

Հիւանդնալը չլինելու պատճառով ապրիլի 18-ին հիւանդանոցը փակուեցաւ:

ԲԺ. ՏԷՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ.

ՏՊԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վաճառուում են

ՀԵՏԵԻԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ·

		Ռ.	Կ.
1·	Վկայաբանութիւն Գործիս Ա ՇՄՈՆԻ (Ագաթանգեղոսի ապրիւրներից), —գրեց Գ. ՏԷՐ—ՄԿՐՏՉԵԱՆ	—	50
2·	ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ (Գ· գրքոյկ) —գրեց ԷՄՄԱՆՈՒԷԼ ՔԱՀ· ՆԱՋԱՐԵԱՆՑ	—	20
3·	ՍԲԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ ԱՄԲՈՂՈՋ Վ· ԳԱԼՑԱՑԵԱՆՑԻ . . .	1	—
4·	ՆՈՅՆ, ՆՈՐ ՈՒԽՏԻ (Գոահէրպարդ)	—	50
5·	ԿՐՕՆԱԿԱՆ–ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ, թարգմանեց Գեր. Նեղքնից ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ Ա—Զ· գիրք· Իւրաքանչիւր գիրքը ·	—	20

Շուտով լոյս կը տեսանին

1· ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ Լ—Ժ· գիրքը
2· ՏԷՐ-ՊԵՏՐՈՍ Ա· ԳԵՏԱԴԱՐՁ· գրեց Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

Մամուլի տակ են

1· Հայաստանեայց եկեղեցւոյ Ս· կարգը, Արչակ Տէր Միքելեանի·
2· Պարզ քարոզներ, Դ· գրքոյկ·
3· Դաստիարակութիւն եւ ժառանգականութիւն Մ· Գիւլօ-ի, Թարգմանեց Ռուսերէնից Ս. Մ.

Վաճառքի գնողներին 20% զեղչ·

ՏՊԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ
Տպագրութեան համար
ՄԱՏՋԵԼԻ ԳՆԵՐՈՎ
Ընդունուում են
Դասական, Գրական, Գիպական,
ԳՐՔԵՐ·

ԳՐԱՄԵՆԵՆԱԿՆԵՐի ՎԵՐԱԲԵՐԵԼ
Տօմարներ, Հաշո-եզրեր, Հաշո-երկրներ,
Ծառա-յատերեր:
Վերնատպո-ւթիւն նամակի և տրարի·
ԻՍԿ
ԿԱԶՄԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ
Ընդունուում են կազմելու
Տօմարներ, Տետրակներ, Գրէթեր,
ՊԱՐԶ ԵՒ ՈՍԿԵԶՕՐ

Պայմանների համար պէտք է դիմել Տպարանական Ժողովին:

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՈՒՉԻՆ
ՉԱՆԳԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ԻՆԺԵՆԵՐՆԵՐ
ԵԱՐԱԼԵԱՆԻ ԵՒ ԱԼԻԽԱՆԵԱՆԻ
ՏԳԻՒՍԻՈՒՄ
ՀԱՍԼՈՒՄԻ Է ՆՈՐԵՐԸ ԵՒ ՎԵՐԱԶՈՒԼՈՒՄ Է ՀՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ
(*մինչև* 1000 *փութ կշռով*)

Գործարանում ձուլուած զանգակները յայտնի են իւրեանց գեղարուեստական ձևերով և հիանալի ձայնով. զանգակի վերայ նկարուում են սուրբերի պատկերներ համաձայն պատուէր տուողների ընտրութեան: Մակագրութիւններ ամեն լեզուներով: Ընդունում են պատուէրները ուղղել Въ контору чугунно—литейнаго, машинно—строительнаго и колокольнаго заводовъ инженеровъ Яралова и Алиханова, Тифлисъ, Александровская ул., собственный домъ, вблизи вокзала.